

243
5 - 98



II - 35.


12004

P112
53

2

243

5 - 98



ԵՓՐԵՄ
ԽՈՒՐԻ

Դ - 35.

112
53

1848

ԱՅԻՖԸ


ՀՂԱՊԱՐ

4740-ահ

1689-ԿԿ

ԳՐԻՎ ԼՈՅԱԼԻՑ

ԱԽԱՋԵԱԼ ՄՐԲՈՅՆ ԵՓՐԵՄ
ԽՈՒՐԻՆ ԱՍԱՐԻՈՅ



ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՍՈՒՐԲ ԵՐԱՌՈՍԱԴԿԵՄ



Ի ՑՊԱՐԱՆ

ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԵՔԵԱՆ
ԱՌԱՔԵԼՈՅ

1848

ՅԱԿՈՎ ԱՐԵՔ
ՊԱԺԴԱՎ ՄԱՐԱՍ ՄԱՀԱՎԱՐ
ԸՆԴԻԿԱՏ ՄԱՐԱՏ

• ԱՐԵՔ ԱՐԵՔ •

ԼՈՒՐԴԱՐԱՑ

ԱՐԵՔ ԱՐԵՔ ԱՐԵՔ ԱՐԵՔ



ՅԱԿՈՎ ԱՐԵՔ ԱՐԵՔ
33432-65

8481

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Առ ՚ի յայտ բերել զզօրութիւն
աղօթից զառ ՚ի սրբոյն Եփրեմէ աստ-
ցեալ . և զայլ կարեւորաց այսմ փոքրիկ
մատենիսազգումն կանխաբանել չէ հարկ-
դի բանք ազդողականք՝ որ ՚ի սմա . և
խնդրուածք առ ասառուած հաճոյտկանք
զօդակարութեն և զպիսանարութենէ
սորին ինքնին տան ծանօթութիւն ըն-
թերցողաց ակներեւ :

Իսկ մեզ մնայ միայն ծանուցանել
զայրոց մասանց՝ զորս յետոյ յաւելաք ՚ի
վերայ այն է եօթնեկի թուով սաղմուք,
և շարականք աղաջնարութեան , և թա-
դասորք յաւիտեան , և աղօթք զշշման
զօրացուցիչք՝ ըստ եօթնեակ աւուրց
շաբաթուն :



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայության հմամատ առաջ կ' ա լի
առաջ վեճույթ պարունակու առաջ ա լի
վեճույթ նաև պարունակու առաջ ա լի
վեճույթ ա լի պարունակու առաջ ա լի
ա լի ա լի ա լի ա լի ա լի ա լի ա լի

—————▶

Յօւսով խնդա ցէք •

նեղութեան համշերեցէք •

աղօժից ստեպ կա ցէք •

(Հուն. 9. Ճ. Ճ. 12) •

—————▶



• 1300 • 1300 • 1300 • 1300 • 1300 •



Ի ՆԵՂՈՒԹԵան՝ առ տէր գոյեմ.
և առ աստղաած՝ աղաղա կեմ,

ԱՆՈԹԻ ՕՐԱԿԱՅԻ
ՈՐԲՈՅ ՀՈՐՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒԹԻՆ
ԱՄՈՒՅՈՅ ԱՍԱՅԵԱԼ

ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒՇՈՅ

Ե՞՛Ս տէր զտառապօնս իմ, և
զցաւս հոգւոյ իմոյ ըաղմամեղիս .
Դարձ ներեւա և 'ի քեզ առաջ
նորդեւա : Որ ասացեր՝ դարձարուք
առ իս, և ես դառնամ առ ձեզ :
ինձ լքելոյս ողոքմետ . ինձ եղ

X 2 X

կելոյս օգնեա . ինձ խաւարելոյս
Ճառագայթեա . ինձ մըլորելոյս ա-
ռաջնորդեա , որ լի եմ մեղօք և
անթիւ յանցանօք , և 'ի յործանս
անօրէնութե տարաբերեալ ծփիմ :

Որպէս պետրոսին ձեռնարկեա ,
գոչեմ որպէս մաքսաւորն ար-
դարանալ :

Ընորհեա որպէս զաւագակին .
ըաց ինձ զգուռն կենաց Ճանա-
պարհին և մեծ արքունական ա-
ռագաստին :

Ո՞լ խորք մեծութեան և իմաս-
տութեան՝ կալ զըմբռնեալս՝ որ 'ի
խորս ծովուն անկեալ եմ մեղօք .
զերծն և զօրացն զիս առնել ըզ-
կամն քո , սդալ և լալ 'ի տուե և
'ի գիշերի զամենայն անօրէնութիւն
և զհեզգութիւնս իմ :

Աղքիւրդ կենդանութեան՝ արքն

Չարաւ հոգիս իմ յառատաւ
բուղիս վտակէ քումմի՛ , որ պաս
քեալ տոչորիմ 'ի ըազում անօրէ
նութեանց իմոց . իսթեա 'ի քարա
ցեալ սիրտ իմ , և հան ինձ արա
տասուս ապաշխարութեան :

Գանձդ ամենայն բարութեանց՝
շնորհեա ինձ դանկի միոյ չափ 'ի
ըազում քո առատ բարեացդ , որ
չարացար եմ աղքատացեալ և
մերկացեալ . զգեցի և կերակրեա
զիս արտասուօք ապաշխարութեան :

Լոյս Ճմարիտ քրիստոս՝ որ լու-
սաւորես զամենայն մարդ , լուսաւոր
եա զխաւարեալս մեզօք , բաց զաւս
սըտի իմոյ , և հաստատեա յերկիւղ
և 'ի սէր պատուիրանաց քոց :

Մի դատեր , և մի դատապար-
տեր զիս տէր ըստ անբաւ զազիր
գործոց իմոց . և մի կացուսցես զիս

Ընդ այլսն՝ որք զայրացուցին զքեղ
այլ ընդ մատաւորեալսն մատա-
ւորեալ, և ընդ պսակելոցն պսակեալ
և ընդ բերկրելոցն ու բախացն :

Ծատէ ինձ տէր, բայց յու-
սամ յողորմութիւնսդ քո. զի և
շունք կերակրին 'ի վշրանաց անկե-
լոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց.
շուն կոչեալ զիս տէր՝ զի գայցեմ
զկնի քո :

Հովիւ բարի ինդըեալ զիս ըզ-
մոլորեալս. նաւասկետ բարի յիսուծ
վըկեա զիս 'ի բազմութենէ ալեաց
ծովու մեզաց իմոց, և տուր ինձ
նաւահանգիստ խաղաղութեան,

Տուր ինձ տէր սուգ, և ար-
տասուօք կարողացո դմարմինս իմ.
կակզացն զքարացեալ սիրտ իմ, և
ժողովեալ զմիտս իմ 'ի քեղ :
Զնջեալ զքարզիւթիւն յանցանաց իւ-

մոց . և շնորհեաւ ինձ զօդուտն իմ .
ընկալ և մի անտես առներ զհա
ռացանս . սրտի իմոյ ։

Տուր ինձ իմաստութի . և տնկեան
տեր զահ և զերկիւղ քո 'ի սրտի
իմում : Լուսաւորեաւ զիսորհուրդս
իմ . կարողացի զմարմինս իմ՝ ժուժ
կալութեամբ կալ 'ի պատուիրանի
քում՝ յամենայն ժամ :

Բաց տէր զացս սրտի իմոյ , և
լուսաւորեաւ հոգովրդ սրբով :
Պարզեւեաւ ինձ առողջ խորհուրդս
և առաքի վարս՝ ողբալ հանա
պաղ , ահիւ և դողութեամբ կալ
առաջի յամենայն ժամ անզբաղ .
Ով բարեար և մարդասէր տէր՝
առանց չարչալանաց և ժուժկալու
թեանց զիսրդ ազատեցայց 'ի բազ
մութենէ մեղաց իմոց . զի մարմնով
տկար եմ , և հոգւով խաւար . ու

Հ 6 Հ

Դորմեա տէր՝ և որպէս կամիս օդ-
նեա ինձ :

Անոխակալ տէր՝ մի վասն բա-
զում չարեաց իմոց անտես առներ
զիս . այլ դարձիր 'ի լիս , և դարձն
զամենայն ցանկութիւն իմ 'ի քեզ .
և զքեզ տուր միայն սիրել 'ի բոլոր
սրտե իմմէ : Ի նուազ և յանպաւ-
ճոյՃ կերակրոց ամբողջ պահեա
զմարմինս իմ :

Պատկերացն տէր՝ զանհլաժեշտ
գալուստ քո առաջի աչաց իմոց .
և դողացն զմարմինս իմ սգալ և
լալ անդադար յերկիւղե ահեղ
դատաստանաց քոց . և մի փակեր
զգութ արարչական սիրոյ 'ի ստեղծ-
ուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեսլ :

Աչեցն տէր զբարիս դորձել
ինձ յամենայն ժամ . և խախանեա
զամենայն չարիս 'ի չար մտաց իմոց .

'ի պիղք և յանուղղայ գնացից՝ և
 'ի չար սովորութենէ դադարեցն
 զիս. և հաստատեա յերկիւղ և 'ի
 սէր պատուիրանաց քոց :

Արեգակնալ արդարութե՛ փըրա
 կից իմ և ազատիցդ յիսուս քրիս-
 տոս՝ 'ի լոյս քո ապաւինիմ : լու-
 սաւորեա և ջերմացն զսիրտս իմ :
 Հրակիղեա զչար խորհուրդս իմ, և
 հալեա զսառնամանիս մեղաց իմոց :
 Ծնորհեան տէր գարուն հոգւոյ
 իմոյ՝ ժաղկիլ և պտղաբերել զար-
 դարութեան պտուղն :

Ազատիցդ քրիստոս՝ ազատեա
 զիս 'ի դառնաշունչ օդոց մեղաց
 ձմերայնոց. զխաւարեալ և զսառու-
 ցեալ հոգիս իմ պայծառացն և
 ջերմացն . և ցողեա զցողն ծնորհի
 ջերմութեան քո 'ի յանդաստանս
 մտաց սրտի իմում :

Ծնէեա̄ տէր զհարաւ քաղցրու ։
 Թեան շնչոյ հոգոյգ սրբոյ՝ ՚ի խըս
 տացեալ և թանձրացեալ սիրտս
 իմ, և զարթո՞ որոտընդուտ փայ
 լատակմամբ քո զսառնացեալ և
 զցամնաքեալ միտս իմ :

Բաց տէր զվակեալ դուռն սրտի
 իմոյ, և ծագեա̄ ՚ի ներքս զլուստ
 և որութիւն ճառագայթից քոց :
 Սրբեա̄ և զաղտ մեղաց իմոյ, և
 զվէրս հոգւոյ իմոյ բժկեսն . ամբա
 ցն երկիւղիւ քո, և զօրոցն առնել
 զարդարութիւն յամենայն ժոմ :

Աղքերացն տէր զգլուխ իմ ՚ի
 բղիսումն արտասուաց . լուա̄ զթա
 բախ հոգւոյ իմոյ, և սրբեա̄ զգոյց
 արանա իմ . և զգործողս չարեաց
 վոխարկեա̄ ՚ի զղջումն ջերմ սիրոյ
 քոյ, զգաստ մարմնով կեալ ՚ի
 պատուիրանի քում :

Չգեան տէր զձեռն քո ՚ի սաւա-
բեկեալս՝ որ ընկղմալս եմ ՚ի խորս
չարեաց. վիրկեան զիս ՚ի ասսիկ ծո-
վածուփ թռնուէ մեղաց իմոց ալեաց:
Սանձեան տէր և կարկեան զիստե-
րախտ միտս իմ ՚ի զբաղմանց և ու-
նայնութեանց կենցաղց:

Արե՞ տէր զժարաւ հոգւոյ ե-
մոյ յառատարուղիս ընորհաց քոց:
և մի անտես առներ զտոչորումն
սրտի իմոյ. Պապակիմ ՚ի տապոյ
չարեաց իմոց, զովացն և լուսն զա-
պականեալ և զհոտեալ շրթունա
իմ ջըով ողորմութեան քո:

Ծագեան տէր զլուսաւորութիւն
և խազաղութիւն ընորհաց քոց ՚ի
սրտի իմում. և զցաւագին գիշեր
մեղաց ՚ի մոտաց իմոց հաւածեան. և
մարմից իմը ընթիեան զարիական
ժափս՝ առարինու թէ ումը կեալ ՚ի

Հաճոյս կամաց քոց :

Եւ հան զփուշ մեղաց 'ի սրտէ
իմմէ, զի հոգի իմ չարաւար մի-
ըաւորի . և սերմանեա սերմն բարի
'ի սրտի 'ի մում աճեցուցանել և
պտղաբերել զարդարուե պտուղն :

Հալածեա տէր զխաւար 'ի հո-
գոյ իմմէ, և զգեցն 'ի լոյս արդա-
րութեան ճառագայթից քոց :
Զարդարեա երկիւղիւ զղջմամբ և
արտասուօք զսիրտ իմ , երկնչիլ 'ի
դատաստանաց քոց , և պահել
զամենայն պատուիրանս քո :

Օ արթո՛ զիս տէր յահագին
խորութենէ քնոյ մեղաց . և զտա-
րակումեալ մարմինս իմ զգաստացն
յամենայն գործս բարիս , խորհիլ
միշտ մեծաւ երկիւղիւ , և առնել
զհաճոյս քո յամենայն ժամբ :
Ա զստեա զիս տէր 'ի ժառայու-

)(11)(

Ծենէ մեղաց . և խառնեա 'ի թիւս
Ֆառայից քոց՝ որք սիրեցին զքեզ
և զպատուիրանս քո պահեցին .
տուր զերկիւզ նոցա 'ի սրտի իմում ,
և ուսո՞ զիս գնալ 'ի շաւիզս գնա-
ցից նոցա :

Ծեթեւացն զկարիս մարմնոյ իմոյ ,
և յաճախեա յիս զշնրիս հոգւոյդ
սըլոյ՝ լինիլ տաճար և բնակարան
աստուածային կամաց քոց , անյագ
սիրով սիրել զքեզ և ատել զա-
մենայն ցանկութիւնս և սէր աշխար-
հիս այսրիկ՝ որով եղե կորուստ և
անցումն հոգւոյս :

Ողորմեա տէր յանմարդաբնակ
անապատիս , և 'ի ձեռն սորին ար-
ժանաւորեա զիս խառնիլ ընդ ա-
ռաջին սուրբ հարանցն՝ արի և ըզ-
գաստ ժուժկալութեամբ ժառ ան-
դէլ զեստացեալ պարզեւսն :

>X 12 X

Առաջնորդեա ինձ տէր 'ի նեղ
և 'ի նուրբ Ճանապարհն , որպէս
առաջնորդեցեր սըսոց քոց . և զօ^ւ
բացո զտկարութիւն իմ" ժուժկա-
լութեամբ . և համբեջութբ գնալ
'ի Ճանապարհն քո ջերմեռանդ
սրտիւ :

"Եպիեաց տէր 'ի նեխեալ և 'ի
թամախեալ հոգիս իմ" , և լուա
աստուածութին ջրով . հոգեւոր ա-
ղիւդ համեման . և անուշոհոտ իւ-
զովդ սրբով օժեա , և զկատարեալ
առողջութիւն ընձեւնեա :

Անուր այն տէր զքուն աչաց ի-
մց . և թափեա զնիրհումն 'ի գլխոց
իմմէ . զի ծառացեալ դանդաղոնօք՝
պաշարն զննարմինս իմ : Արա զիս
տէր արթունս և պատրաստս յամ
ժամ . զի զշաստութեամբ . և ար-
դարութբ վարեցից զկեանս իմ :

Տես տէր զլքունն որովայնի իմոյ՝
որ զօրացեալ է ՚ի վերայ իմ հա-
նոսաղ ցանկայ կերակրոյ և ըմ-
պելոյ և համեղութեան խորտկաց.
այլ դու տէր յամենայնի կարօղ՝
կտրեան զցանկութիւն մարմնոյս տեսն
չանաց :

Եւ քանզի միտք իմ ցնդեալ
պղտորեալ բանդագուշեալ շրջե
՚ի հոսանս երկրտւոր կենցաղոցա .
այլ դու տէր լուսաւորեան զայս
հոգւուս առանց զւաղմանց և երկւ-
մտութեանց , արի և զգաստ ամե-
նայորդոր ինութով գոլ զհետ
աստուածային սիրոյ քոյ :

Հալածեան տէր զամենայն չար
մտածմւնս երկրաքարչս ՚ի խորհըր-
դոց մտաց իմոց . արմատ բարեաց
տնկեան հաստատութեամբ ՚ի սրաի
խմում , և պտույլ շնորհաց ՚ի հո-

գիս իմ նկարեաւ :

Աղացեմ բարերար և ողորմած
տէր՝ արթունս և զուարթունս պատ
րաստեաւ զիս . ուսի ինձ գնալ ՚ի
Ճանապարհս քո բարի , զի արժանի
եղեց մեծի վառաց քոց :

Եւ .քանզի ցանկութիւն Ճաշակ-
ման՝ ամենայնիւ զբաղեցուցանէ ըզ-
միտս իմ . արդ՝ հալահեաւ զորկո-
րըստութիւն յինէն յորմէ խաբեցայ
միշտ . և կերակրեաւ զիս երկիւղիւդ
քով սրբով :

Առաքեաւ տէր զմի ՚ի սեքովքէից
քոց բերելով կայծակն հըոյ մեր-
ձեցուցանէլ ՚ի շրթունս իմ . և հան-
ցէ ՚ի բաց զանօրէնութիւնս իմ ,
և զմեզս իմ սըւեսցէ . և զնորհուրդս
իմ մաքրեսցէ , և զաղտեղութիւնս
իմ ջնջեսցէ . և լուսաւորեսցէ ըզ-
միտս իմ . ժառանգել նովաւ ըզ-

կեանսն յառիտենից :

Առաքեաւ տեր զբաժակ ուրա-
խարար հոգւոյդ սրբոյ ՚ի յեղկելիս՝
որ ծառաւիմն առ քեզ. արքոն և
զուարթացո զեռանդն սիրոյ քոյ .
լոյժ և ՚ի բաց ջնջեաւ զմրուր դառ-
նութեան յանցանաց իմոց :

Առաքեաւ տեր զլոյս քո , և լու-
սաւորեաւ զմիտո իմ՝ և զիսորհուրդս
իմ լուսով գիտութեան քո . ըզ
խաւար մնաց իմոց հալուծեաւ , և
զտկարութիւն անձին իմոյ կակզացն
՚ի ջանս և ՚ի վաստակս հոգւոյ իմոյ :

Առաքեաւ տեր զհրեշտակ խա-
ղաղութեան քո վերակացու և պա-
հապան անձին իմոյ՝ որպէս իշխա-
նութիւն . գնալ ՚ի վերայ իմի և
քարբի , և կոխել զամենայն զօրու-
թիւնս թշնամոյն . և զիս պահեաւ
ահել որպէս բիբ ական լնդ հովկա-

Անեաւ թեւոց քոց :

Չորժամ երթայցեմ 'ի Ճանա
պարհի : մի թողուր զիս միայն . այլ
առաքեա ղսգնականութիւն քո ըզ
կընի իմ՝ ալահելով զիս յամենայն
վործութեանց սատանայի 'ի տուէ
և 'ի գիշերի , և չտալ թոյլ մե-
ղանցել յողդողդ և թոյլ մտաց ի-
մոց , այլ կոծել զկոծ 'ի վերայ մե-
ղաց և անօրէնութեան իմոյ :

Պահեա զիս տէր 'ի բանից և 'ի
գործոց , 'ի տեսութեանց և 'ի գե-
րից խորհրդոց . և զերկիւղ դա-
տաստանի քո տպաւորեա 'ի սրտի
իմում . անզբաղ յօժարութեան
մտօք մութալ և ոյտհել ղպատ-
ուիրանս . քո :

Փակեա տէր զդուռն մեղաց ի-
մոց . և բաց ինձ զդուռն լուսոյ և
արդարութե , զի երկիւղալից սիրով

եկից զհետ իմոյ արարչիդ . որ ասացեր՝ եկայք առ իս ամենայն աշխատեալք . Եւ դարձեալ թէ՝ որ խնդրէ , առնու . որ հայցէ , գտանէ .

և որ բաղիսէ՝ բացցի նմա .

«Սայեաց տէր 'ի մերկութիւն անձին իմոյ՝ զոր կողոպտեաց թշնամին . և այժմ խայտառակ և ամօթալից կամ առաջի քո : Մարդասիրեա և զգեցն ինձ հանդերձ , մոյծ և ուրախացն՝ 'ի կոչումն բաղմելոց քոց :

.Օ գեցն ինձ տէր զպատմունանն զառաջին զոր մերկացայ մեղօք իւմովք . զոյց զանոխակալութիւնդ քո իմս , և լուսախայլ ողորմութեամք քո զորդարեա՛ զմերկութիւնս իմ .

Լուր տէր աղաղակի անառակիս որ ամօթով կամ առաջի քո . զգանձ հայրենի վատնեալ սովամահ կորընչիմ , կերակրի հաւասար եղէ խո-

զեց անասնոց և նմանեցայ նոցա ,
Ա՞յս մերժեր զիս տէր 'ի հայրենի
գթոյ քոյ . համարձակիմ 'ի խռամ
սիրոյ քոյ . 'ի ծնողեղ մերջացայ , և
զորդիութիւն իմ ուրացայ . Հոյլ
մեղայ յերկինս և առաջի քո , չեմ
արժանի կոչել որդի քո , արա զիս
իբրև զմի 'ի վարձկանաց քոց :

Օ արդարեա զիս տէր մեծաւ եր
կիւղիւ քո , և գարձն յանառակու^{թէնէ}
^{'ի} յարդարութիւն , յաղտե^{զութէնէ}
^{'ի} սրբութիւն , ^{'ի} ծու^{լութէնէ}
^{'ի} զգաստութիւն . Ժուժ
կալութէամբ գնալ ^{'ի} Ճանապարհու^թ
քո ուղիղս :

Դադարեցն զիս տէր 'ի շարաչար
խորհըդոց իմոց . և յառնելոյ զկամն
մտաց իմոց և մարմնոյ իմոյ . զահա
գին օք գալստեան քո տէր նկարեա
առաջի աչաց իմոյ՝ դողալ և սար-

սիւ 'ի դատաստանաց քոց :

Պայծառացո տէր զլապտեթ հուգոյ իմոյ որպէս կուսանացն իմաստնոց և շնորհեա պատրսստիւ արթնութեամբ՝ ընդ առաջ ելանել երկնաւ որ վիեսայիդ , զի մի մնացից արտաքս ուղիւս յիմար կուսանսն :

Ծանո տէր ինձ զՃանապարհս քո , և ուստի ինձ զարդարութիւնս քո . հեռացո տէր զմարմինս իմ 'ի խորհրդոց չարեաց՝ և հաստատեա յերկիւղ բարեաց , սուրբ և անարատ կեալ առաջի քո յամ ժամ :

Օ անօրէնութիւնս իմ ջնջեա տէր . 'ի յոյս բարեաց և յերկիւղ քո զիստս իմ բեւեռեա , լցեալ սիրուլ սպասել և ակն ունել մեծի գալստեան քո :

Օ օրացօ զիս տէր 'ի պատուի բանաց քոց՝ անսալ երկիւղիւ , դու

դաւ . և սարսիլ ՚ի գատաստան
քոց , խողըել զարդարութիւն
զիրաւունս երեսաց քոց , առնու
զպարգեւոս շնորհաց քոց :

Արձակեան զիս տէր ՚ի կապանաց
մեղաց իմոց . և զհնացեալս մեղօք
միջրատին նորոգեան . և զխաւարեալս
՚ի ցանկութե մարմնոյս լուսու որեւ
գնու ՚ի ճանապարհս խաղաղութե
զի տեսացեն աչք իմ զվրիութիւ
քո՝ զոր պատրաստեցեր սրբոց քոց
Բաժշկեան տէր զանքժշկելի Հիւան
գութիւն իմ՝ որ կարեամեալ զնիս
՚ի մահիճս մեղաց իմոց , և զեզե
ըեալ կամ ՚ի գուռն երկրորդ սե
լովմայ . սպասել և ակն ունիլ մեծ
գալատեան քո :

Նըամայեան տէր ինձ որպէս զան
դամալութին առողջանալ , խորտա
կել զանկողինս ցաւոց իմոց , ցըծել

X 21 X

մնդ կամարարս քո 'ի տան տեառն .
և 'ի գաւիթս աստուծոյ ծաղկիլ և
ոչ մեղանցել : Խորտակեա տէր
զըռնութիւն սատանայի . համ և 'ի
բաց ընկեան զզօրութի նորա . արգել
զարձտկումն նորա 'ի վերայ իմ . զի
տորապարհակ վարեալ զմարմինս
իմ տանի յընդարձակութիւն ճա-
սապարհի որ տանի 'ի կրօռւստ և
յապականութիւն :

Եկիցեցն տէր զբաղեալ և մոռա-
ցեալ մտաց իմոց՝ զահաւը և ըզ-
սոսկալի դատաստան քո , զոպատիւ
և զփառսն արդարոցն . և զանսերելի
ուանջանսն մեղաւորացն . և նոքօք
զարհուրեալ դողացն զմարմինս իմ
ուեսանել զմահ հանապազ առաջի
աշաց իմոց :

Աեւեռեա տէր զմարմինս իմ ընդ-
րկիւդ քո՝ և ընդ սէր պատուիւ-

բանաց քոց , և զհրամայեալսն ՚ի
նմա՝ երկիւ զիւ լսել . առանց ձանձ
բութեան կատարել միշտ՝ և մեր
կանալ ՚ի մեղաց և ՚ի ցանկութեց
կենցաղոյս , և պայծառանալ վարու-
առաքինութեան :

Փրկեա զիս տէր ՚ի գաղտնածիդ
նետից սատանայի , որ բազում մե-
քենայիւր պատեալ պաշարէ զիս
Աւար առեալ զմիտս իմ վարէ
գերութիւն ցանկութեան մեղաց
առնելով ծաղը և սյոյն կատակա-
նաց թշնամեաց :

Ամրացն զիս տէր յերկիւղ քո-
և զորացն զօրութեամբ քով զհի-
ւանդութի հոգւց իմրէ առողջացն
և զցաւս մարմնոյս բժշկեաւ և ըզ-
ջերմութիւն սրտի քո՝ հաստատեա-
՚ի սրտի իմում , չարչարակեց լին-
որբոց քոց :

Դարձն զգերեալս 'ի սատանայէ .
և զմեղօք վաճառեալս եգիպտական
և խիստ տանջանացն՝ փրկեա 'ի
բռնակալ չար սպասաւորաց դի-
ւացն . և յեղէգնակոխ մեղացն հան-
ցես՝ և արկցես զիս յերկիրն աւե-
տեաց :

Ընկղման տէր զթշնամին իմ որ-
պէս զզօրութիւն մառաւոնի , զի
սպառնացեալ 'ի վերայ իմ խրոխտայ
դարձուցանելով զիս յառաջին յան-
ցանան ընդ իշխանութեամբ իւրով
ծառաղել մեղաց և անօրէնութեց :

Օկրծն զիս տէր 'ի լերինս քա-
րանձաւի կամ 'ի տէղի անապատի ,
ուր և ողորմութիւն քո առաջնոր-
դեսցէ ինձ , հանդիպիլ մեծի փառաց
անուան քո . տուր ինձ զթես աղաւ-
նակերպ հոգ որդ սրբոյ . թռչիլ և
վերանալ խառնիլ յերամն արդաբոց :

>X 24 X

Ճամանեցն զիս տէր յօթեւանս
արդարոց քոց , և ղհանգիստ աշխատ
տութեան սուրբ հարցն պարգևեան
ինձ . անտես արա զյանցանս իմ , և
դասաւորեալ պայծառացն ընդ
սուրբս և ընդ սրբելիս անուան քո :

Հաստատեալ տէր զիսաղաղութի
և զպայծառութիւն լուսոյ կենաց
անձին իմոյ . զի մի խոսորիցիմ յաջ
կամ յահեակ . և դատաւրարտիմ
յաւուրգալստեան քո՝ սրահանէլով
զյետին նաքարակիտն մինչ իսպառ :

Ո՞ի մերժէր զիս 'ի բազմագութ
ողըրմութեանց քոց . զապաւինեալ
'ի քեզ ամրացն՝ աներէի . ու սրահէ
լով յամ որոդայթից սաստանոյի .
զի մի գերի վարեալ տանիցէ զմիտս
իմ 'ի զբաղումն և 'ի չար ծառա-
յութիւն :

Ուսո՞ զիս տէր առնել զսրդա-

Х 25 Х

բութիւն, խօսել զշշմարտութիւն, սիրել զարբութիւն և ատել զաղացեղութիւն, խոտորիլ 'ի չարեաց և գնալ 'ի ճանապարհս բարեաց:

Ապրեցն զիս տէր յորսողաց՝ ոքք գան 'ի վերայ իմ ըմբռնել զիս 'ի մեղս և 'ի ժուլութիւն անժուժկալութեան, մուացումն առնել յանցանաց իմոց, և ոչ տալ լիւել զօր հատուցման, և զսարսելի պատասխանն որ ասէ՝ երթայլք յինեն անիծեալք 'ի հուըն յաւիտենից:

Կանգնեսն զիս տէր 'ի գլորմանէ. և 'ի ըազմամեղ անդոդոյին խորութենէ մերացն և ըստը ըձրացն թեւօք հոգ, ոյդ սրւոյ 'ի խնդրուածս հաջոյից, 'ի նորոգումն և 'ի լուսա որութիմ մտացս. 'ի ջնջումն մեղացս. և 'ի կատարումն սուրբ պատուիրանաց քոյց:

Խողըեաւ տէր զեղծեալ և զկո-
րուսեալ քո պատկերս , որ Դի մէջ
աղըի և տղմի մեղաց փակեալ կամ .
Դիտ ածեալ աւելաւ շնոթհի քո , և
դիր 'ի գանձանակն առաջին՝ յորմէ
անկաւ :

Ե'կ տէր 'ի տեսութիւն հիւան-
դացեալ հոգւոյ իմոյ , դիր զձեռն
քո 'ի վերայ իմ , բժշկեաւ ասելով՝
զօրացի՞ր առ զմահիճաւ քո . և երթ
'ի տուն քո արդարութեան ,

Ե'կ տէր 'ի խնդիր մոլորելոյս , որ
յածեռուլ շրջեմ արտաքոյ հօտի
ոստու իրանաց քոյ . գաղանաբեկ
եղեալ և բարավհէժ մեղօք կառափի-
նառիմ 'ի դիւաց . ըմբռնեաւ և ած
'ի փարախ հայրենի , և խառնեաւ 'ի
գառինս հոտի քո :

Հետեւեաւ տէր զհետ ձողոպրե-
լոյս 'ի քէն , արագապէս վութա-

ցիր . Հաս և ըմբռնեա զաւզստամը
բեալս 'ի ձայնէ կոչման քո , և դի՛ք 'ի
բանդ կապանաց անխղելի սիրոյ քոյ :

Ո՞ի թողուր զիս տէր հեռանալ
'ի սիրոյ պատուիրանաց քոց և 'ի
վարուց առաքինութեց . այլ յոր
գորեա առաւելու յամենայն գոր
ծըս արդարութեան , առանց մեղաց
և առանց իրիք խափանուածոց ողաշ
տել զքեզ սըրութեամը և այս
գարութեամը առաջի քո զամենայն
առուրս կենաց իմոց :

Ո՞ի մատներ զիս տէր 'ի ցանկու-
թիւն մեղաց , 'ի քուն աչաց և 'ի
ցանկութիւն մտաց այլ պարսպեան
երկիւղիւ , և ապրեցն յամենահնար
չար գիւացն և յաշխարհական զբո-
սանաց :

Ո՞ի յապաղեր տալ ինձ զիրկու-
թիւն հոգւոյ և զջերմութիւն սիրոյ ,

զկերակըոյ պարկեշտուի և զմարմնոյ
ժուժկալութի, զարտասուաց բըզ
խումն, զանդադար աղօթս, զհնա
զանդութիւն և զհամբերութիւն
յուսոյ :

Յաղթեա տէր՝ հակառակամարտին
իմոյ, և զօրացն զիս ընդ գիմակաց
լինիլ պատերազմողին 'ի վերայ իմ.
և զգեցն ինձ զզրահն հաւատոյ,
պահոք և աղօթիոք սրբել զաղոս
ցանկութեան և զխորհուրդս մարմ
նական, և տռնուլ զջնորհս փրկական:

Տուր ինձ տէր տէզի ապաշխատ
րութեան, աշխատութե հանգիստ,
խաղողութեան հոգի և արդարու
թեան հանապորհ, ամրութե զէն,
հաստառութեան յոյս և պնտու
թեան երկիւղ .

Անցո զիս տէր ընդ անհուն ան
մեց մողաց խորաթո իչ ծովահեղձ

ցանկական կենցաղուս . և շնորհեա
ինձ լրյս աչացս և մտացս տեսութի ,
հանգիստ կենաց , հանդիպումն շնոր-
հաց , շաւիղս ճանապարհացն արդա-
րութեան :

Ընորհեա ինձ տէր լալ աչացս ,
արտատուաց հոսումն , մեղաց սուգ
մտաց , սրտի երկիւղ . ռսկերաց իմոց
սարսավումն և դողումն վասն տան-
ջանաց , կենաց ճանապարհ և ան-
դադար պաղատանս ,

Ալիացո՞ զիս տէր 'ի պատուիրա-
նաց պահպանութիւն , որով յայտնի
ժուժկալութի 'ի մարտ պատերազմի ,
բանսարկուին յաղթութի , 'ի մարտինի
մեռանիլ , և պայծառանալ 'ի հան-
գիսի .

Կեցո՞ զիս տէր երկիւղիւ և զըղը-
մամբ , արտասուօք և հառացանօք ,
սիրով և սրբութեամբ , շնորհօք և

Ճմարտութեամբ, գիտութեամբ և
ամենայն առաջինութեամբ :

Դնցեա տէր զբաղմութի մեղաց
իմոց, և թափեա զմբուր դառնու-
թեան յանցանացս . և պարաբեա
զակրտ իմ արքմամբ սուրբ հոգւոյդ.
և զփշաբեր մարմինս իմ լցո չնորհօք,
զարգացն և 'ի պտղաբերութիւն
փոխարկեա :

Երեւեցու տէր զշնորհս քո՝ զգութ
և զողորմութիւն քո 'ի պաշտօնեայս
քո . և տաճարացն զիս քնակարան
լինիլ ամենասուրբ հոգւոյդ, մի ևս
ժառ ոյիել մեղաց և ապականութեց :

Իժկեա զիս տէր 'ի հպարտու-
թենէ և յամբարսաւանութենէ 'ի
մնափառութենէ, 'ի մարդահամառ-
թենէ և յոխակալութենէ . 'ի նա-
խանձուէ և 'ի յատելութենէ և
յամենայն չարութենէ :

Փրկեան զիս տէր 'ի մարդկային
 գովեստից՝ 'ի փառաց և 'ի մեծա-
 րանաց . լոյս կարծելով զիսաւարս
 համբաւեն 'ի վերայ իմ բարի՝ զեղ-
 կելիս և զողորմելիս . Համբաւեն
 զիս տռաքինի , և ես եմ արտաս-
 ուելի և անթիւ մեղքը լի . Տաճկեան
 զիս 'ի լուսոյ սուտ գովութեանց և
 երանուեց , զի ոչ գիտեն զմեղս իմ .
 Երեւիմ սրբութեամբ , և լի եմ
 աղտեղութեամբ . կերպարանիմ ա-
 ռաքինութեամբ , և կեամ անա-
 ռակութեամբ . փայլիմ երկիւղա-
 ժութեամբ , և վարիմ մարդահա-
 ճութեամբ . Ճանաչեմ զշշմարտու-
 թիւն , և խօսիմ զստութիւն . գի-
 տեմ զարդորութիւն . և զործեմ
 զանօրենութիւն :

Քաւեան զիս տէր 'ի մեղաց և 'ի
 բամբասանաց . և թող ինձ զան-

ժուժկալութեանն և զժուլութեան .
զորկորսութեան և զդատարկա-
բանութեան , զցանկութիւն աղտե-
ղութեան , զհւյշոյութիւն և զա-
մնայն բիծս չարեաց :

Կացո՞ զիս տէր հաստատուն ան-
շարժ 'ի տեղի փրբձանաց պատե-
րազմի , առանց երկիւղի քաջ և
ախտ հաւատով և յորդորական
սիրով զօրավիգ լինիւ ընդ եկեղոց
դիւացն 'ի ՛Երայ իմ . զինեա՞ զիս
ամրակուռ զինու քո՞ տալ պատե-
րազմ և յաղթել թշնամոյն հա-
կառակամարտին , որ կամի խոպա-
զիս որսալ :

Օ ընկողմե՞ս տէր 'ի խորս մեղաց
հանցես և բերցես 'ի լուս պատուի-
րանաց քոց . և առ քեզ կոչեացես
զհեռացեալս 'ի քեն , և թողցես
զգործս իմ՝ անսուակութեան . զա-

պաւինեալս 'ի քեզ միսիթարեացեա։
զարձակեալս 'ի կապոյ պատուիրանաց
քոյ՝ ըմբռնեան ընդ լուծ սիրոյ քոյ։
Օգութ սիրոյ քո տէր միաւորեան
յիս , և զարգելեալս 'ի կապանաց
բանտի՝ արձակեան . և խզեան զկա-
պանս մեղաց իմոց . առաջնորդեան
ինձ 'ի ճանապարհ , և տեղի յար-
կից պատրաստեան , և պսակեան ընդ
սուրբս քո .

Հաղորդս արան զիս տէր անձային
սիրոյ քո , սիրել զպատուիրանս քո
և գնալ 'ի ճանապարհս քո , չար-
չարիլ մինչեւ ցմահ վասն անուանդ
քո , մտանել 'ի փառս և դասիլ
ընդ սուրբս քո , և ուրախանալ
միշտ ընդ կամարարս քո :

Գթան 'ի մեղուցեալ և յեղկելի
անձն իմ տէր . խափիանեան զպանա-
ռակ ցանկութիս իմ . սրբեան զաղա-

տեղութիւն մեղաց . և քաւեալ զո
նօրէնութիւնս իմ . բժշկեա զվերա
ւորեալ հոդիս , և առողջացի ըզ
հիւանդացեալ մարմինս իմ . ցըռւեա
զչարն յինէն , և ժողովեա զբարիս
և լից զպակասութիւնս իմ :

Առաջի քո անկանիմ և խնդրես
զթողութիւն մեղաց իմոց . զպա
զատանս իմ շնկալ , և քաւիչ վե
յանցանաց իմոց . պայծառացն և
լուսուրեա զխորհուրդս և զմիւ
իմ . կարողացն զմարմինս իմ ան
դադար կալ 'ի փառաբանութիւ
անուանդ քում սրբոյ :

Օ անկեալս մեղօք՝ կանգնեա : տեր
և զխոցեալս 'ի թշնամւըն դեղա
պատեա : բարձ զցաւս մեղաց ,
ընրացն զկսկիծ յանցանաց . յարեւ
տակեա 'ի դառն դահճաց , և ա
զատեա յանողում տանջանացն . 'ի

Բարմեական յղփանաց հեռացն , և
'ի դասս Ճգնաւորացն դասեցն :

Լեր վերակացու և պահապան
անձին իմոյ՝ ով տէր իմ յիսուս .
պահեամ զիս 'ի դիւաց , և փրկեամ
զիս 'ի մարդկային վորձանաց :
Հակառակողաց յաղթեամ և կացն
զիս 'ի մէջ պատերազմողաց՝ քաջ
և ընտիր լինիլ . գործակցեամ ինձ
ինիլ քաւարան մեղաց՝ և համբեւ
րել վշտաց , առաքինաջան գոր
ծովք հանդիպիլ քում աստուած
ծային շնորհացդ :

Վայ ինձ տէր՝ վայ ինձ . զի մեւ
զօք կործանեցայ , և մնոք իմովք
աղտեղեցայ . 'ի բարեաց ունայնացայ , և 'ի սիրոյ ցամաքեցայ . 'ի լալոյ
խաւորեցայ , և 'ի գնալոյ դադարեցայ : Ոչ ունիմ աչս լալոյ և
արտասուաց , ծիիմ տարակուսեալ

զի յոյս և ակն բարեաց ոչ ունիմ

Կանգնեա տէր զտարաբերեալ
անձն իմ՝ որ լի եմ մեղօք և անթիւ
յանցանօք. և խարշեալ և տրոհեալ
եմ ամենայն անդամօքս՝ յոտից մինչև
ցգլուխս ապականեալ, և չիք հնար
բժշկութեան՝ եթէ ոչ 'ի քէն տէր
իմ յիսուս. խոնարհեա առ վիրա
ւորեալս դեղատուութեամը, և մի
գարշիր 'ի չարահոտ ախտացելըս :

Հեռացն տէր զբերան իմ 'ի
բամբասելոյ և զլեզու իմ 'ի չար
խօսելոյ, զականջս իմ 'ի չար լուր
լսելոյ և զձեռս իմ 'ի յափշտակե-
լոյ, և զոտս իմ 'ի յանառակ գը-
նացս երթալոյ. և զամենայն անդամս
իմ զգաստացն, միշտ զհաճյս քո
կատարել :

Մեղայ քէզ տէր մեղայ, զի
յանցեայ զպատուիրանաւ քով. 'ի

լուսոյ կենաց ելայ , և մտայ ՚ի խա-
ար մեղաց ցանկանալով աղտեղու-
թեանց : Ի սիրոյ քո հեռացայ՝
ըմբռնեցայ ՚ի չարէն , և եղէ որդի-
կորստեան . ողորմեած ինձ բազմամե-
ջիս բարերար՝ զի դու միայն ես
մարդասէր :

Ի քեզ տէր ապաւինիմ՝ որ քա-
տրան ես մեղաւորաց և փախու-
ցելոյս դարան , արա փախստական
շթշնամին իմ . Օգնական զայլ ոք
ոչ ունիմ , բայց զքեզ միայն ունիմ
պահապան անձին իմոյ . ՚ի վտանգից
փրկեած , ՚ի յորոգայթից ասլրեցո՛ ,
և արժանի արա զիս լինիւ որդի
յաւիտենին :

Ողորմեած ինձ տէր կենաց և քա-
իչ մեղաց , կատարիչ խնդրուա-
ծաց և արձակիչ կապելոց , բաշխօղ
պարգևաց և տուիչ ամ շնորհաց :

Հնար տէր զաղացանս իմ, և ընկալ զպաղատանս իմ. քաւեա ըզյանցանս իմ, և կատարեա ըզինդրուածս իմ. արձակեա զկապանս իմ, և բժշկուա զհոգի իմ. առողջացն զմարմինս իմ. և ուղղեա ըզգնացս իմ, փութացն զիս ժամանել յօթեւանս սրբոց քոց :

Հալածեա տէր զբազու մ ախտամետուիս իմ, զցաւս 'ի մարմ ոյս և զաղտ 'ի հոգւոյս. զքուն 'ի գլւխոյս՝ և զյագումն ըրկորոց, զահեա զխորհուրդս իմ անզբաղ, զսիլս իմ սուրբ՝ և զմիտս իմ լուսաւը զցանկութիւնս՝ առ քեզ, և զյօծարութիւնս՝ յաղօթս 'ի տուէ և 'ի գիշերի :

Տղինեա տէր 'ի գլուխս աղբիւ վտակադ, և զանդս մտաց իմոց առոգեա. զաղտ յանցանաց իմոց ըուա:

և սրբեան զթաբախ վիրաց իմոց .
զկուշ մեղաց իմոց խլեան , և տնկեան
զբոյս կենաց : Աչեցու տէր զարդա-
րութիւն , և նուաստացու զանօրէ-
նութիւն . մեռն զմարմնոյ ցանկու-
թիւն , և նորոգեան զհոգւոյս կեն-
դանսթիւն :

Կոչեան տէր զմեղուցեալ անձն
իմ 'իքեզ , զի մերձենալ առ քեզ
ոչ իշխեմ . պատկառիմ յամօթոյ ,
և զարհուրիմ 'ի գործոց իմոց . ոչ
ունիմ առ քեզ համարձակութիւն ,
զի ես ինձեն եմ կորուսեալ : Ի սուրբ
պատուիրանաց քոց հեռացայ , և
մերկացայ 'ի փառաց քոց . այլ դու-
տէր գթան յիս և ողորմեան , զի
ստեղծուած եմ անարատ ձեռաց
քոց :

Ոչ իշխեմ տէր անյոյս լինիլ , զի
ողորմած ես գթած . և փառս ան-

Ճառ խոստացար դարձելոց մեղաց
ւորաց . այլ ես զարհուրիմ և դո-
ղամ, և Երկնջիմ 'ի բաղում և յան-
թիւ մեղաց իմոց . զի պատրեալ
խարեցայ յորսողէն . և արդ զի՞նչ
Ծնիմ Եղկելիս՝ որ տարակուսեալ
եմ 'ի կենաց :

Արա զիս տէր 'ի սուգ և յար-
տասուս վասն մեղաց իմոց . զի ծան-
րացեալ եմ անօրէնութե բեռամք՝
և յագեալ աղտեղի խորհրդով .
շատ ներեցեր ինձ, զի ոչ խրատեցեր
զիս 'ի մարմնի . արդ սարսեալ դո-
ղամ, թէ ոչ մսան ինձ այպիսիս
չարիք :

Աղաչեմ բարերար տէր՝ մի կռչեր
զիս յատենի, և տանջանաց մի մատ-
ներ զիս . այլ փրկեա՛ 'ի հրոյ գե-
հենին, և 'ի վտանգիցն ապրեցո՞ և
ողորմեա՛ ինձ . զի դու միայն ես

Մարդասէր :

Վ այ ինձ տէր՝ զի ծփանք տարակուսանաց պատեն զիս , և զսիրտ իմ խռովեն . զոր աղօթեմ ոչ գիտեմ : Սաղմոսեմ և ոչ իմանամ . շրթունք իմ բարբառի , և միտք իմ ձողովրեալ յածի այսը և անդը՝ և զկայումն ոչ ունի :

Եւ կամիմ զի իցէ անդ՝ բայց ոչ դադարի . ոչ տեսանի արէեօք և ոչ ըմբռնի . զուր աշխտտիմ և ոչ ինչ օգտիմ . որպէս ձայն հնցեալ պոնձի և ծնծղայի՝ թափուր և ունայն գատիմ . և անպտուղ գտանիմ յամենայն բարեաց :

Ծ նկան տէր զմոլորեալս որ փախոցեալ կամ 'ի լեռինա , որպէս ծառալ չար 'ի տեառնէ հալածեալ վասն մեղաց : Եւ 'ի սուրբ եղբարձ հրաժարեալ եմ , 'ի սուրբ պաշտա-

մանց հեռացեալ . զի սիրող էի մե-
զաց . և նախատինք կրօնաւորաց ,
անյագ ՚ի մեղաց և ՚ի զրկանաց :
Անդութ էի աղքատաց , և հա-
կառակ սպասաւորաց . անողորմ էի
հիւանդաց , և անմիսիթար աշխա-
տողաց . չելի իսկ արծանի կալ ՚ի
մէջ ճգնաւորաց :

Հանգո՞ւ տէր զշնորհս հոգւոյ-
սրբոյ ՚ի վերայ իմ , որ միայն էմ ՚ի
պատերազմի առանց սգնականի :
Սըրեալ տէր զտաձօր հոգւոյ իմոյ ,
և առ իս լէր ընդ եւեկոյս : Բաց
զայս հոգւոյ իմոյ , և լուսաւորեալ
զմիտս և զխորհուրդս իմ :

Տուր ինձ զօրութիւն տէր իմ յու ,
և ընկալ զօրհնաըանութի բերանոյ
իմոյ : Ի խոր քնոյ գիշերոյ զարթ-
զիս գոհանալ և օրհնել զքեղ . ո-
ըով զմեղս իմ քաւեցից : Ըսրհեա-

ինձ սուգ և արտասուս լալոյ և
սդալոյ , և անդադար աղօթելոյ ա
ռաջի քո :

Դրատեան տէր զդատապարտողն
իմ՝ որ յանդգնի ՚ի վերայ , մարտ
եղեալ ընդ իս ցանկութեամբ և
անժուժկալութեամբ , ծուլութբ
և որկորստութբ , փառասիրութբ
և մօրդահաճութեամբ բարկութբ
և սրտմտութեամբ , ատելութեամբ
և չարաչար հայհոյութեամբ , սնա
վառութեամբ և սնապարժութբ :
Հպարտութեամբ և ամբարտաւա
նութեամբ , բանիւք և գործովք
և խորհրդովք զօրաժողով լինիլ ՚ի
վերայ իմ . և ընկղմէ զիս ՚ի խրբ
չարեաց :

Ափուեան տէր զշնորհս քո ՚ի վե
րայ մասանց անդամոց իմոց . լցո՞
տէր զմարմին իմ՝ արիութեամբ և

Ժուժկալութեամբ , և զհոգիս իմ
 երկիւղիւ և դողութեամբ . զսիրտ
 իմ սիրով և արդարութեամբ . քո ,
 և զիտս իմ լուսով և իմաստութե
 քո . զխորհուրդս իմ հանձարով
 գիտութեան քո , և զոտս իմ գնալ
 'ի շուիզս արդարութեան . և զբե
 րսն իմ անդադար սաղմօսել քեզ
 գոհութեամբ և օր հնութեամբ .
 զայս իմ յորդաքուղիս արտասուօք ,
 և զհոտուեիս իմ հոտուտել զհոտ
 գիտութեան 'ի կեանս . զլաւիս իմ
 լաւլով զձայնն աւետեաց որ ասէ ,
 թողեանը լիցին քեզ ամ մեղք քո .
 Ո՞ինցեւ յերբ անսաս տէր չար
 զոժողին , որ ոչ յագի իմով կորըս-
 տէանէ . այլ հանապազ սկիզբն
 առնէ չարեաց , և 'ի բաց կորզեալ
 իսահանէ զիս 'ի բարեաց և յառա-
 քինութեանց , և հեռացոցանէ

զիս 'ի սրբութեանց , և 'ի յաւիտենից կենաց արտաքս հանէ զիս : Խաւարեցուցանէ զլուսաւորութիւնաց , և ապականելով գերէ զմիտուիմ . և վարէ զիս 'ի չար ծառայութիւն յանցանաց , և 'ի ձեռս անօրէն դահճացն մատնէ զիս . և տանի 'ի տեղի չարչարանաց , և արկանէ 'ի բանետ կապանաց մահու . կացուցանէ 'ի մէջ խաւարասէր սպասաւորաց , և 'ի տուռնա մեղաց կապէ զիս . և արդ ես եղիելիս զի՞նչ լինիցիմ . եթէ ոչ դու մը սգնես ինձ :

Տես տէր զալիս և զողալիս , զպաղատելիս և զեղիելիս . ինձ ողորմեած անօրինելոյս . և շնորհեած ինձ յորդ արտասուս 'ի գիշերի , և զնշոյլ շնորհաց քոց յառաւօտի : Բաց զիստւարեալ ացս սրտի իմոյ , բժշկեած զինանդացեալ հոդիս իմ .

Ընկալ զդարձ մեղաւորիս , և մի
բարկանար բազմամեղիս տէր իմ
յիսուս . և քանզի անթիւ ունիմ
զշարիս՝ ջնջեան յինէն , և տուր ինձ
զշնորհս բարեաց :

Համարձակիմ տէր աղօթել առ
քեզ , խնդրեմ և ոչ իմանամ զոգ
տակարն հոգւոյս . յայտնեան ինձ ոչ
զորմած տէր՝ զկամս բարիս , և ուսն
ինձ զպատուիրանս քո : Ու բարիս՝
զոր ոչ խնդրեմ և իմանամ , տէր
ինձ տուր . և եթէ ոչ գործեմ ըզ
բարիս՝ բարիս արա ինձ տէր . և եթէ
ոչ խնդրեմ զողորմութիւն , ողոր
մութիւն շնորհեան ինձ տէր , և զհեւ
ուացեալս առ քեզ կոչեան . և եթէ
ոչ կամիմ , բռնաւորեան և 'ի քեզ
կորզեան :

Եւ եթէ ոչ կամիմ , դարձն զիս .
և եթէ ըմբռնիմ յումեքէ , զերժն

զիս . Եթէ յերկրաւորս զբաղեցայ ,
 'ի խորհուրդս հողեւորս զբաղեցն
 զիս . Եթէ այսր և անդը գնաւ ցըն
 դիմ . մի թողուր զիս մինչև ըմբռու
 նեաւ տարցես 'ի տեղի յարկի փա-
 ռաց քոց :

Ո՞յֆ հայիք տէր իմ յեղկեալ
 սիրտս և 'ի զաղրասէր մարմինս , զի
 հող եմ և մօխիք . սիրեմ և զերկ-
 ըաւորս , և ոչ փափաքիմ նայել
 յերկնայինօն . այլ միշտ հեշտանամ
 'ի չարիս , և ոչ տեսանեմ զանվախ-
 ճան գնաւսն : Եւ ոչ յիշեմ զաւա-
 ջին սուրբ հարսն զերանելիսն , այլ
 'ի տիղմն աշխարհիս թաւալիմ . և
 ոչ մաքրեալ վերանամ դասիւ ընդ-
 առաքինիսն :

Եւ զի մոռանամ զերկիւղ դա-
 տաստանին , և ոչ դողամ յահա-
 գին դառն տանջանացն՝ որ կայ

պահեալ մեղաւորաց . և ես ծուզ
լանամ անհոգ լինելով 'ի փրկութե
կենաց , շնորհեած ինձ տէր սուգ և
կոծ անհանգիստ՝ և արտասօս ա-
սդաշաւանաց :

Ո՞վ յանդիմաներ զիս տէր յա-
ռուըն մեծի ահեղին , և մի յատենի
հրադարակին կացուցաներ զիս ա-
մօթալի . և 'ի տեղի առենի մի խայ-
տառակեր զիս , և մի կշտամբեր
յատեան դատաստանին . և մի թո-
ղուր ինձ զոչ գիտեմն լսել . և զա-
հաւոր բարբառն ահաբեկ որ ասէ ,
երթոյը լինէն 'ի հուր գեհենին :
Եւ մի 'ի բաց մերժեր ընդ վատ և
ընդ չար ծառայի . և 'ի ձեռն ա-
նօրէն կապողի մի մատներ զիս . և
մի տար կերակուր որդանց թունա-
ւորաց 'ի մէջ բորբոքեալ բոցոյ . և
մի արկաներ զիս 'ի խաւար սառնաւ-

նամանեացն տարտարոսին։ Այլ վըր
 կեա զիս 'ի սաստիկ կայժականց հրոյ,
 'ի բոցեղէն դետոց արշաւանացն, 'ի
 սաստիկ լաւագին և խիստ տանջա-
 նացն և յողբոց տարակուսանաց, 'ի
 կապկապելոյ ատամանցն և 'ի սարս-
 ռելի կակծանաց, 'ի տուրմանէ
 խաւարային բոցոյն և 'ի շժնդակ
 դառն աղէտից խորովելոյն, 'ի բո-
 ցածաւալ և 'ի շրջապատ հրոյն և
 'ի կողկողաձայն և յանդադար վայոյն
 վրկեա և ազատեա զիս տէր։

Բազմացաւ տէր անօրէնութիւն
 'ի վերայ իմ, իբրեւ զբեռն աղի
 կամ կապարի՝ բազմում է ախտ 'ի
 հոգիս իմ. և անխտիր եմ 'ի մեղս
 մարմնոյ, և զանազան չարեօք լը-
 ցեալ եմ։ Բայց այլ ինչ ունիմ
 վատթարագոյն՝ զանզղուի մարմնոյ,

որ քան զամենայն չարիս է դառնագոյն . և զի յաղօթելն իմում ձանձրանամ , և 'ի սաղմոսելն՝ ոչ իմանամ . 'ի խնդրել զերանութի՝ պղերգանամ , և յերկիւղէ շնորհաց դատարկանամ . տկարանամ մարմնովս , և արձան աղի սիրտ իմ լինի . և ոչ ծագէ՛ 'ի ներս լոյսն անշիջանելի , և յաւուրն չարի ոչ սարսեալ դողամ :

Ընորհեան ինձ տէր՝ երկիւղ սրբութեան և սպոյ . և յորդրեան առ իս աղընւրս արտասուաց . թէրթեացն զժանրութի բեռանց իմոց , և աճեցն առ իս սուրբ աղօթս : Փութացիք տէր և եկ 'ի խնդիր մոլորելոյս , որ մերձեալ եմ 'ի վախնան կորստեան՝ վասն զի խաւարեցայ 'ի լուսոյ , և 'ի սիրոյ պատուիւանաց քոց խափանեցայ . 'ի չար

>X 51 X

թշնամոյն յաղթեցայ , և նուաղեց
ցայ յերկի դէ քումմէ :

Տապալեցայ 'ի չար խորհրդոց չա-
րին , և ցամաքեցայ 'ի չնորհաց ար-
տասուաց սիրոյ քո . խաքեցայ յու-
նայն բանից , և 'ի լուսաւորութենէ
մուաց մոլորեցայ . աղտեղեցայ մե-
զօք , և զօր վախճանին մուացայ :

Տարակուսիմ անյոյս լինելով՝ ոք
ոչ գոյ հնար ապաշխարութեան .
զի մարմնով տկարացայ՝ պակասեալ
'ի զօրուէ , և ծերացեալ նուաղեցայ .
Սակայն 'ի քեզ ապաւինիմ տէր
յիսուս՝ հասիր յօդնութիւն ծան-
րաքեռնեալ ընկղմելոյս . և ազա-
տեաւ զիս 'ի չարեաց , որ ազատիւդ-
ես 'ի յանցանաց :

Ընկալ տէր զդոյզն շաղփաղի
աղօթս իմ , որ կամ առաջի քո-
դատապարտեալ . այլ և ծոյլ ՚

զգաստութե՛՝ մոլորեալ եմ 'ի մնաց
 և յերկիւղէ ունայնացեալ եմ :
 Բերան իմ այլ ընդ այլոյ բարբան
 ջէ . աչք իմ պշնու , և միտք իմ
 զբաղնու . ոչ անզըօս աղօթեմ , և
 ոչ սրտի մտօք խնդրեմ . ոչ հաւա
 տով առ քեզ դոչեմ , և ոչ եր
 կիւղ կարդամ . ոչ արտասուօք հայ
 ցեմ , և ոչ դողամ և սարսիմ վասն
 աւուրն պատասխանատուութեանց :

Եւ արդ տէր՝ մի անսար , այլ փու
 թապէօ արկ յապաշխարութիւն և
 'ի բով մաքրութեան հրոյ սրբեալ
 և ազատեալ 'ի մեղաց : Մեծաւ
 ջերմամբ եռացն և 'ի յորդոր ար
 տասուս և 'ի պաղատանս և 'ի խըն
 դրուածս . և տպաւորեա յիս զա
 ռաջին լուսաւորութե կերպարանն :

Ոշըմեա տէր մեղաւորիս՝ յան
 ցաւորիս անթիւ բաղմութեամբ .

և դարձն յապաշխարութիւն զգեստիս վտարանդեալ, և մոյժ զիս յարքունական փառման։ Առաջնորդեալինձ զվերին ճանապարհն գալ առքեղ։ զի եթէ դու ոչ առաջնորդեսցես ինձ ես ոչ կարացից գալ։ զի դու իսկ հրամայեցեր, եթէ ոչ ոք դայ առ իս՝ Եթէ ոչ հայր իմ ձգեսցէ զնա։

Եւ արդ տէր իմ գթած՝ մի յիշեր զմեղս իմ յաճախ լրբութեանս՝ և զանց առներ 'ի ծառայէս քում մէ։ մի թողուր զիս մնալ 'ի նոյն չարիս՝ և 'ի կեանս աշխարհիս սպառիւ։ այլ որպէս ընթացեալ զկնի ծառայի փախելոյ՝ այսպէս դարձուցանելով զիս՝ թողցես զյանցանս իմ, և արասցես հաղորդս սրբոց կամարաց քոց։

Դարձն տէր զցասումն բարկու-

Թեան քո յինէն : որ մեղօք բազմ
իմովք տրտմեցուցի զքեզ : Ողորմեա
ապստամբելոյս 'ի քէն : և զանհնա
բին դիզեալ կոյտս մեղաց իմ
ցրուեա : Ընդ քաղցր Ծոյ ծառայ
ութեան քո բեւեռեա զմիտս իմ :

Պորդեւեա ինձ տէր յիսուս
զլալումն դաւթի և զողբումն երե
միայի , զհառաչումն պետրոսի +
զյորդառատ վտակս արտասուա
կնոջն պոռնկի . զի հատեալ լոցի
անդադար 'ի տունջեան և 'ի գի-
շերի , զի արժանի եղեց սրբիլ 'ի
յաղտոյ և 'ի թարախոյ , և յորդ-
նալից վիրաց զերծանիլ , և 'ի բազ-
մաբեռն չարեաց թեթեւանալ և
դասիլ ընդ սուրբս քո :

Ողորմիլ ինձ տէր մի յսմենար
զի առանց քո վաստակելոյ յիս՝ ոչ
երբեք գործի բարի . և ոչ սերմա-

նեալն յանդս հոգւոյ իմոյ բռւսանի .
 զի սերմն ըանի քո որ յիս սերմա .
 նեցաւ՝ 'ի չար թշնամւոյն քաղեցաւ .
 և բռւսեալն՝ ոմն 'ի տապոյ չորացաւ ,
 և ոմն 'ի մէջ փշոցն անկեալ հեղ
 ձեալ ցամաքեցաւ . մշակելով քո
 յիս տէր՝ լծեաւ տէր զերկուս աչս
 եզանց որ յիս՝ արտասուագու ձայ .
 նիւ պաղատիլ առ քեզ յարաժամ ,
 զի արժանի դտայց ողորմութեան
 քռւմ :

Ընորհեաւ տէր զիս աղաղութիւն
 եկեղեցւոյ քռւմ սըշոյ , և ամենայն
 հաւատացելոց թագաւորաց և իշ
 խանաց՝ զօրաց և զօրաւարաց 'ի
 ճակատու պատերազմաց՝ յաղթել
 անօրէն բռնաւորաց :

Ողորմեաւ տէր առաջնորդաց և
 կեղեցւոյ հայրապետաց և վարդա-
 պետաց , Երիցանց՝ սարկտւագաց՝

դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց
Եկեղեցւոյ առնել զիրաւունս և
զարդարութիւն յամենայն ժամ՝
Հովուել զժողովուրդս քո, տքնիլ
վասն հոգւոց նոցա, ասելով՝ ահա-
ւասիկ ես և մանկունք իմ զոր ե-
տուք ցիս :

Ողորմեած տէր յիսուս քրիստոս
կարօտելոց և տարակուսելոց, որբոց
և այրեաց, անանկաց և տանց հա-
ւատացելոց, կենդանեաց և նաջե-
ցելոց, և ոքք ընծայաբերք են ե-
կեղեցւոյ : Աղքատոց կերակրովաց՝
ողորմածաց՝ երկիւղածաց և հիւան-
դաց, նաւորդաց և ճանապարհոր-
դաց, խոստովանովաց և աղախա-
րովաց, և անդարձ մեղաւորաց ո-
ղորմեած տէր . և դարձն զնոսա յա-
պաշխարութիւն :

Ողորմեած տէր եղբարց մելոց կը-

բօնաւորաց , և միանձանց Ճգնաւու-
րաց . և ողբ յանձն արարին զինքեանս
յաղօթս մեր յիւել , ողորմեա՞ բա-
րերար և ըստ իւրաքանչիւրոց
սկիտոյից՝ բաշխեա՞ առատապես ըզ-
շնորհս հոգւոյդ սրբոյ ՚ի վերայ ա-
մենեցուն սոցա . և զարդարեա՞ և
միացն ՚ի սէր աստուածութեան քո :

Աղոցեմ տէր յիսուս՝ և անկա-
նիմ առաջի քո սուրբ իւազին , բա-
րեխօսութեամբ սորտ զաղացանս
իմ ընկալ , և զինդրուածս իմ կտ-
տարեա՞ . և զօրութեամբ սորա զօ-
րացն զիս ՚ի կոցմանս յոր կոչեցայ
և ՚ի պատուիրանս քո՝ զոր տսոյ .
Հուր ինձ տէր զսա՞ ՚ի զօրութիւն
և ՚ի ժուժկալութիւն՝ ՚ի զգաստու-
թիւն և յառողջութիւն՝ լինիլ պա-
հապան անձին իմոյ ՚ի տունջեան և
՚ի գիշերի և յամենայն ժամու , ՚ի

ննջել և 'ի յառնել , 'ի գնալ և 'ի
դադարիլ , 'ի գործս և 'ի վաստակս ,
յաղօթել և 'ի պահել , և զհաճոյս
կամաց քոց կատարել :

Սա եղիցի ինձ բերդ ամուր , և
աշտարակ հզօր երեսաց թշնամոյն .
զարդարեա զիս սովաւ 'ի զարդ հո-
գեղինաց՝ և 'ի լոյս խմանալի . Եւ
յաւուրն ահեղի բարբառոյ գաբ-
րիելի յերեւիլ սրբոյ խաչիդ՝ լու-
սաւորեա զխաւարեալ հոգիս , մե-
րանալ լուսով ընդ առաջ անմահ
փեսայիդ , խառնիլ յերամն հայրա-
պետաց , և 'ի դասս մարտիրոսացն ,
և 'ի գունդս հըեշտակաց :

Բարեխօսութեամբ սրբուհոյ
աստուածածնիդ և անարատ միշտ
կուսիդ , և յուհաննու կարապե-
տին , ստեփաննոսի առաջին մար-
տիրոսին . և սրբոյն գրիգորի լուսա-

ւորչին , և ամենայն սրբոց վկայից
քոյ՝ լուր ինձ եղկելոյս :

Եւ գլորելոյս ձեռնտու լեր , և
մոլորելոյս առաջնորդեա . և 'ի իսա-
ւարէ հանցես զիս 'ի լոյս , և հո-
գւոյ իմոյ ազատութիւն շնորհեա :
Հաստատեա 'ի սէր քո . և բենեռեա
յերկիւղ քո . զտաճար հոգւոյ ի-
մոյ մաքրեա : և առ իս օթեւանեա :
Փակեա՛ զդուռն մեղաց իմոց . և
պարսպեա՛ շուշանակ յուսոխէ իմմէ .
և 'ի մարդոյ շարէ և յանիրաւէ
փրկեա՛ , և ազատեա՛ զիս տռաքի-
նութեամբ . և պարդեւեա՛ ինձ
զանձաւ . Երանութիւն քո : կենդա-
նեաց մերոց ողորմեա՛ : և զհոգիւ-
ննջեցելոց մերոց պայծառացեալ
լուսաւորեա՛ :

Բարեխօս առ քեզ ունիմք զա-
ռաքեալսն և զմարդարեան . և զա-

մենայն սուրբ մարտիրոսան , զհայ-
քապետան և զվարդապետան : Առւր
աղացանաց նոցա , և աղատեա զիս
՚ի մեղաց իմոց . տնկետա յիս հոգի
շնորհաց , և յորդոցեա զիս բարիս
գործել . ՚ի ծուլանալն իմում՝ ըլու-
նաւորետա . խռիանետա զիս ՚ի չար
գործոց , և սերմանետա յիս պտուղ
բարետաց :

Քաջալերետա զիս ՚ի նեղութեան
իմում . միսիթարետա ՚ի վշտի . ար-
ժանի արա զիս տէր իմ և ան իմ
յիսուս քրիստոս՝ լինիլ քեզ իսա-
չուկից մինչեւ ցմահ . որպէս զի ՚ի
հեշտութեանց աշխարհիս հրաժա-
րիցիմ . և եղեց երանելետացն դասա-
կից , և աւաղակին եղեց հաղորդ .
և ՚ի դրախտին վայելեցից զկեանս
անմահս :

Յաւուըն ՚ի վախճանի՝ հրեշտակ

ըարի ինձ առաքեա , քաղցրութեաւանդել զհոգի իմ . ընդ ուղիղ ճանապարհ առաջնորդեա , և ըզդանն դարանակալ կործանեա . անցո զիս անխռով ընդ օդս խաւարայինս , և զերժո ՚ի չար ժանից գաղանին . ասզրեցո և աներկիւղ պահեա , և ՚ի կայանս սրբոցն հանդո՛սպասել և ակն ունիլ գալստեան քո :

Հյորժամ գաս յերկնից ահեղ վառօք և անթիւ գասիւք հրեշտակօք , զարհութեալ դողան առհաս-սրակ տարերք ամենայն՝ երկնայինք և երկրայինքս . յակնարկելքո զօրութեանդ՝ սարսին յահեղ վառաց անմահ թագաւորիդ և անձառ դատաստանիդ և աններելի պատռ հասիդ :

Յայնմաւուր և զիս ընկալ տէր ընդ արդարս և ընդ կատարեալս

քո . և կարդաւորեա՞ ընդ աջմեն
դասուն , և պսակեա ընդ սուրբս
քո . և շնորհեա ինձ զկեանս յաւիւ-
տենից , և զանձառ բարիս քո
պարգեւեա ինձ . և քեզ փառք
արարողիդ՝ և պարգեւողիդ իմոյ
բարեաց :

Ահեա տէր զհոգիս ննջեցելոց
մերոց յաւուր մեծի քում գալս-
տեանդ՝ յորժամ գաս յերկնից ան-
ձառ փառօք , ահեղ և սոսկալի
զօրօք . հրանիւթ և հոգեղեն զը-
ւարթնօք : Ահաւոր հուր առաջի
քո ընթացեալ տարածի . կիզէ ըզ-
լերինս՝ և հալէ չըլուրս . և զարա-
րածս ամ առ համարակ տապալէ :

Յայնմ աւուր ահեղին ողորմեա
ինձ մարդասէր , զի գին սուրբ ա-
րեան քո եմ , Յորժամ զաղբիւրս
ցամաքեցուցանես , և զդնացս գե-

տոց դադարեցուցանես , զ ծովու
 ջրոյն զանքաւութիւն սպառեցու-
 ցանես , զլուսաւորս խաւարեցուցա-
 նես , փողն ահագին ընդ տիեզերս
 ամենայն հնչի . և զմեռեալսն զամ
 զարթուցանէ . և զաշխարհս ամենայն
 դողացուցանէ . և արարածք ամ յա-
 րուցեալ կան առաջի ածութեքու :
 Յայնժամ դնես զդատողական ա-
 թու քո , և ընդ քեզ բազմեցու-
 ցանես զերկոտասան առաքեալսն :
 Անաշառ դատաստանաւ դատես ,
 և յամենեցուն արդարութիւն պա-
 հանջես . զկամմարարս քո պատռես ,
 և զապստամբեալսն 'ի ձայնէ կոչման
 քո՝ պլատֆես . և զարդարսն փա-
 ռաւորես . զմարտիրոսն և զսուրբ
 վկայսն պսակես . զիմաստուն սուրբ
 կուսանսն զարդարես . և յիմար
 կուսանացն զառագաստին դուռն

իակես, և 'ի վաստացն և յերա-
սութեանցն հալածես . զօդիսն ք-
ընտրես , և զայժիսն 'ի քէն 'ի բա-
մերժես . և 'ի գեհեանն առաքես
որ լալումն է աչաց , և դառնա-
գոյն կակիծ ահեղ տանջանաց , և
հրեղինաց չար որթանց թունաւորաց
կտորողացն՝ կրծումն ատամանց :

Աբդ՝ գթա՛ և յիս յայնժամ
մարդասէր տէր և բարերար վրկիցդ-
իմ յիսուս քրիստոս . և ողորմութբ-
քով՝ գթասցիս 'ի հոդիս նաջեցելոց
մերոց՝ որք հաւատով՝ 'ի քեզ նըն-
ջեցին , զորս յարուցեալ կացուս-
ցես առաջի ահաւոր քո մեծի դա-
տաստանիդ՝ յայն տիեզերական ա-
հեղ հրապարակին :

Յորժամ յայտնին գործք բարւոյ
և չարի անթագչելի 'ի մէջ ատենին ,
յայնմ աւուր ահեղի թողութիւն

շնորհեամ յուսացելոց քոց որք յան
նուն քո սուըը ննջեցին յերկրի ,
զոր գնեցեր պատուական արեամ
բըդ քո ,

ջնջեամ զձեռագիր ամենայն մկրու
տելոցս 'ի քեզ . և թող զպարտիս
յանցանաց ամենայն հաւատացելոց ,
զկամայից և զակամայից . ընդ աջմէ
քումմէ դասեա , և զերանական
զձայնն 'ի լսելիս ամենայն հաւատա-
ցելոց աւետարաննեա ասելով՝ եկայլք
օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք
զյաւիտենից բարութիւնսն :

Արդ՝ տէր իմ և աստուած իմ
իմուս քրիստոս՝ բարերար ողորմած
և մարդասէր՝ անոխակալ և անյի-
շացար՝ ընկալ զաղօթս և զինդը-
ռածս իմ . որպէս պաղատիմ և
հայցեմ 'ի քէն վասն իմ և վասն
ամենայն հաւատացելոց , մի դար-

Х 66 Х

Ճուցաներ զերեսս քո ՚ի ժտողէս .
այլ խոնարհեան յաղացանս իմ , և
ըւը ինձ մարդասէր . և ցոյց միս
զսովորական քո մարդասիրութեանդ
գողօրմութիւն , և խնայեան ՚ի մե-
ջուցեալ ծառայս քո :

Եւ կարդեան զիս ընդ աջմէ դա-
սուն . և մի կացուցաներ ՚ի ձախմէ
ընդ ու լսն՝ որք զայրացուցին պքեզ .
և մի պահանջեր յինէն զանհամար
պարտիս յանցանաց իմոց : Եւ մի դու-
տապարտեր զմեղաւորս յայնժամ .
և մի յայտնեսցին ծածուկք գործք
ամբարշտութեան իմոյ յանցանաց
յանացառ ատենին՝ հրեշտակացն և
հրեշտակապետացն և ամենայն սրբոց
քոց սիրողաց . այլ յաղթեալ ՚ի
քումմէ մարդուսիրութենէդ՝ արաս
ցես այցելութիւն մեղուցեալ ծա-
ռայիս քո . և մի ըստ չար գործոց

իմոց հատուսցես ինձ :

Եւ մի հրամայեք կապեալ ոտիւք
և ձեռօք հանել 'ի խաւարն ար-
տաքին , ուր լաւ աչմց է և կրծտել
ատամանց . այլ ըստ քում գթու-
թեանդ և բարերարութեանդ և
անյիշաքարութեանդ՝ ողորմեած ինձ
բազմամեղիս :

Յայնմաւուր զերծն զիս յամօթոյն
յաւիտենից . և փրկեած զիս յան-
վախճան տանջանացն . ապրեցն զիս
յաններելի պատուհաբիյն : և բաց
ինձ զդուռն ողորմութեան քո . և
մի փակեր զդուռն արքայութեան
տէր իմ տէր՝ աստուած իմ աստ-
ուած՝ յիսուս քրիստոս :

Աւրծանի արա զիս զանարժանս յա-
ւուրն յայնաիկ երանութեանց , և
անագուկ անութե պարգևաց լուսոյք
և անազառ յաւիտենից ուրախու-

թեանց , և բարեաց հատուցմանց
սրբոցն և արդարոցն , և զփառ
երանելեացն վայելել միշտ : Չի մը
տից արժանապէս յառագաստ ան-
մահ վեսայիդ . և ժառանգեցից
զանսպառ բարիսն ընդ ամենայն
սուրբս քո՝ մաքուր և յստակ և
սուրբ սրտիւ՝ համարձակ երեսօք :

Անհատ տեսից զքեզ ընդ հրեշ-
տակս . և ընդ սուրբ սիրողս վայե-
լեցից զանհաս զանձառելիդ և զա-
նեզը լոյս երրորդութեանդ՝ գոհա-
նալով . և զուգահաւասար տրաս-
ցես ընդ սրբս քո յօրհնաբանութիւ
միշտ արժանապէս . հանապազ ածա-
ռացն : Եւ անդադար երգով փառա-
սրեցից զամենանը երրորդութիւն-
այժմ և յաւիտեանս յաւիտենից ,

ամեն :

Նորին դարձեալ աշօթք ասացեալ
առ տէը աստուած :

Տէր աստուած զօրութեանց
աղջեմ զքո բարերարութիւնդ
ժում և հայցեմ 'ի քէն , տօւը
ինձ տապան ապրեցուցիչ որպէս
սոյին . ապրեցուցիչ ինձ 'ի հրեղէն
ժովէն և յանդն լային հրահոսանա
ցըն , յանշէջ սրգելունէն և յան
հնարին վտանգիցն օի դու ես
տէր աստուած՝ որ զբանդ ածային
ժածկեցեր և 'ի ժառայական կերպս
իցեր վասն իմ . զիեղի 'ի քիմն առեր ,
և ապտակ 'ի ժնօտս ընկալար :

Եւ արժմ աղջեմ զքեզ՝ աղջ
տէա զիս 'ի դառն ժառայութեսէն
սատանայի . զի յորժամ զձեւս իմ
'ի վեր ունելով աղօթեմ , անօրէն

սատանայ խաբէ և ունեյն հանէ
զիս 'ի յաղօթից իմոց ։ Տուր ինձ
աստուած քերդ ամուր. և կորզեա
զիս յառիւծուն, որ հանապազ կամի
կլանել զիս ։ Զի ընդ ալիտանիսն
փառաւորեցից 'ի բարձունս զհայր
և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտեանից,
ամէն :

ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ

Նորին աղօթք՝ պէս պէս
հայցուածովք :

Ծէր մեր յիսուս քրիստոս
երկնի և երկրի, իշխան կենաց և
մահու, դատաւոր կենդանեաց և
մեռելոց, Քրիստոս աստուած յոյս
և ապաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խո-
նարհեցուցանեմ զերկրպագութիս

և մատուցանեմ զփառաբանութե
մաղթանս . Լուր պարզեւիչ հայց-
ուածոց իմոց՝ որ միայնդ ես առանց
մեղաց , որ միայնդ ես աբ և 'ի սուրբս
հանդուցեալ . որ միայնդ ես գթած
և ողորմած :

Ուշրմեա ինձ աստուած ըստ մեծի
բղորմութե քում , և ըստ բազում
զ թութեան քում քաւեա դանօ-
բենութիւնս իմ :

Ոտեղծիչ իմ ողորմեա ինձ և
օրհնեա զիս . երեւեցն զերեսս քո
առ իս և հաշուեա ըստիս . Ապրե-
ցուցիչ իմ դարձ առ իս և երեւեցն
զերեսս քո , և յիշեա զիս յարքայութե
քում . Դարձ առ իս ած փրկից իմ ,
և դարձն զսրտմառեիս քո . յինէն .

Ո՞ի յաւիտեան բարկանար ինձ .
և մի դարձուցաներ զերեսս քո մի-
նէն . Մի բարկութեամբ քո խըա-

տեր զիս . և մի սրտմտութեամբ
քով յանդիմաներ զիս : Մի՛ յա-
ւիտեան բարկանար ինձ . և մի յի-
շեր զարիս իմ . և մի պարտաւորեր
զիս ըստ իմում անօրէնութեանս :

Մ' իսպառ բարկանար ինձ . և
մի յաւիտեան պահեր ռիսս : Մի՛ ըստ
մեղաց իմոց առներ . և մի՛ ըստ ա-
նօրէնուես իմում հառուցաներ ինձ :
Մի՛ ընկենուը զիս յերեսաց քոյ . և
մի խնդրեր զգիր յանցանաց իմոց . և
մի դատապարտեր զիս . զի ես ին-
ձէն գիտեմ որ անուղղայ եմ և
յանցաւոր 'ի մանկութենէ , և ան-
պատասխանի եմ յամենայնի :

Աւ գու դատաւոր հզօր և ա-
նոխակալ , որ զանցանան թողեր ա-
նառակ որդւոյն թող և ինձ զպար-
տիս մեղուցեալ և անօրինեալ քո
ծառայիս : Քանզի քո առատ ըա-

ըերարութիւնդ յայնմամ երեւեսցի
յորժամ ինձ ողորմիս , որ չեմ ար-
ժանի ողորմութեան քռւմ . , որժամ
իս ցուցանես զԵրկայնմտութի քո ,
որ արժանի եմ բիւրուց տանջանաց .
զի զամենայն աւուրս իմ անառա-
կութեամբ անցուցի , և ոչ կացի
՚ի հրամանի քռւմ :

Արդ՝ քաղցրացի՛ր ինձ բարի և
քաղցր թագաւոր . և հաշուաց
ընդ բազմամեղիս . և մի դարձու-
ցաներ զԵրեսս քո յինէն . և մի խո-
տորիր քարկութեամբ ՚ի ծառայէ
քռւմմէ :

Ո՞ի հայիր յանհնաղանդութիւնս
իմ և ՚ի պղերգութիւնս . Մի՛ տ-
նարդեր զիս և մի թողուր զիս . և
մի ընդ վայր հարկաներ զիս . զի
թէ պէտ ես զտաճար հոգւոյդ սրբոյ
ապականեցի իմուլ ծուլութեամբս

և անառակ գնացիւքս , այլ դու
գթա՛ յիս ստեղծից իմ ողբրմած և
անցիշացար . և մի ապականեր զհոդի
իմ գեհենաժառանգ այրմամբ
յաւիտենականաւ :

Այլ գթացեալ մարդասիրապէս՝
երկայնամիտ լեր առիս . և ներեւու
յանցանաց իմոց . Եւ շնորհեաւ ինձ
ժամանակ ապաշխաղութեան և զըլ
ջու մն արտասուաց . և առո ը իմաս
տութեամբ խորհիլ զօրենս քո 'ի
տուէ . և 'ի գիշերի , Կործել զբարի
և առնել զարդարութիւն առաջի
երեսաց քոց :

Համբառնամ առ քեզ տէր
լաչս իմ բոլորով սրտիւ իմով . կար
դամ առ քեզ քըիստոս տատուած
միածին որդի աստուժոյ՝ կերպարան
անեղին և համագոյ սուրբ հոգւոյն .
Որ յաղթեալ 'ի մարդասիրութեզ

քումնէ, կամաւ խօնարհեցար յան
ձառ վատացդ և առեր զծառայի
կերպարանս . և անպարտականդ
յաղսգս դատապարտութեան մերոյ
համբերեցեր՝ մինչեւ զշարքարանս
խաչի և մահու յանձն առեր մասն
փրկութեան ստեղծուածոց քոց :

Առդ՝ որ զայսպիսի սէր ունիս
առ ազդս մարդկան, և կամիս զի
ամենայն մարդ կեցցէ և 'ի դիտու
թիւն չշմարտութե եկեսցէ, դթան
և յիս 'ի ռազմամեղս դթան և մար
դասէր տէր . և կանեաց ընդ իմ
փակութիւնն . և արժինձ ողորմութի
եղկելոյս և թշուառականիս, որ ա
ռաւել միրաւորեալ եմ՝ և ուշր
մելի քան զամենայն մարդիկ :

Օ 'ի ոչ և մի օր սիրեցի զքեզ
'ի բոյոր սրտէ իմնէ . և ոչ մի ժամ
յամենայն զօրութեան, իւ ո՛չ պահելի

վարատուիրանս քո . այլ պղերդու
թեամբ և զբոսանօք անցուցի զա-
ւորս իմ . և աղօնեղի խորհրդովք
անցուցի զամենայն կամա իմ : Առուրք
իմ պակասեցան , և անօրէնութիք
իմ բարձրացան . և ոչ գոյ ինձ գյու
փրկութե և տեղի ապաւինի . բայց
միայն յուսացեալ եմ 'ի քո բարե-
բարութիւնդ , և արաւինեալ յա-
ւատ ողորմնւթիւնդ :

Եւ արդ սնկեալ բղխմամբ ար-
տասուաց աղացեմ զեւզ . պաղա-
տիմ մինչ և եմ կորու սեալ , և մինչ
եւ է ժամանակ դարձի իմոյ հա-
սեալ . շնորհեաւ ինձ տպաշխարու-
թիւն . և յառաջ քան զվսխճան
արձակեաւ զիս 'ի կապանաց մեղաց
իմոց , և անտես արա զանթիւ ա-
նօրէնութիւնս իմ :

Ու ամենայն բարութեանց ես

տէր, և իշխանդ ես թողուլ զմեղս
ժամկեա զամենայն անօրէնութիւնս
իմ քոյով մեծութեամբ գ. և միսի
թարեա զմշտանկեալ և զտարա-
կուսեալ հոգի իմ։ Եւ արժանա-
ւորեա զիս յայսմ հետէ ըստ կամաց
քոց քաղաքամարել զայլ ևս պան-
դըստութեան իմոյ ժամանակս . Ե-
թէ չկամիմ, բռնադատեա զիս . և
մի թողուր ՚ի կամս անձին իմոյ,
մինչեւ տարեալ հասուցես յօթե-
ւանս արքայութեանդ երկնից։

Լուր տէր աղօթից անարժան ժո-
ռայիս քո, և պաղատանադ իմոց
ունկնդիր, Որ ասացեր թէ՝ Հայցե-
ցէք և գտջիք . բաղսեցէք և բաց-
ցի ձեզ, Եւ այժմ բաց ինձ սէր
զգուռոն ողորմութեան՝ որ ողբալով
կարդամ առ քեզ . և մի անտես
առներ զաղացանս մեղուցեալ անձին

իմոյ, որ ոչ եկիր կոչել զարդարս,
այլ պմբղաւորս յապաշխարութիւն:

Աւորդ՝ խոնարհեալ անձամբ՝ բեկեալ սրտիւ և ամօթալից երեսօք անկանիմ առաջի քո. չեմ արժանի կոչել որդի քո՝ վասն ապականեալ մարուց իմոց, և ոչ անուանել զանուն քո գարշ և աղոտեղի բերանով իմու՛: Այլ համարձակիմ գթութիւն քո. զի գիտեմ զքեզքաղցը և անօխակալ՝ բազմախնամ և երկայնամիտ առ արարածս քո և յաղագս այսորիկ ժտելով պաղատիմ առ քեզ: Եւ յառաջ քանզիւնիւն աղաջեմ և նախքան զփակիւ դրանն ապաշխարութ: ան և հառանիլ անդարձ վճռոյն զարտասուս իմ արկանեմ առաջի անօխակալ գթութեանդ քո նղորմա՞ տէր, երկայնամիտ քաղցը և

անյիշացար :

Ո՞մ ընդ քանքարաթագոյցն
դատապարտեր զիս . և մի ընդ յիւ
մար կուսանսն փակեր ինձ զդուռն
արքայութեան քո . Մի ընդ չար և
վատ ծառայիցն զիս լժակցեր . և
մի ընդ հերձուածօղսն դներ զբա
ժին իմ . Մի ընդ պունիկսն և ընդ
չարագործսն կորուսաներ զիս . և
մի ընդ տիտաւոքսն և ընդ շաղա
խեալսն հոգւով հաներ զիս 'ի
կունաց :

Ա.Ա. զերժո՛ զիս յանզերժ տան
ջանացն , և ապրեցո՛ յանհանդիստ
ալէկոծութեանցն : Փրկեա անմահ
'ի մահուանէ , և ազատեա 'ի յա
փտենական ամօթոյն . զերժո՛ 'ի միշտ
լալոյն և 'ի հանտղաւզորդ ողբալոյն :
Ո՞մ մերժեր զիս 'ի քո դասուցն .
և մի տարագիր առներ յերանաւէտ

կենացն։ Մի՛ անբաժին հաներ զիս
 'ի հայրենի ժառանգութենէն, և մի՛
 զրկեր զիս յերկնաւոր հարսանեացն։
 Մի՛ կարօտ պահեր զիս 'ի քո ան-
 ձառելի տեսութեղի ։ այլ շնորհեա-
 ինձ ընդ արժանաւորսն, և ընդ կա-
 տարեալ ոգիսն՝ վերանալ լուսեղէն
 ամպօք ընդ առաջ քո յօդս, և
 պարզերես և աջալրջութեամբ կալ
 առաջի քո ։

Եւ վասն քո փառաւորեալ հզօր
 և ահեղ թագաւորութեանդ, մի
 մտաներ ՚ի դատաստան ընդ ժա-
 ռայիս քո ։ և մի հատուցաներ ինձ
 ըստ իմում անօրէնութեանս ։ և մի
 ամացեցուցաներ զիս առաջի անթիւ
 և ահաւոր բանակաց քոց ։

Այլ ողորմեա ինձ զի ոչ ոք է
 հակառակ քեզ ։ և պարգեեա ինձ
 զարքայութիւնդ ։ Ընդ սուրբս քո

դասեա՞ . և ընդ արդարմա պատկեա՞ .
ընդ սիրելիս քո օրհնեա՞ . և ընդ
կամարարս կամաց քոց ՚ի յարազը՝
ւարձ ուրախութիւնսս ուրախացն ։

Եւ առատապարգեւ փառօքդ
մատաւորեա՞ զի՞ , տէր ՚ի լուսեղէն
երամս արդարոց՝ ընդ նոսին հանգա
շիլ ՚ի վերինդ երուսաղէմ յանըստ
ուեր , և յանակեաց ուրախութիդ ։
Զի՞ ընդ նոսին համաձայնեալ փա
ռաւորեցից զամենոսուրք երրոր
դութիւնդ . այժմ և միշտ և յա
ւիտեանս յաւիտենից , ամեն ,

1. Դօթօ՞ յորժամ յորոդայթ անկանի ոք .
ասացել է սբյն գըիկորի մերոյ լուսաւորչն .

(Ընեալ է մորդասիրութիդ
քո տէր իմ և փրկիչ յիսուս քո՞ .
Ծնդէլ լք մնես զիս . դու միայն ես

առանց մեղաց , և անունքո զա-
նոխակալութիւն և զմարդասիրու-
թիւն ցուցանէ . գթա՛ յիս՝ վասն զի-
դու ես միայն մարդասէր :

Ապրեց' զիս զանկեալս 'ի մեղս .
զի դու ես միայն առանց մեղաց :
Հան զիս 'ի տղմոյ անօրէնութեան
իմոյ . զի մի ընկղմեցայց յաւիտեանս
յաւիտենից . Փրկեա՛ զիս 'ի թշնա-
մեաց իմոց , քանզի ահա իբրև դա-
ռիւժ գոչէ և մռնչէ կամելով կը-
լանել զիս :

Առդ տէ՛ր իմ փայլատակեա՛ ըղ-
փայլատակունս քո և կործանեա՛ ըղ-
ջֆրուհ նց . Երկիցեն և խաւարեսցին
յերեսաց քոց . քանզի անկարէ և ոչ
ունի զօրուհ կալ առաջի քո , և ոչ ու-
ռաջի երեսաց սիրողաց քոց : Տեսանէ
զգօրուհ նշանի խաչի քո տէ՛ր՝ և զար-
հուրի . և ամաչելով 'ի քաց հեռանոյ

յայնցանէ որք կարդան առ քեզ,

Այժմ տէր կեցն և ապրեցն զիս,
վասն զի 'ի քեզ ապաւինեցայ . Հան
'ի նեղութենէ զանձն իմ, զի մի իս
պառ կորուսցէ զիս նենգաւորն որ
մարտնչի ընդիս ծածուկ հնարիւք .
Որ խորհրդոց ես տէր, և քննես
զսիրտս և զերիկամունս, սրբեա ոզ
սիրտ իմ և զխորհուրդս 'ի զազիր
և 'ի պիղծ խորհրդոց . զի մի իսպառ
կորեայց 'ի յաւիտենական կորուստն .
Որ կարօղդ ես ամենայնի, ողջրմեա
ինձ աստուած իմ, տուր շնորհ ար
տասուաց մեղուցեալ հոգւոյս, որ
պէս զի լուացից զբազմութի մեղաց .
զի ապրեցայց 'ի ձեռաց անողորմ
հրեշտակաց՝ որ արկանեն զամբաւ
րիշտն 'ի հուր գեհենին . Երանի
թէ լայի հանապազ աղաչելով ըզ
քեզ աստուած, զի մի անարժան

գտայց 'ի ժամուն՝ յորժամ գոյցեւ.
և մի լուարց զահաւ որ զՃայնն զայն
թէ Երթ 'ի բաց մշակդ անիրաւու-
թեսն՝ ոչ գիտեմ ուստի ես :

Աստուած բարձրեալ միայն ա-
ռանց մեղաց , շնորհեան ինձ մեղա-
ւորիս . լաւուր յայնիկ զբազում
գթութիւն քո . զի մի յատնեսցին
ժանուկ ամշարշտութիւնք իմ ա-
ռաջի տես սնողաց հրեշտակաց և
հրետակապետաց : Մորդարեից՝ ա-
ռաքելոց և արդարոց սրբոց : Ա. Ա.
ապրեզն զիս զանբարիշտս շնորհօք
ողորմութեան քոյ . ընկալ զիս 'ի
գրախտն փակութեան ընդ կատա-
րեալ արդարմն . ընկալ զարօթս
մեղուցեալ ժառայիս քոյ բարեխօ-
տութեամբ սրբոցն՝ որք հաճոյ եղեն
քեզ , յիսուս քրիստոս տերդ մեր ·
Եւ քեզ մոդ հօք և սուրբ հոգւց

փառք յաւիտեանս յաւիտենից ·
ամէն ։

Նորին դարձեալ ողոթք ·

Եղաղէմ զքեզ փրկիչ աշ
խարհն քրիստոս . հայեա յիս և
ողորմեա ինձ . փրկեա զիս 'ի բազ
մութենէ անօրէնութե իմոյ . քանզի
անարգեցի զամենան բարիսն զոր
առարեր յիս 'ի մանկութենէ իմմէ .
Զիս զոխմարս՝ զտդէտս և զանի
մատոս արարեր անօթ լի գիտութե ,
յաճախեաց յիս շնորհն քո և լցոց
զքաղց իմ և զեարաւ իմ զուա
ցոց . և լուսաւորեաց զխաւարեալ
միտս իմ . և ժողովեաց 'ի մըլորեւ
թենէ զխորհուրդս իմ և ելից 'կ
ծոց իմ :

Այժմ երկիրադանեմ և աղաւ
չեմ, անկանիմ և հայցեմ խոստո-
վանելով զքումմէ բարերարութե-
նէդ . կատարեա յիս զխոստումն
շնորհի քո, և պահեա զնա 'ի գանձի
քում . զի դարձեալ տացես ինձ
յաւուքն յայնմիկ :

Ո՞ի ըստկանար ինձ մարդուսէր .
զի ոչ հանդուրժում սպառնալեաց
քոց . յաղագս այսորիկ աղաւչեմ
ժամելով զի առաւել քան զշափն
յաճախեաց յիս . վասն զի լեզու իմ
տկարացաւ ոչ կարելով խօսել ըզ
շնորհէ քումմէ . հիացան և միտք
իմ ոչ բերելով զբազմութիւն
ալեաց նորա :

Կերպարան և Ճառագայթ օրհ-
նելոյ հօրդ՝ դադարեցն առ իս 'ի
հոսանաց նորա . զի իբրեւ զհուր
բորբոքեալ բոցակիզէ զերիկամունս

իմ և զսիրտ իմ։ Անդք դարձեալ
պարգեւեած ինձ զնա և կեցն զիս
յարքայութեան քում։ մի յիշը
զանօրէնութիւնս իմ։ յանդգնիմ։
հայցեմ տուր ինձ զիսդրուածս իմ։
և արա օթեւանս օրհնել հարբ քո
յաւուր յայտնութեան։

Ըսրհեած ինձ քրիստոս զհայց-
ուածս իմ։ զի դու միայն ես տը-
ւոլ կենաց իմոց։ Եւ քեզ փառք
յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Սրբոյն Աթահասի, և սրբոյն աբրայ
Եփրեմի ասացեալ Խոստովանութիւն։

Է՞ւ արդ՝ հրաժարելով ՚ի սա-
տանայէ և յամենայն խարէութենէ
նորա՝ ՚ի պատրանաց նորա՝ ՚ի գնա-
ցից նորա՝ և ՚ի պաշտօնէից նորա՝ և

'ի հըեշտակացնորա . Եկեալ առաջի
սուրբ Եկեղեցւոյ խրստովաճիմ և
հաւատամ զհայր անսկիզբան՝ զորդին
միաժին ծնունդ 'ի հօրէ . և զսուրբ
հոգին բղխումն 'ի հօրէ . Երեք ան-
ձամք և մի բնութեամբ և մի աստ-
ուածութեամբ . անշփաթ միաւորու-
թեամբ . և զանձառ տնօրինութի
մարդացելոյ ըստին աստուծոյ :

Եւ արդ՝ ես գերիս և արտաս-
ուելիս և որբան բան զօրէ դարովիե-
լս՝ մեղայ ամենանը երրորդութեն
հօր և որդւոյ և հոգւոյն սրբու :

|| Եղայ և սրբուհւոյ ածածնին
և պըսոց հրեշտակաց և ամենայն
ընարկը սրբոց դասուց :

|| Եղայ և սուրբ մարմնոյն լրիս-
տոսի և պաշտելի արեանն . լիմն-
նալին և 'ի զգալիսս , անդեռոյ մը-
ասածութեամբ՝ աներեւոյթ սխա-

լանօք , անձառ իսաւարոյին ոյլան-
գակ խորհրդով :

(Պաղայ մեղայ և հոգւովս և
մարմնովս և մոօքս և ըանիւ և
գործով և գիտոթեամբ և ան-
գիտոթեամբ կամա և ակամաց :
Եւ ամենայն մամատվս երեք հարի ո
լութառն և Հինգ զօդուածովքս
երկոտառան անգամօքս . հինգ ըզ-
գայութեամբս : Աչօքս յարաս
հայելով , և զամնոյն գողեցկութի
նկարացն զննելով , և զմասթարան
տեսանելով : Ականջօքս չարին ունեն-
ցնելով , և ամենայն քաղցրա-
ձայնութեան : Ճոտուելոքս զմե-
զաց հոտն առնելով , և դանինուն
անուշահոտութիւնս : Քերանան
զհամագում քաղցրութիւնս Ա-
յսելով , և պիտառանե և զանօքս
անգիտութեամբ անուզակալում

մեղս շօշափիելով : Ոտիւքս յան
պատշաճ տեղիս գնալով :

Անեղայ աստուծոյ մեղայ և վեց
շարժմամբս ՚ի վեր հպարտութե,
՚ի վայր տրտմութեամբ : Յառաջ
յանդգնութե, յետուստ սրտմտու
թեամբ : Յաջ հոգեկան մեղօք,
ձախ՝ մարմնական մեղօք :

Անեղայ և տասն պատղամացն
աստուծոյ՝ յանձնառականին, և
հրաժարականին . չյանձնառականն
չեմ կատարեալ, և զհրաժարա
կանն եմ արարեալ :

Անեղուցեալ եմ աստուծոյ և հո
դեւորական կրիւքս, հասարակ ըզ
գայութեամբս և մոռքս . և ամենայն
շփոթմանց հետեւելով, և ամբո
խելով զիս՝ ՚ի յաստուածահաճոյ
հանդարտութենէն հեռացեալ եմ:
Եւ այսպէս խաւարամած լինելով

Եօթն մահու չափ մեղքը մոլորեալ
եմ. հպարտութեամբ, ամբարտա-
ւանութեամբ, ամբարհաւաճութբ,
գոռոզութբ, մնավիառութբ, փա-
ռտսիրութբ, պատուասիրութեամբ,
զգեստասիրութբ, պշնելով, անձ
նահաճելով, կեղծաւորելով, սուս
առաքինի ձեւանալով. զաղսթս 'ի
ցոյցս մարդկան առնելով, անարժու-
նութեամբ յեկեղեցի մտանելով, 'ի
խաչ և 'ի բուրիառ և յաւետարան
մերձենալով, և կարդալով:

Մեղայ աստուծոյ և թիւր խոս-
տովանելով, և զմեղս պատճառե-
լով, խեթիւ և ատելութեամբ և
անմաքուր վարոք և անսուրբ հո-
գւով զքրիստոս պատարագելով.
զաստուած հայր հայհոյելով, զոր-
դին աստուծոյ արհամարհելով, և
զսուրբ հոգին թշնամանելով, և

զանը արկանալին աստւած՝ 'ի բարկութիւն շարժելով՝ 'ի վերաց աշխարհի և մարդկան :

Ո՞չ որ յերեւելիս առապաշտ և աղօթող և պահեցող և 'ի ծածուկ թերահաւատ և ծով, և յամենայն բարեաց ունայն Յերեւելիս կուսան : և 'ի ծածուկ վարվաւուտ . յերեւելիս միք և 'ի ծածուկ թոյլ . յերեւելիս սուրբ . և 'ի ծածուկ պիղծ յերեւելիս որ բեկուն և 'ի ծածուկ ագահ . յերեւելիս ողջումած, և 'ի ծածուկ անուղորմ . յերեւելիս ողքատսէր և 'ի ծածուկ աղքատատեաց . յերեւելիս առտքինի, և 'ի ծածուկ ողիերդ . յերեւելիս գուլելի, և 'ի ծածուկ պարսաւելի :

Արդ՝ զո՞րս ասացից և կամ զո՞րս թուեցից, երբ ոչ եղայ և ոչ

թիւ : Մեղոցեալ եմ կարգիս
 լնանձնա ընդ արդարս համբելով
 և զայլս քամահելով, զտօնս սրբոց
 ոչ մէժարելով . և հայհոյութեամբ
 մեղոցեալ եմ աստուծոյ զժնուն
 միոյն ունիմ քահանայի և ոչ ըզ
 գ որժն . զօրինակն ունիմ և ոչ ըզ
 չշմսրտութիւնն . քանզի ամենայն
 անպատրաստութեամբ և անկար
 գութեամբ կալով զմահուն օրն և
 զանացառ դատաստանն աստուծոյ
 և զգմուխոց ահն և զարքայութեան
 սէրն մոռացայ կամապաշտութ .
 հակառակելով, ան հնազանդ լինե
 լով . 'ի հեզութենէ և 'ի խոնար
 հաթէ փախչելով, զծերսն չպատ
 ռելով, զհնողան չսիրելով, ստա
 հակութէ շրջելով, մեղոցեալ եմ
 Անեղայ աստուծոյ և բարկացո
 ղոթեամբ, ցամամբ, պատմու-

Ծեամբ, դադանաբար յարձակելով,
 և զեղսարս խաժանելով, կադ և
 կռիւ առնելով, և յիշոցք տալով,
 'ի չար կարծիս դատելով, խռով
 կալով, սուտ հաշտութիւն առնե-
 լով. և զհոդիս իմ կորուսանելով,
 և բարս գաղանի ունելով, և զան-
 քան անատունս անխնայ հարկանե-
 լով, 'ի մարդկան սիրոյն որոշելով,
 պառակումն առնելով, բանսար-
 կելով, խարդախելով, խորաման-
 կելով, երկմտելով, թերահաւա-
 տելով, բազում տրտունջ և նզովք
 հանելով, զուր և անիրաւ զրապար-
 տելով. քրթմանցելով, շոգմոդելով.
 Անդայ մեղայ մեղայ, և նախանձ
 ունելով, մախալով, դիմադորձելով,
 ոխակալութեամբ, ատելութեամբ,
 քինդուհանութեամբ, չարութեամբ,
 նենդելով, քամահելով, զարելով.

սուտ վկայելով, բանքասելով, ար
 համարհելով և զառաջնորդս եկե-
 ղեցւոյ և զվարդապետու և զծերս
 և զտղայս, և զայլոց իրաւն սուտ
 առնելով՝ և զիմ սուտն իրաւ,
 զայլոց փոքր մեղքն մեծ համարելով՝
 և զիմ բազումն ծածկելով, զայլոց
 շիւղն գերան կարծելով՝ և զիմ գե-
 րանն շիւղ, զայլոց բարին չար ա-
 սելով՝ և զիմ չարն բարի, զայլոց
 լոյսն խաւար տեսանելով՝ և զիմ
 խաւարն լոյս, զայլոց առաքինութիւն
 մարդահաճութիւն գատելով՝ և զիմ
 մարդահաճութիւն առաքինութիւն.
 և յանդուգն լինելով՝ 'ի մէջ բա-
 նից անկանելով, լրելով, 'ի խրա-
 տուց երես գարձուցանելով՝ և ա-
 ռաջի ծերոց լոռութե ոչ կալով,
 և հրամանաց և բանից ոց ոչ լսելով:
 Ուխտ գնելով և ոչ կատարելով

և անյուսութե՛ ՚ի լսորս տրտմութե՛
անկանելով. զպատուիրանս աստու-
ժոյ արհտմարհելով, սուբը գրոց
ունեն չդաելով. ՚ի սուբը հրեշտա-
կէն իմմէ չակնածելով, և ՚ի բա-
րեաց թափուք լինելով, ընդ չարսն
խնդալով, զւարեկամնն ատելով,
պթշնամիան չսիրելով. զատելիսն
առողջ ժոյ չատելով:

Ո՞թէ զորքանութիւնն ո՞րպէս
կարացից յայտ բերել որ բազում
են քան զաւաղ ժովու. քանզի
մեղւցեալ եմ աստուժոյ և ագա-
հութեամբ, արծաթասիրութե՛,
խալելով. ա ելի առնելով և պա-
կաս տալով, վաճառապէրելով.
կժելու: զաղու գողանալով.
յայտնի յակնակելով և զրկելով:
Աւ ելի ստանալով, աղօատին չո-
ւորմելով, առ օտարսն չզթալով:

զեղքարս չսիրելով, զկարօտեալմն
չդարմանելով, զհիւանդն չտեսա-
նելով, տկարին չսպասաւորելով.
զաղքատս արհամարհելով, զհա-
րուստն գովելով, յաջողելոցն ծա-
ռայելով, ունեւորացն սուտ հա-
ճութիւն առնելով, աշառելով, և
մարդահաճոյ լինելով։ Սուտ երդ-
ուելով, և զաստուած՝ 'ի բարկու-
թիւն շարժելով։

|| Եղայ մեղայ և քան զհող երկրի
ծանրագոյն մեղայ . քանզի մեղայ
աստուծոյ և որկրամոլութեամբ՝ 'ի
կերակուրս և յըմպելիս ցանկանալով,
աւելի առնլով՝ և անյագ ուտելով,
զորովայնս խճողելով, առանց ժամի
և ժամարձակի ճաշակելով, զպահսն
արհամարհելով, առանց մեծի հի-
ւանդութեան զդինին սիրելով, ըզ-
մարմնոյս դարմանն հոգալով, զորո-

վայնա սկաշտելով, և խաչին քրիս-
տոսի թշնամի անուանելով, և լու-
սաւորչին կանոնաց սևերես լինելով:

Ուղուցեալ եմ իմ սուրբ կար-
դիս՝ ծուլութեամբ և հեղդութք՝,
անժուժկալ լինելով, տղ իտանալով,
զուսումն ատելով, դատարկ կենա-
լով, զսուրբ գիրս ոչ կարդալով,
քնով դանդաղելով, և 'ի ժամա-
տեղն ժանրանալով, արթուն ոչ
կալով, և պատմութեան սրբոց միտ
ոչ դնելով, բազմախօսութիւն առ-
նելով, սաղմեսի ականջ ոչ դնելով,
և կամ ձեռագրբով յապաղելով,
յօրանընջելով, ձգտելով, ձանձրու-
նալով, յաստուծոյ ոչ երկնչելով.
'ի հրապարակ նստելով՝ շատախօս
լինելով, 'ի դատերս և 'ի ժաղըս
կտեաց հեշտանալով, և ժաղը
աժելով :

Անդայ աստուծոյ մեղայ մեղայ
 և պոռնկական խորհրդով, գիշու
 թեամբ, աղտեղութեամբ, բղջա
 խոհութեամբ, վավաշոտ ցանկու
 թեամբ, զանազան և զազիր խոր
 հըրդով, 'ի գիշերի և 'ի տունջեան
 պէս պէս կերպարանօք՝ քնով և
 արթնութեամբ, և արատ հայելով,
 կստակ երդելով, անամօթ լինելով,
 լըելով, ցոփ խօսելով, և տռվա
 կան մարմաշարժութեամբ զիտս
 աղտեղելով՝ առ իդականս և առ
 արուականս, առ անասնականն ա
 պականեալ խորհրդով մեղանցելով,
 և առ ամենայն մոլորական պատրանս
 երազական փորձութեանց, քնոյ և
 արթնութեան՝ որ 'ի ժամու և տա
 րաժամու անկեալ է 'ի վերայ տա
 ռապեալ հոգւոյս, զոր չարին յօ
 ժարութեամբ մեղուցեալ եմ այ:

Եւ արդ՝ ահա՛ յայտնեալ Հրա-
պարակեցի զորպիսութիւն մեղաց
իմոց առաջի տեառն, և ապաշաւել
զղջացեալ եմ յամենայնէ, և եկեալ
՚ի խնդիր թողութե սխալանաց իմոց:
Եւ գու հայր մեր և սուրբ տէր
հայցեա զգ թութիւնն աստուծոյ,
և շնորհեա քաւութիւն ինձ յաս-
տուծոյ՝ հրամանաւն զոր ունիս ՚ի
քրիստոսէ աստուծոյ. որում վառք
և գոհութիւն և այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից, ամեն:



Աղօթք արձակման՝ արարեալ մէ ծի
ըաբունապետին Գրիգորի :

Աղօրմեսցի քեզ մարդասէրն
աստուած, և թողութի շնորհեսցէ
ամենայն յանցանաց քոց՝ խոստովա-

նացելոցն և մոռացելոցն . և ես կար-
 դաւա քահանայական իշխանութե-
 և հրամանաւն ածային թէ՝ զոր
 արձակիցեք յերկրի՝ եղիցի արձա-
 կեալ յերկինս , նովին բանիւն ար-
 ձակեմ զքեզ յամենայն մասնակ-
 ցութենէ մեղաց քոց 'ի խորհրդոց
 'ի բանից և 'ի գործոց՝ յանուն հօր
 և որդւոյ և հոգւոյն սրբոյ : Եւ
 դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդս
 սուրբ եկեղեցւոյ , զի զոր ինչ դոր-
 ժիցես բարիս՝ եղիցի քեզ 'ի բա-
 րեգործութիւն և 'ի փառս հան-
 գերձեալ կենացն , ամէն :

Աղօթք դարձելոցն ՚ի զղջում
ապաշխարութեան .

Անսկիզբն աստուած և ան-
հասանելի՝ բաց զայս սրտի իմոյ
բանիւ գիտութեան քո՝ բաւական
լինիլ գոհանալ զանուանէ քու մմէ ,
գովել և փառաւորել զքեզ և ար-
ժանապէս դնալ ՚ի ճանապարհս . բո :

Դժանաւոր արդար՝ Երկոյնամուեա
առ իս բազմամեղս քոյով մարդա-
սիրութեամբդ . զի Եղկելի եմ մե-
զօք՝ զեղիսեալ անօրէնութեամբ և
զազիր գիշութեամբ զմարմինս իմ
ապականեցի : Որ Եիր յառաջ էա-
կանութեամբ աստուած ընդ հօր՝
ընդ մեզ հաճեցար բնոկիլ ընդ
հողեղինացս , և ընդ մարդկան ըըր-
ջեցար ընդ մեղաւորացս , թող տէր

զեղս իմ և թեթեւացն զժանրաւ
բեռնեալս՝ ժուլով հայցեմ ՚ի
քէն, զի ժամանակ է ապաշխաւ
րութեան :

Ի քէն հայցեմ ըազումողորմ տէր
աղբիւր կենաց՝ լուսաւորեած զացս
սրտի իմոյ լուսով դիտութեան քո :
Ընդ աշխարհի քրիստոս, ժագումն
անձաւելոյ լուսոյ, կեանք՝ որոց
սիրեն զքեր, կերակուր անսպառելի,
կենդանութիւն յաւիտենից :

Նըով հոգւոյդ սրբոյ հալեա
զայտումն ձմեռնացեալս սրտի իմոյ,
որ ձուլեալ է եղկելի գործովք ա
նօրէնութեան : Ուղլեած քո նժային
զօրութեամբդ զանուղայ խոր
հուրդս իմ չար ուղեկանին աստի
կենացս :

Ճրագ ճշմարտութեան և ճառա
գայթատու մերկեած յինէն զխաւար

մթացեալ մեղացս : Զեղկելիս մեզօք յիշեած քո աստուածութեամբդ յահագին աւուրն յայնմիկ ահեղ մեծի դատաստանին :

Աւէկոծելոց նաւահանգիստ՝ և լիութիւն ունայնացելոցս յարդարութենէ և ունողիս զանսրէն և թիչար գործովք : Ի չարիս չարչարեալէ անձն իմ , զինչ արարից մեղուել անձամբս . պէս պէս ախտիւք ուշուծեցայ յանառակութեան . զրկեցայ ՚ի հայրենական լուսոյն . ջնջեցի զձեռագիր որդէգրութեան կենաց . ջեռուցի զհուը յաւիտենական :

Սուրբ սրսիւ կարգամ առ քեզ ամենասուրբդ աստուած . վատնգելոյս օգնական , վիրաւորելոյս բռժիշկ , տեղի տարակուսելոյս . կորուսելոյս ինդրող , մոլորելոյս և գերելոյս գարճուցիչ , ապաւէն ա-

մենեցուն որք կարդան առ քեզ :
Տուր տառապելոյս և տարակութելոյս
գերելոյս 'ի սատանայէ՝ զմեծ քո
զողորմութիւն :

Ահա հասեալ եմ 'ի գուռն
մահու չարաչար գրբովք իմովք ,
զահս իմ 'ի վեր համբառնամ առ
բարձրեալ տէրդ և բարերար .
Հայցեմ 'ի քէն՝ բաց զգուռն ողբը-
մութեան մեղուցեալ հոգւոյ իմոյ :
որպէս բացեր աւաղակին զգուռն
գրախտին քո . և մի ամօթալից
գարձուցաներ զիս 'ի քո առատ ո-
ղըրմութենէ , զի գին եմ սուբ-
արեան քո . յիշեալ զիս և ողորմեա-
ինձ սատուած :

Որ անեղ և անսկիզբն ես՝ անշո-
տեղծ և արարից ամենան արարա-
ծոց . որ ոչ աշխարհս տանը զքեզ
կարէ , և ոչ երկիրք բաւանդակել

կարեն . ՚ի վեր ես քան զերկինս և
անցաւ քան զժադս . Երեւելիք և
աներեւոյթք բովանդակեալ են ա-
ռաջի քո :

Դու տիրես ամենեցուն և հրա-
մանաւ քո կառավարին ամենայն ա-
րարածք , Դու աղքատացուցանես ,
և դու մեծացուցանես . դու սպա-
նանես հարկանես և բժշկես ; Դու
ես աստուած իմ և փրկիչ վտան-
գելոյս ՚ի սատանայէ , առողջացու-
ցիչ հիւանդիս մեղօք , ընդունող
աղօթիչ և կատարիչ խնդրուածաց .
նայեաւ տէր ՚ի պաղատանս իմ , և
ընկած զիս մարդասիրութեամբ . քո :

Ո՞ի՞ բարկութեամբ . քո խրատեր
զիս , և մի սրտմտութեամբ . քո
յանդիմաներ զիս . զի դու ես տէր
և արարիչ , հայր և ստեղծիչ . և ես
առ ովլ երթիցեմ . զի օգնութիւն

իմ 'ի քէն է , Հայեաց 'ի ուաղա~
տանս իմ , և ընկալ զիս մարդասի~
բութեամբ քո . զի քեզ մեղայ և
զքեզ աղացեմ և զքեզ խոս~
տովանիմ :

Ուղայ յերկինս և առաջի քո .
մի ընդ դատեալսն տանջեր զիս , և
մի ընդ դատապարտեալսն պատու~
հասեր . այլ ընդ կամարաբս կամաց
քոց ընկացիս և ընդ պահօղս պատ~
ուիրանաց քոց պահեա զիս . զի թէ
առանց ներելց զբազում յանցանա
իմ . քննես , ապա ընդունայն է ինձ
խոստումն յարութեան . և հուր
գեհենին է ինձ ժառանգութիւն .
և եթէ զդատարկաբանութիւնս իմ
և զանդեպ զայլ անօրէնութիւնս
իմ ինդրեսցես յինեն . ապա երա~
նեմ չեղելոցն յրութիւնէ : Հայեա~
տէր 'ի պաղատանս իմ և ընկալ

զիս մարդասիրութեամբ գո :


Ողորմեած ինձ որպէս քանանաց-
ւոյն, որպէս պղոռնկին . որպէս մաք-
սուռին . և գթա յիս որպէս յու-
նառակ որդին . և որպէս աւազա-
կին՝ շնորհեած բազում՝ յանցանաց
իմոց զթողութիւն . ընկալ ոչիս որ-
պէս զհայհոյիցսն և զհուլածիցսն .
փորատեցն զխառար մեղոց յաջաց
իմոց :

Ի՞սկ զայս իմ զլցեալս երկնային
բանկութեամբ՝ երկնային լուսովդ .
և բաշկեած զիիրաւորեալ լեզուս իմ
՚ի բամբասանաց, Արեա զսիրտ իմ
՚ի չար և ՚ի ափողոք խորհրդոց, վասն
զի քեզ ցանկամ տեառնդ իմոց
բարերութիւն . և բազմագութ իմոց
արարիդ :

Ո՞ի՞ յաւիտենական ամբովի ա-
մաչեցուցաներ զիս . և մի ահեղ

դատաստանաւն դողացուցաներ :
Մի տիեզերական հրապարակաւն
զիս յանդիմաներ . և մի աններելի
տանջանացն մատներ :

Ո՞ի սոսկալի հրովար պատռհա-
սեր . այլ վրկեա զիս 'ի հրացեալ
հնոցէն , 'ի հրահոսեալ գետոցն և
յորդանցն չարաթունից , 'ի հանա-
պազորդ նեղութենէն . և 'ի կրծտել
ատամանցն : Եւ բնակեցն զիս ընդ-
կամարարս կամաց քոց՝ յանանցական
կեանսն , Զի ընդ նոսին արժանի ե-
ղեց գոհանաւով վառաւորել զհայը
և զորդի և զսուբբ հոգիդ ,
ամէն :



Աղօթք զօրաւոր որբոյն Գորիդորի Նա-
ըեկացւոյ հրեշտակական վարժվապետի ,
վասն արեանն տեառն ,

Գլուխ . ՆԵ .

Արեգակն արդար , Զառագալթ
օրհնեալ . լուսոյ կերպարան . փափաք
անձկութեան . բարձրեալ անքննին .
զօրեղ անսղատում . բարւոյ բերկ-
րութիւն . յուսոյ տեսութիւն . գո-
վեալ երկնաւոր . թագաւոր փա-
ռաց . քրիստոս արարէց . խոստո-
վանեալ կենք : Եւ արդ՝ զթերու-
թիւն մրիպանաց բազմասիսալ ձայնի
եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ ,
մատուցեալ յաղերս հաճութեան
հօր քում բարձրելոյ : Որ վասն իմ
՚ի փորձ եկիր անիժից , կերպարա-
նեալ զիմ նմանութիւն՝ ամենեւին

կենաց օրհնուի , վերնոց և ներքնոց
բարեխնամօղ տեսուց համայնից :
Զի թէ յանձն առեր մեռանիլ
վասն իմ՝ աստուած և տէրդ բո-
լորեցուն , որչափ հաճեսցիս առա-
ւել և այժմ վտանգաւորս կրից
կարեկցել , ընդ իմ պարտաւորիս
միշտ աղօթելով ազգակցաւ մարմ
նոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համա-
պատիւդ քո հայր :

Եւ վասն արեանդ պատուականի
միշտ մատուցելոյ 'ի հաճութիւն
կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք
մեղուցեալ դատապարտելոյս . թող-
ցին պարտիքն . ապաքինեսցի՛ ամօթն .
մոռասցին պատկառանքն . բարե-
գործեսցին դատակնիքն . սատակես-
ցին որդունքն . վերասցի՛ լայն . հան-
դարտեսցէ կրծումն ատամանցն .
սպառեսցին ողբքն . հատցին ար-

տասուքն . մերժեսցի՝ սուգն . հաւ
լածեսցի՝ խաւարն . վատնեսցի՝ հուրն
սաստկութեան . հերքեսցին տանջաւ
նարանքն բազմօրինակք :

Եկեսցեն գթութիւնք կամողիդ
և պարգեւողիդ կենաց ամենից .
Ժագեսցի՝ լոյսդ . արագեսցէ՛ փըր
կութիւնդ . հասցէ՛ օդնութիւնդ .
Ժամանեացէ՛ այցելութիւնդ . կան
խեսցէ՛ ցողդ ողորմութեան . յաւ
ռաջեսցէ՛ արբուսցէ՛ զանդաստանս
պասքեալ՝ անկեալ ոսկերացս թըշ
ուառութեամբ ՚ի վիհն մահու .
Ժաղկեցուսցէ՛ պտղաըերեսցէ՛ բաւ
ժակդ երկնաւոր արեան կենարա
րիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լու
սոյ . որ անժախապէս միշտ պատաւ
բագի յիշատակ կենաց փրկութեան
հոգւոց ննջեցելոց : Զի ամենայնիւ
մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝

շնորհօք քո գթած՝ ՚ի .քեզ զօրա
ցեալ քեւ նորոգեցայց , զատեալ
՚ի մեղաց անմահ կենդանութեամբ
՚ի յարութեն արդարոց , հօր քում
օրհնեցեալ Ընդ որում քեզ փառք,
և հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն
վոյելչական գոհութեամբ , այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից ,
ամեն :

Աշօթք զօրաւոր , Նորին սրբոյն Գրիգորի .

Գլուխ . Զթ .

Աստուած և տէր . կեանք և
արարիչ . ողորմած . գթած . լոյս .
Երկայնամիտ . անօխակալ . մարդա-
սէր . ամենագութ .. պարգևատու .
փրկիչ . օրհնեալ . գովեալ . բարե-

բանեալ : Դարան ամըութեան .
պատմպարան վստահութեան . ա
ռանց նենգութեան բարի . առանց
խաւարի ճառագայթ . քաւիչ մե
ղաց . ողջացուցիչ վիրաց . անհա
սպնելեաց հնարք . անմատչելեաց
հպաւոր . անյուսութեան ելք . ա
նուն քո խոստովանեալ աստուծոյ
որդի . և հօր քո ընդ քեզ հզօրի
և ահաւորի , և հոգւոյդ ամենա
կալի և ընդ քեզ երկրպագելոյ
փառք և պաշտօն գոհաբանութեան
յաւիտեանս , ամէն :



ԱԴՈՒԹՅ

Ի ՎԵՐԱՅ Ի ՏՐԱՔԱՆ ՉԻԵՐ
ԱԻՈՒՅՑ ՇԱԲԱԹՈՒ
ԵՒ ՆԱԽ

ԿԻՐԱԿԻ ԱՏՈՒՐ

Սաղմոս ապաշխարութեան , ԳԼ . Հ .

Տէր՝ մի սրտմտութեամբ քո՛վ
յանդիմանէր զիս . և մի :

Հարական ապաշխարութեան .

առ . Հայր ըազումողորմ
խոստովանիմ առ քեզ որպէս զաւ
նառակ որդին . թող ինձ զմեղս
իմ և ողորմեա :

Տէր՝ որ գթացար 'ի կինն քանանացի -
գթա և յիս 'ի մեղաւորս և ողորմեա :
Տէր՝ որ դարձուցեր զմաքսաւորն 'ի
դիտութիւն Ճշմարտութե . դարձն
և զիս զմոլորեալս և ողորմեա :

Աստուած բազումողորմ . խը-
նայեա յարարածս քո հայր ամե-
նակալ և ողորմեա :

Արեգակն արդարութեան . ժադեան
'ի հոգիս մեր պլոյս Ճշմարտութեան
և ողորմեա :

Տներ մեզ տէր զիսաղաղութիւն . և
փրկեա 'ի նեղաց մերոց հոգիդ
Ճշմարտութեան և ողորմեա :

Ի նեղութեան իմում օգնեա
իւձ տէր . որպէս երբեմն յովիա-
նու և ողորմեա :

Ի յանցանաց իմոց մաքրեա զիս տէր .
որպէս երբեմն զմաքսաւորն և ողոր .
Ի նենգաւոր շրթանց փրկեա վիս

տէր . և յարենէ ապրեցն և ողորմեաւ :

Օ զջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո քրիստոս . թողինձ զմելս իմ որպէս երբեմն ըգապոռնկին . որ միայնդ ես բազմագու : Անկանիմ առաջի քո քրիստոս . որ հովիւդ ես բանաւոր հոտի . խընդրեաւ և զլս զմրցրեալս . որ միայնդ : Օ մելս իմ ցուցից քեզ քրիստոս . որ բժիշկդ ես հոգոց և տէր կենաց բժշկեաւ և զիմ զհիւանդութիւնս .

որ միայնդ ես բազմագութ :


Վ տանգիմ ՚ի բազմութենէ մերաց իմոց . աստուած խաղաղութեան օգնեաւ ինձ :

Ալէկոֆիմ հողմով անօրէնութէ իմոյ . թագաւոր խաղաղութեան օգնեաւ ինձ :

Ի խորս մեղաց ծովու տարաբերել ծփիմ . նաւապետ բարի փըկեաւ զիս :

թիւնս իմ։ Ողորմեան ինձ աժ։
Ի լսել զձայն փողոյն յահագին
աւուըն։ յորժամ հարկանէ հրեշ-
տակապ' տն՝ և կոչէ ՚ի դատաստան
ողորմեան ինձ աստուած։

Ի նստիւ քո յատենի դատաւոր ա-
հեղ։ յորժամ առնես հրախրձու-
թեամբ զքննութի որդւոց մարդ-
կան։ ողորմեան ինձ աստուած։



Ի ԽՈՐՈՅ ՍԲՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

ԳԼՈՒԽ ՃԵ

Քրիստոս աստուած, անուն
ահաւոր։ մեծութեան տեսակ։ ան-
քըննին բարձրութեան պատկեր։
անսահման զօրութիւն։ կերպարան

վրկութեան լուսոյ , պաշտպան կեց
 նաց , դուռն արքայութեան՝ վերա
 նում հանգստեանն . Ճանապարհ
 հանգարտութեան . ապաւինութիւն
 նորոդ և անտխրական երանութեան .
 ամենակալ ինքնիշխանութիւն՝ ըրլոր
 եականութեան . օրհնութեան կո-
 չումն . աւետեաց ձայն . բերկրու-
 թեան բարբառ . անմահութեան
 դեղ . որդի անձառ աստուժոյ միոյ
 Ար ինձ անհնարին է , քեզ գիւրին
 է . որ ինձ անհասն է , քեզ սահ-
 մանեալ է . որ ինձ անանցն է , քեզ
 հպաւոր է . որ եղկելոյս ինձ ժաժ-
 կեցեալն է , քումդ երանութեան
 մերձաւոր է . որ ինձ անկարելին է ,
 քեզ կատարեալ է . որ ինձ անկը-
 ռելին է , քումդ անձառութեան
 չափեալ է . որ ինձ յուսահատու-
 թեանն է , քեզ սիօփանաց է . որ

ինձ անըժշկականն է , քեզ անվը
 տանգելին է . որ ինձ հեծութեն է
 քեզ խնդութեան է . որ ինձ ծա-
 նունք են , քեզ թեթեւագոյնք են
 որ ինձ եղծեալն է , քումդ զօրե-
 ղութեան գրեցեալ է . որ ինձ կո-
 րուսեալն է , քեզ ըմբռնեալ է . որ
 ինձ անձառն է , քեզ համարեալ է .
 որ ինձ մռայլն է , քեզ ձառագաթ
 է . որ ինձ անթիւն է , օր հնեալդ
 քում ձեռին բովանդակեալ է . որ
 ինձ սոսկալին է , քեզ հեշտալի է .
 որ ինձ փախչելին է , քեզ վանելի է .
 որ ինձ անմատոլցն է , քեզ դիւրա-
 հերքելի է . որ ինձ մահաբերն է ,
 քումդ էականութեան զօրութեան
 ընդ ոչ գոյսն համարեալ է ,


Այլ դու ողբրմած աստուած
 բոլորից տէր յիսուս քրիստոս . և
 այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ

գթասցիս վասն անուան փառաց
 մեծութեան հօր քոյ օր հնելոյ , վասն
 կամաց գթութե ոգւոյդ քոյ սրբոյ ,
 տես 'ի տաժանաւորս կըից յանդի-
 մանական յայտնութի , և 'ի խրոց
 սրտիս ինքնամատոյց գատախազու-
 թիւն . նայեա՛ 'ի բնութեանս ա-
 մենապատաղ խակութիւն , և պար-
 գեւեա՛ բժշկութիւն վիրացս , և
 հնարաւորութիւն կորստեանս . զեր-
 ժումն բազմամասնեայ մահուս , և
 շափիղ կենաց ապականելոյս . նորո-
 գութիւն եղծմանս , և մուտք յու-
 սյ ամբարշտելոյս . Եթէ ես զաննը-
 մանն ինձ կամս ցուցի . որչափ ա-
 ռաւել դու զբնուորականսդ քո
 զընտանի բարերարութիւնսդ . եթէ
 'ի վշոց պտուղ ընծայեցաւ քաղց-
 րութեան , որչափ առաւել 'ի
 ծառոյդ կենաց ճաշակ տնմահուե .

Եթէ ես իմոց ատելեաց ողորմութե-
մաղթեցի , դու քոյոյս զիարդ ոչ
կըկին մատուցես հզօր՝ յաննուազդ
առատութենէ :

Արդ՝ տես 'ի քոյդ մեծութիւն
բարձրեալ , նայեցեալ 'ի յիմս վու
քըրկութիւն . ընկալ դսակաւ խոս-
տովանութիւնս անհամար մեղացս
որ զբնաւն համայն տեսանես . և
որպէս զվիմին գթել ոչ գրեցեր , և
զաւազոյս վոքու սասանել մի հա-
մարեսցիս . և իբրեւ զդաւթին՝ ընդ-
մեղայն ասել իսկոյն անցուցեր զպա-
տիժ պարտուցն , և առ իմ ձայնիս
հեծութիւն՝ զնոյն գործեսցես եր-
կայնմատութիւն . որ տաս ամենեցուն
առատապէս անաշառութք՝ որպէս
յաղթօղ բարի բազմիմաստ . և ոչ
նախատես զյետնեալ ստրուկս՝ որ-
պէս ողորմաժ և ամենաստեղծ .

ստացի՞ր վերստին , և մի կորուսաներ
զբուժեալս արեամբ քո , և զբու-
ժեալս ստեամբ քո՝ գըթած :
Օ, ի քո՞ւ է փրկութիւն , և 'ի քէն է
քաւութիւն , և քեզ վայելէ փառք
յամենայնի յաւիտեանս , ամէն :



Ալօթք առ ձայըն է ըկնաւոր , Յովհան-
նու գաւնեցւոյ աստցեալ :

Յաւիտենից աստուած և ա-
րարիչ ըուլորից , որ ամենակարօղ
զօրութեամբ քով՝ 'ի սկզբանէ ա-
րարեր զերկինս և զերկիր . յայսմ
աւուր գոյացուցեր զլոյս հրամանաւ
քով , և որոշեցեր զլոյսն 'ի խաւարէն :
Ահա խաւարեալս աղգի աղգի
անօրէնութեամբ , աղաչեմ զքեզ

տէր իմ և աստուած իմ՝ բարերար
և բազումողորմ, ժագեան առ իս
զողորմութեան զլոյս քո, և մերժեա
յինէն զխաւարային խրհուրդս չա-
րիս, որով անկեալ կործանեցա-
յանդունդս կորստեան, և կամ 'ի
տարակուսի :

Ո՞ր յամենայնի կարող ես և հզօր,
լոյս անստուեր, աղբիւր անսպառ
բարեաց, կենդանութեան պարգե-
ւատու, ցուացո՛յ յիս զփայլումն սըր-
բարար շնորհաց հոգւոյդ քո սրբոյ,
և մաքրեան զսիրոտ իմ և զհոգի 'ի
մթութենէ մեղաց իմոց և յամենայն
աղտեղութենէ, որով շլացեալ ոչ
կարեմ' հայիլ 'ի լոյս աստուածային
պատուիրանաց քոց, և գնալ 'ի
ձանապարհս արդարութեան :

Ա մենահայեաց ակն և աննիրհելի
պահապան նորոյս իսրայէլի, որ

նստիս 'ի քըոբէս և հայիս յան-
դունդս , նայեաց աչօք քաղցրու-
թեան յապիկար ծառայս քո , որ
խորասուզեալ յանդունդս մեղաց
չունիմ կար և զօրութիւն ելանել
ինքնին , և չիք իմ ձեռնտու և օգ-
նական ազատել զիս յանհնարին
տարակուսանացս , այլ դու անար-
գամեծար տէր՝ լեր ինձ ս'յցելու և
պաշտպան , և զերծո զիս 'ի խորոց
ասոի չարեացս ամբաւից աննահան-
ջելի հրամանաւ քով . զի չիք ինչ
որ արդելու կարիցէ զամենակարօղ
զօրութիւն քո :

Աղաջեմ զքեզ ողորմած՝ առա-
քեա առ իս զհողի աստուածութե-
քո , որ շրջելով 'ի վերայ ջուրց կեն-
դանագործէր զարսրածս քո , զի
ծննդաբեր արացէ զամլութիւն
մոտաց իմոց 'ի հաճոյական ըանից

մաղթանս յընդունելութիւն կամաց
բարձրելոյդ . զի ես ինձէն առանց
նպաստից նորին՝ զոր ինչ արժան է
հայցել՝ ոչ գիտեմ :

Օ ի նա որ քննէ զամենայն և
զխորս աստուծոյ , գիտէ նա և ըզ
պէտս մեր և զկարիս առաւել քան
զոր ինդրեմք և իմանամք , և գթա-
ցեալ 'ի տկարութիւնս մեր ուսու-
ցանէ մեղ զնոսին հայցել հաւա-
տով , և գտանել առ 'ի քէն հան-
գերձ թողութեամք մեղաց մերոց :

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց
բարեբանեալ՝ որ ոչ կացի յուխտին
իմում՝ զոր ուխտեցի քեղ յաւուրն
փրկութեան , և ոչ զգուշացայ կալ
'ի ճանապարհս օրինաց քոց . այւ
իշխանին մոլորութեան անսացեալ
խրատու՝ զառածեցայ յերկնագնաց
պողոտայէդ՝ 'ի փշայեղց մացառա

Աղաց և մահու . այլ դու խնամակալ որ ոչ ձանձրանաս 'ի բարերարելոյ , և ոչ յագիս յողորմածութեան , հոգւով պետութեան քո հաստատեա զիս 'ի պատուիրանս քո անդրդուելի՝ ուղղել վերստին զգնացս ոտից իմոց առ տուից կենաց .

Արդ՝ դու կարող և մարդասէր ,
որ յառաջ քան զլինելութիւն
երկնի և երկրի պատրաստեցեր զար-
քայութիւնդ 'ի ժառանգութիւն
սրբոց քոց , սրբեա և զիս յամենայն
անօրէնութենէ իմմէ , և արժանա-
ւորեա ընդ նոսին յարքայութեան
քում յերկինս , գոհութեամբ փա-
ռաւորել զամենազօր տէրութիւնդ
յաւիտեանս յաւիտենից ,
ամէն :

ԹՐԱՎԵՐ ԱՅՆ ԹՐԱՎԵՐ ԹՐԱՎԵՐ ԱՅՆ ԹՐԱՎԵՐ ԹՐԱՎԵՐ

ԵՐԿՐԱԲԹԻ ԱՒՈՒԲ

Ս-Դ! Երանի՛ ում թողութիւն
եղեւ մեղաց : ԳԼ. Հա :

Հարուի . ակ . Ծով կենցաղոյս
հանապաղ զիս ալէկոծէ :

Ուրբոկեալ ալիք թշնամին ինձ
յարուցանէ :

Կաւապետ բարի՝ լեր անձին իմոյ
ապաւէն :

ՄԵրձ եմ յընկղմիլ օգնեան ինձ
նաւ սապետ բարի . քանզի ժանրա-
ցան 'ի վերայ իմ բեռ ինք մեղաց :
Աստուած յօգնել ինձ փութան
քանզի խորք չարհաց ընկղմեն զիս
յանդունդս . այլ դունաւապետ լեր
և ինձ ձեռնտու :

Փրկեաւ 'ի վտանգէ զնաւաբեկս 'ի
յալեաց ծովէ . քանզի կորնչիմ 'ի
մեղաց անօրէնութեան իմոյ :

Աղաչեմ զքեղ տէր պարգևեաւ
ինձ ապաշխարութեամբ լուանաւ
զմեղս իմ և ողորմեաւ :

Օ արտասուս իմ և զհառաչանս
սրտի իմոյ . մարդասիրութեամբդ
քո ընկալ տէր և ողորմեաւ :

Ուերձեսցին խնդրուածք իմ առա
ջի քո տէր . բարերարութեամբդ
քո խնայեաւ յիս և ողորմեաւ :

Աղաչեմ զքեղ հայր Երկնաւոր,
մի դարձուցաներ զերեսս քո յինէն .
զի նեղեալ եմ ես վաղփաղակի
լուր ինձ տէր :

Ուողորեալ անձն իմ անօրէնութը .
մի կորուսաներ զիս տէր ըստ անօ
րէնութեան իմոյ . որ խնդրող ես
մողորեալ ոչխարիս :

Մանրացեալ մեղօք ընկղմի անձն
իմ. ընկս' զիս որպէս երբեմն ըզ
պէտրոս . որ ծփիմս ալէ կոծեալ
յանցանօք :

Մեղայ տէր քազումողըմ աճ
մեղայ ողորմեա :

Մեղայ տէր և անկանիմ առաջի
քո . մեղայ ողորմեա :


Մեղայ տէր խռստովանիմ զյանցանս
իմ. մեղայ ողորմեա :

Քիւնս իմ. || **Մեղայ** քեզ տէր.
քաւեա զիս :

Մեղաք անօլինեցաք ամենեքեան .
իչ պահեցաք զպատուիրանս քո .

մեղայ քեզ տէր . քաւեա զիս :

Դարձիր տէր 'ի քարկութենէ քում
մէ . անցն 'ի մէնջ զցասումն քո .
մեղայ քեզ տէր . քաւեա զիս :



Թագաւորք ապաշխարութեան :

Լուր մեղ աստուած փրկիչ
մեր և կեցն զմեղ՝ որ յամենայնի
կարօղդ ես :

Լուր մեղ աստուած փրկիչ մեր .
յոյս ամենայն ծագաց երկընի . և որ
'ի ծով հեռի :

Ո պատրաստէ զլերինս զօրութե
իւրով . և զգեցեալ է զօրութիւն .
և կեցն զմեղ որ յունի կարօղդ ես .
Լուր աղաջանաց մերոց տէր մար-
դասէր և գթա՛ 'ի մեղ :

Մի զիս անտես առներ . այլ
օգնեա՛ ինձ մարդասէր :

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց
և զհոգի քո աբ մի համեր յինէն .
Այլ տուր ինձ զցնթութիւն փր-
կութեան . և հոգւով պետութե

բո . Հաստատեա զիս . այլ օդնեա :
 Արի անտես առներ զիս՝ տէր ամ-
 փրկիչ իմ . այլ շնորհեա ինձ թո-
 ղութիւն բազմագութ մարդասէր
 և կեցն :

Երկինք և երկիր գոհանան ըզ-
 քէն տէր արարածք ամենայն քեզ
 Երկիրպագանեն . և հրեշտակ ՚ի
 բարձունս աղաղակեն և ասէն : ո-
 զորմեա դու ստեղծեր մի կորու-
 սաներ :

Երկինք Երկնից , ջուրք որ ՚ի վերոյ
 քան զերկինս օրհնեցէք զանուն
 տեսաւն :

Օ ՚ի նա ասաց և եղեն . հրամայեաց
 և հաստատեցան . և հրեշտակ ՚ի
 բարձունս աղաղակեն և ասեն . ո-
 զորմեա դու ստեղծեր մի կորու-
 սաներ :

Երկինք և երկիր հանապաղ զբեզ

գովեն . Թագաւոր փառաց՝ սերոբէք
և քերօբէք ’ի խոնարհ ունելով ըզ-
դէմս իւրեանց . և միաձայն բար-
բառովն աղաղակեն և ասեն .

սուրբ սուրբ սուրբ՝ տէք
զօրութեանց .



Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ
ԽՈՎՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԺՈՅ
ԳԼՈՒԽ ԶԱ .

Ինդ աստուածածնին մաղթու-
նաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշ-
տակացն լուսակերպից զաղերս հայց-
ուածոց , որ վասն իմ գուեն ա-
ռանց լուելու հանապազորդեան ար-
գահատութեամբ մաքուր բերանոց
ընկալ բարեգութ , Ուժ են բարիք

բարեգործեալք ՚ի բարերարեց՝
անկիրթք չարեաց , հաստեալք
յամէնիշան հրամանաց էիդ . զօ-
րութիւնք հզօրք՝ ակնարկութեան
բարձրելոյդ , սուրբք , մաքրուք ,
անարատք , օրհնեալք , վաելչա-
կանք , յաղթօղք և անպարտելիք .
և ըստ ընթացից տեսւթեան մոաց
արագունք :

Որք և պաղակորոյս տնկոյ թը-
զենւոյն եռամեանն դատարկութք ,
որ զբնաւ յաւիտեանս պարունակէ
ժամանակն , զանցեալն ընդներկալիս
և ընդ ապառնւոյն՝ յամայլը յամ-
րութեամըն յերկարածգելոյ . յայգի
աշխարչիս արմատացելոյ , սին սա-
զարթիւն պաճռւճելոյ՝ զրկեալ ՚ի
պաղց , որ է ճշգրիտ պատկեր
թշուառ մարդկութեանս , սորա-
բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլև իւ-

համակալք . որ գեգերին հանողազ
 առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկ
 ցելով , բարեմսնութեանն մեր
 սպասեն . և յաւիտենական կեն
 դանութեամբ վիրկութեան մեր ա
 ղթեն՝ զայս բան տակով . զգործա
 ձեռաց քոց մի անտես առներ .
 ճանզի արդարեւ մեր են այս աղաւ
 չանք 'ի բարերարեդ աստուծոյ վասն
 մեր կարգեալ առ նոսա . զի՞ նոքա
 բանիւ են ստեղծեալ , և մեք ձեւ
 ոօք ներդորժեալ . Ուք և գոլց
 են ընդ միանիդ՝ վկայք սոսկալի
 գատաստանին հատուցման . Ճամար
 տաբան գատախազք յանցաւորութեան երկրայնոցս , յահաւորին ա
 տենի՝ յայտնիք իրաւամբք զմա
 տակարարութիւնն՝ որ առմեզ . որ
 և անտանօր կարեկցեն աղդեալ հա
 ռաջմամք զմշտանուերն նուագ


Ճայնի , ողորմեա` դու ստեղծեր մի
կորուսաներ :

Արդ ընդ գոհաբանութեան
Ճայնիցն խնդրուածոց՝ անմահակա-
նացն վեհից և 'ի մեք հեծութիւնն
հոտոտեսցիս՝ բնաւից արարից , որ
յաղթես գթութեամբդ քո վերնոցն
և ստորնայնցո . քանզի քո է բա-
րերարելդ առ մեզ և առ նոսին :
Արդ վասն բարեզարդութեան ա-
նախտականացն , հրաշատեսիլ հրա-
կերպիցն , անշաղախ մաքրոցն , ան-
մեղիցն , բոցանիւթիցն , հոդեղի-
նացն , և անվանելեացն . ամէնա-
չեցուն առաւելութբ ՚ի բարձրն
ընտրականութիւն գերափայլ լա-
ճախ գիտութեամբ անցուրտ ջեր-
մութեամբ ջեռուցանօլք ինքնա-
բուն տապով աստուածսիրութե
ըստ ինքեանց զմերս սառնասեր սըր-

տիցս անբորբոք շիջումն , այրիւ
անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբում
սեղանիս՝ որ ՚ի խորանիս , առանց
նիրհելոյ և դանդաղանաց սպասել
հրամանաց երանականաց կեցուցիչ
կամաց ամենաստեղծիդ . քրովեւէօ-
րէն առաքինութեամբ . յաստուած
միացեալք անբաժանելի : Ուրք երկա-
նաւոր պետութիւնք են մեծք , և
զինուորութիւնք անբիծք ահաւորք .
Երկնաւորիդ աստուծոյ ազատազ-
նեայ սկաշտօնեայք ՚ի յամպըյդ լու-
սոյ՝ ցոլք նշուղից :

Ուրովք և ինձ մեղաւորիս հողե-
ղինի մարդասիրեսցես ողորմել յա .
առաջանօք իմոյն հրեշտակի , դար-
ձուցանելով զիս տէր՝ ՚ի բարիդ . քո
հետս լուսոյ . զի զաւանդ հոգւոյս
իմ պաշտպանութեան , զոր հա-
ւատացեք նմին տեսչութեան , զըն-

կալեալն 'ի .քէն 'ի կենցաղ աստեաց
 ուրախութեամբ արտիւ յիս բերկ
 ըեալ : անմեղադրելի առ 'ի .քէն
 օրհնեալ խնդալից դիմաց զուար
 չութեամբ՝ քեզ արքայ բարձրու
 թեան փառաց անհասից 'ի խրախ
 ձանս կենդանախումբս բերկրեցե
 լոցն պարուց մատուցեալ ըստայե
 ցուսցէ՝ գովեալ ողորմած : Եւ քեզ
 անքննին ընդ հոր անհասի խուակ
 ցութեամբ հոգւոյդ անձառի
 վայելէ փառք պատիւ և երկրողա
 գութիւն, յաւիտեանս յաւիտենից,
 ամէն :



Ազօթք առ ամենասուրբ Երրորդու-
թիւնն . Յուհաննու գաւանեցւոյ
ասացեալ .

Բարերար և ամենակալ յոյս
ապաւինի ամենայն տարակումելոց
տէր իմ և ասոռուած իմ , արարից
էից յանէից և նախուինս մօղ ըովու-
րից . որ յայսմ առուր հրամանաւ
քով բաժանեցեր զբազմութիւն
ջուրց , զքաղցունսն ամբարձեր 'ի
վեր յամապս տեղալ 'ի վերալ երկրի .
'ի բղիսէլ զալբիւրս և խաղացու-
ցանել զգետս , և ղաղտաղտինս
թողէր յերկիր ստորին անսահման
իմաստութք . և արկեր անջրպետ
'ի մէջ նոցա լոյժ և հոսանուտ ըզ-
հաստատութիւնն օդոյ , զի փոխա-
դարձ տուրեւառութեամբ ջուրդ
մշտնջենապէս հաղորդիլ կաքոսցեն

ընդ միմեանս վերինքն և ստորինք
յօդուտ համօրէն տիեզերաց , և 'ի
պէտս աղբի մարդկան՝ զոր հան-
դերձեալ էիր արարչագործել 'ի
վայելումն երանաւէտ փառաց
աստուածութեանդ քո :

Արդ՝ ես որ կամ իշրե զջուր
ստորին աղտեղեալ 'ի ճահիճս զա-
նազան մեղաց գարշութեամբ , և
ապականեալ բազմարինակ անօրէ-
նութեամբ , առ քեզ ոլաղատիմ
արարից իմ և յոյս : բարեգութ
կամօքդ վերառեալ զիտս իմ 'ի
ստորէ՝ մաքրագործեա որպէս ըզ-
ջուրսն ամպոց յամենայն աղտեղու-
թեանց քոյովդ սրբութեամբ . և
զդառնութիւն նեխութեան իմոյ 'ի
ըմց արա լինէն քոյովդ քաղցրու-
թեամբ , լինել հաջոյ ածութեան
քո կամաց 'ի գովեստ վառաց ան-

բաւ շնորհաց քոյ :

Ո՞վ հայիր 'ի բազմութիւն ա-
նօրէնութեան իմոյ որ անարժան եմ
գթոյ , և մի գարշեր լինէն վասն
զազրութեան յանցանաց իմոց յո-
րում կամ շաղախեալ . այլ մատիր
առիս անձառելի գթութեամբդ ,
և ողորմեած ինձ ըստ բազում ողոր-
մութեան քում , զի քաղցր ես առ
ամենեսին՝ որք կարդան առ քեզ , և
ապաւինին 'ի քո մարդասիրութիդ :

Դու տէր՝ զանձրեւ գթութեան
կամաց քոյ՝ և զառատազեղ ողոր-
մութեան քո զցող անձրեւեած 'ի
սիրտ իմ , որ 'ի սաստիկ ցանկութե
չարեաց և 'ի տապոյ անօրէնութեան
երաշտացեալ՝ չունի ինչ բերս պըտ-
զոց բարութե . և ոռոգեալ պա-
րարտացն շնորհօք մարդասիրութե
քո՝ բերել զարդիւնս անեղծանե-

լիս ՚ի պաշտը մշտնջենաւոր և ու
նեզրտական կենաց :

Լուս ինձ բարերար , քաւեմ
անլիցացար , և արա զնաւայս քո
արժանի վերին օթելանացդ ընդ
սիրելիս անուան քո սրբոյ , և ընդ
կամքարարս հաջլից աստուածու
թեանդ քո՛ որ յերկինս և որ յերկրի .
զի ընդ նոսին վառաւորեցից անլը-
ռելի օրհնաւանութեամբ զհայր
և զորդի և զսուրբ հոգիդ . այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից ,
ամէն :



ԵՐԵՒԱԿԱԲԹԻ ԱՏՈՒՔ

Սակայն Տէր մի սրտմառութեամբ
քով յադիմաներ զիս . Կւ . Է .

Հորուած . Բջ . Պատրժութեամբ
քո ՚ի մէնջ յաղաղակեւ հողեղիւ-
նացս . ըազմարութ տէր խնայեա-
և մի կորու սաներ :

Կանդնեա զանկեսլս ՚ի գլորմանէ՝
զվիրաւրիւլս ՚ի թշնամւոն . որ
բժիշկդ ես հիւանդաց բժշկեա զիմ
զհիւանդութիւնս :

Ի յանցանաց իմոց թախծեալ անձն
իմ գուեմ որպէս զմտքսաւորն .
աստուած քաւեա զիս զմեղաւորս :

Ասերեւութից քննող գաղու-
նեաց բժշկեա զհոգւոյ իմոյ զի .

ւանդուի և կեցն . միայն մարդասէր :
Որ երկայնամիտդ ես առ ամսեան
ողորմեա՛ անձին իմոյ քազմամեղի՝

և կեցն . միայն մարդասէր :

Ամենաըաւական ողորմութեան շը-
նորհ՝ պարդեւեա՛ ինձ յահագին
աւուրն զթողութիւն և կեցն . միայն
մարդասէր :

Բազում են քո գթութիւնքդ
քազմամեղ անձին իմոյ , ողորմեա՛
աստուած քաւիչ իմ :

.Օ ի քեզ տնիշտչար տէր մեղայ
չարին խարմամբ՝ ողորմեա՛ աստ-
ուած քաւիչ իմ :


Ի քո 'ի միւսանդամ գալստեանն
յորժամգաս դատել զերկիք՝ ողոր-
մեա՛ աստուած քաւիչ իմ :

Վեղաք մինչեւ յերկինս և զար-
դար զցասումն քո շարժեցաք 'ի
մեղ . տէր ըստ մեծի քում ողոր-

Մութեանդ ողորմեամ մեղ :

Իջաք մինչ ՚ի գժոխս ընկղմեալք
յանօրէնութեան մերում . տէր յիշ-
շեա զգինս արեան որդւոյ քո և
ողորմեամ :

Հալածեամ ՚ի մէնջ տէր նշանաւ
խացի քո զընդդիմամարտ և զանեւ-
րեւոյթ գաղան . և մի տար յա-
պականութի զքո ժառանգութիս :



Թագաւորք ապաշխարութեան :

Երկայնամիտ ես տէր առ ա-
մենեսեան և գթա տէր ՚ի վերայ
մեր . որպէս և յաւաղակին փրկիչ
և կեցն :

Երկայնամիտ բազումողորմ և Ճը-
մարիտ . նայեա առիս և ողորմեա ինձ :

Տուր զօրիութիւն ծառայի քո . կեցն
զորդի աղախնոյ քո . և արա առիս
նշան բարութեան : Եւ գթա տէր
՚ի վերայ մեր որպէս և աւազակին
միւկիչ և կեցն :

Տէր որ գթացար յաւազակին խաւ
չակից լինիլ քեզ . և մաքրեցեը
զազտեղութիւն յանցանաց նորա .
յաղթերէ կողի քո . գթա և յիս
՚ի մեղաւորս որ ծարաւիս եմ առ
քեզ . և փափաքիմ ՚ի գաւիթս քո
որպէս զմի ՚ի յեղջերուաց ՚ի յաղա
բերս ջուրց :

Մարտեաւ ընդիս թշնամին .
հանապաղ զիս կամի կորուսանել .
այլ գու տէր իմ այց արա . մոլու
ըեալ ոչխարիս և կեցն :

Մարտեան ընդիս ՚ի տարապարտուց
և փոխանակ սիրոյ իմոյ մատնեին զիս
այլ ես յաղօթս կայի :

Հատուցին ինձ չար վոխանակ
բարւոյ . ատելութիւն վոխանակ
սիրոյ իմոյ . Այլ դու տէր իմ այց
արա մոլորեալ ոցիսարիս և կեցն .

Որ հովիւդ ես հօտից բանաւոր
կենդանեաց . տօւը ինձ յոյս կենաց
ապաշխարութեան . և դարձն զմու
լորեալս 'ի հօտ քո քըիստոս և կեցն .

Մեղայ և աղացեմ զքեզ . թու
ոթիւն շնորհեած մեղաց իմոյ .
աւիչ իմ լեր քո գթութեամբդ .
որ միայնդ ես փրկիչ և կեցն .
Եղայ տէր մեղայ , և զանօրէնու
թիւնս իմ ես ինձէն գիտեմ .

Աղացեմ և ինդքեմ 'ի քէն , թող
ինձ տէր . թող ինձ և մի կորու
աներ զիս ըստ անօրէնութե իմոյ .
աւիչ իմ լեր քո գթութեամբդ .
որ միայնդ ես փրկիչ և կեցն .
Եղայ քեզ տէր , մեղայ քեզ տէր .

մեղաց և քան զաւազ ծովու ըա-
զում են յանցանք իմ . սպատրանք
աշխարհիս խաթեցին զիս . և եղէ
անպտօւղ 'ի կենաց յուսոյդ . այլ
դու անոխակալ և անյիշաճար վրկիչ .

խնայեաւ 'ի մեղուցեալ ծառայս
և կեցն *



Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ
ԳԼՈՒԽ Հ.

Եւ քանզի համբարձեալ զըն-
թացս ըանիս 'ի փոքունց տարի
երկրայնոց չհամարելոց ընդ գոյս
եղելոց 'ի մեծագունիցն տեսակս
ասացից զտօնելի հանդէս իրաւանց
ահաւորին անաշտութեան :

Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն
տատուծոյ՝ իբրեւ զնախածանօթ
հայրապետութիւնն, և կամ մաք-
րագոյնք՝ որպէս մարդարէսն, կամ
անբժագոյնք՝ իբրեւ զառաքեալսն,
կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտի-
րոսն, եթէ ոչ դու մարդասիրես-
ցես աննուազ բարիդ և անփոփոխ
խնամակալութիւնդ և անպակաս
ողբարմութիւնդ, ընդունայն է ինձ
փրկութիւնն առ ՚ի նոցանէ :

Օ ի եթէ առ նոյն ինքն աբ-
րահամ ձայն արձակիցեմ, իբր ո-
ղորմագին առակ ընչեղին ինձ վար-
դապետէ, ՚ի տապոյ անտի պապա-
կեալ, կաթիլ միոյ ջրոյ ոչ բաւա-
կանանայ . քանզի և նա փակեալէ
ընդ կարեօք հասարակաց անհնա-
րութեան : Իսկ եթէ առ մովսէս,
և նա զգածեալէ տկարութեամբ,

ո՞ւ ոչ զօրեաց առնն վրկութեան ,
 որ զհայթայթանաց կրկուտն՝ 'ի
 պահպանութեանն աւուր ժողովէր .
 իսկ եթէ առ ահարօն , և նա ինք
 նին իսկ կարօտացաւ մաղթողի :
 իսկ եթէ առ դաւիթ , 'ի մէջ
 բարեացն առաւելութեան՝ ըստ
 գտեալ է և նա , իսկ եթէ առ նոյ
 և յոք՝ և դանիէլ , զայս եզեկիէլ
 մարդարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ
 յիշատակեալ զնոսա , և զայն ընդ
 նոսին իբր 'ի դիմաց աստուծոյ
 ազդեալ , կենդանի եմ ես՝ ասէ
 տէր , թէ ոչ ապրեցուսցեն զուս-
 տերս և զդստերս իւրեանց 'ի բար-
 կութենէն որ հասանիցէ , բայց ե-
 թէ ինքեանք միայն ապրեսցին .
 իսկ եթէ առ պետրոս վէճն հա-
 ւատոյ , 'ի քումդ խնամոց խուն մի
 խիթացեալ՝ և նա ընդ կրիւք իմ

գրաւեցաւ : Տժողում ասել զբազ
 մացն գումարութիւն՝ խոնարհեալ
 առ կարիս կարիս , թէ և յառէտ
 երջանիկք իցեն : Ընդորս և յովա-
 սու ոմն մարդարեն՝ 'ի մէջ առտ-
 ուածառաքն սպասաւորուե՛ մար-
 կօրէնն գայթագոյութիւն՝ մնայ
 լովից անթարդմանելի , թէ և
 դէ, մն իմն մեկնութե՛ ձեակերպեսց
 Եւ քանզի չափեալ սահմանե-
 ցաւ զօրութիւն վրկութեան մարդ-
 կան , և ցուցան նոքա ողօրմեալք
 ըորերարիդ՝ և զօրացեալք ամենա-
 կալիդ . կոչեցեալք պաշտպանողիդ
 և քաւեցեալք հնարաւորիդ . չնոր-
 հեալք ազատեցուցիդ՝ և բժշկեալք
 անախտականիդ . կենագործեալք
 անապականիդ . և լուսաւորեալք
 նորոգողիդ , այսուհետեւ գիտա-
 ցեալ զսակն ոքանութեց հողածին

բնութեանս , որք միսիթար են օրինակաւն նմանաթար հարազատապէս
 վհատութեան յուսահատելոց , առ
 հմ առ քեզ դիմեցից՝ որդի աստուծոյ կենդանոյ քրիստոս օրհնեալ յամենայնի : Արանաւանդ
 զառակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ , զվերագրելոցդ ըան վերստին արդարացուցանէ . բարի է , ըստ իմաստուոյ
 ումեմն երջանկի , անկանել 'ի ձեռս
 տեառն , և մի 'ի ձեռս մարդկան .
 զի որպէս մեծութիւն նորա , և ողորմութիւն նորին : Եւ այս ըան
 թէև զդաւթիւն իմն գծագրէք , որ
 զերեքմասնեան հարուածն անծեան
 առաջի եղեալ . ընտրեաց ինքնին
 կամուորաբար զդատակնիք մահուն
 սատակման՝ իբր զկենդանի քրիստոսի հաւատոցն յաճախութեամբ ,

քան զերկուան ևս այլ վոքրեկունս՝
ոքը տանջենն և ոչ ողորմին , սա
կայն և իմս օրինակութիւն բանիս
պատկերի ճարակեցելոյ հնարս կե-
նաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայ-
լեալ յարմարութենէ . զի ոչ եթէ
զիրկեալսն նուաստացուցանեմ 'ի
մատենի այսը ողբերգութեան , ա-
ռանց որոց ոչ է մատչել առ տէր ,
այլ զփրկողին անուն պսակեմ . և
զշնորհ նորին՝ առ ամենեսին բա-
րեհոցակեմ . և զբնաւին բարձուն-
սըն 'ի թռիչս վարուց՝ խոստովանիմ
բանիս պայմանաւ , յաւետ կարօ-
տեալ ողորմութեանն դեղոյ :

Ահա դու կեանք , դու փրկու-
թիւն , դու բժշկութիւն , դու ան-
մահութիւն , դու երանութիւն ,
դու լուսաւորութիւն , արա՛ ինձ
անդորր 'ի մեղացս աշխատութեանց ,

զի և քեզ լիցի հանդիսաւ 'ի մշտա
դատս հեծութեանց՝ ձանձրացու-
ցիս թախանձանաց . որ ոչ այլ
իւիք , քան թէ փրկութեամբ
մարդկան պարարիս , օրհնեալ
յաւիտեանս , ամէն :



Աղօթք առ ձայրն երկնաւոր : Յովհան-
նու գառնեցւոյ ասացեալ :

Կը արքագործ աստուած և ա-
մենախնամ , որ յայսմ աւուր գը-
թութեամբ կամաց քոց ժողովեցեր
զջուրս որ 'ի վերայ երկրի 'ի խորս
ծովու , և զատուցեր զցամաքն 'ի
ջուրց . և զարդարեցեր զայն զա-
նազան բանջարօք և ծաղկագեղ-
մայեցութեամբ , և տղի աղջի

պտղաբեր ժառովը : Իսկ արդ եթ
կիրս անձնաւոր՝ վիխանակ բարեբոյս
սերմանց առաքինագործ արդասեաց՝
բուսուցի փուշ մեղաց խոցոտիչս
հոգւոյ իմոյ , և փոխանակ բերոցն
քաղցրութեան՝ պտուղս անօրէնու
թեան դառինս և մահաբերս ինձ
գոյացուցի :

Այլ դու անփակալ տէր՝ հայ-
եաց քաղցրութեամբ առիս յա-
րարածս քո , և մի անտես առներ
զգործս ձեռաց քոց . խլեամ յինէն
զփուշ չարեաց և զարդասիս անօ-
րէնութեան՝ զոր ես ինձէն պտղա-
բերեցի . և սերմանեաւ վերստին 'ի
միտս և 'ի կամս իմ զբարին , և զօդ-
տակարն հոգւոյ իմոյ , յօժարիլ և
ընտրել զայն , և առնել կամակար
սիրով :

Անօրէնութիւնք իմ ըաբձրացան

քան զգը լուս իմ , և տղմաշաղախ
ջուրը մեղաց ծածկեցին զանձն իմ .
և ահա առ քեզ առ բարեգութ
տէրդ իմ պաղատիմ , երեւեցա զիս
իբրեւ երկիր ցամաք , և նորոգեա
զսիրտ իմ բերել պտուղս բարիս
զկանուխն և զանագան ըստ հաճոյից
քոց մարդասէր :

Երկիրս բանաւոր՝ զոր զարդարեւ
ցեր ընաբոյս առաքինութեամբ ,
ցամսքեցայ ՚ի հրատապ հրապու-
րանաց իշխանին օդոյս այսորիկ որ-
պէս դալարի ՚ի սաստիկ տօթոյ , և
թօթափեցան ծաղիկք հոգւոյս .
գուացան ոստք առաքինութեան ,
և խամբացան ըողբոջք բարեաց :

Եւ ահա կորացեալ անձամբ առ
քեզ աղաղակեմ պ սրդեւից կե-
նաց , ցողեա յիս զցող խնամոց
մարդասիրութեան քո , զի չորացաւ

որպէս խեցի զօրութիւն իմ, և որ
պէս խոտ տանեաց ցամպքեցայ . և
նորոգեա զիս նորոգութեամբ չնոր-
հաց քոց ըստ առաջնումն պայծա-
ռութեան :

Արարեր զիս այդի վայելուց
ցանկով օրինաց պատսպարեալ առ-
՚ի բերել ողկոյզս քաղցրութեան ՚ի
հաճոյս տնկագործողիդ իմոյ աս-
տուժոյ . իսկ ես ապստամբ կամօք
արհամարհեալ զօրէնս քո , խոպա-
նացայ չարացար գնացիւք , և պըտ-
ղաբերեցի խաղող դառնութեան
բազմօրինակ անօրէնութեան :

Եւ արդ մարդասէր խնայեա յիս
գթութեամբ , և դարման տաք այ-
գւոյս այսմիկ զոր տնկեաց աջ քո .
ամրացն զիս վերստին օրինօքդ կե-
նաց . և ՚ի բաց արա յինէն զբաղ-
ձանս չարեաց՝ որք ստեղնին ՚ի կա-

Մըս իմ :

Որպէս զի վաստակեալ յար
դիւնա առաքինութեան՝ արժանի
եղէց ընդունիլ զօրհնութիւն առ
՚ի քէն և վայելել յանձառ բա
րիսդ ընդ սուբբս քո յերկինս ·
և գոհութեամբ փառաւորել զա

մենազօր տէրութիւն քո ·

յաւիտեանս յաւիտենից ·

ամէն :



ՉՈՐԵԿԸԱԲԻՒՄ ԱՏԹԻՄ

Ս-Շ. Ողորմեան ինձ աստուած:
ըստ մեծի ողորմութեան : ԳԼ. Ֆ.

Հ-Է-Ի. ԲԿ. Յամենայն ժամ
աղաջանք իմ այս են ՚ի մեղաց ի-
մոց սուրբ արա զիս տէր :
Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ
աղաջեմ զքեզ թող ինձ տէր :
Արտասուաց իմոց մի լուեր տէր :
զի պանդուխտ եմ ես յանցաւոր
երկրի :

Թիւնս իմ . Ողորմեան ինձ աստ-
ուած իմ ողորմեան ինձ . զի ան-
պատասխանի եմ յամենայնի թող
ինձ տէր :

Տառապեալք . Ճանապարհը քո

ուղիղ են, ես միայն մոլորեցայ՝
դարձն զիս և ողորմեան ինձ ած։
Թետն քո, Դատաստանըք քո ար-
դար են, ես միայն եմ մեղուցեալ։
քաւեան զիս և ողորմեան ինձ ած։

Ճոյս իմ ես դու տէր քաւիչ
յանցանաց իմոց. մի անտես առներ
զբղխումն արտասուաց իմոց. ողոր-
մեան ինձ աստուած։

Առ քեզ ապաւինեցայ որպէս զա-
նառակ որդին. Հայր մեղայ յերկինս
և առաջի քո. ողորմեան ինձ ած։
Փրկեան զիս աստուած ՚ի բազում
մեղաց իմոց. արան արժանի քոյին
սուրբ արքոյութեանդ. ողորմեան
ինձ աստուած։

Ուղիք իմ բազում են յոյժ,
ժանր են քան զաւազ ծովու.
քանզի քեզ միայնոյ մեղայ ողոր-
մեան ինձ աստուած։

Բաց տէր զդուռն ողորմութեան
որ ողբալով կարդամ առ քեզ
քանզի քեզ միայնոյ մեղայ ողոր
մեա ինձ աստուած :

Հեզ իմ զգթութիւնդ քո բայ
զումողըմ և մարդասէր . քանզի
քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ
աստուած :

Թիւնս իմ , Մեղայ քեզ տէր
մեղայ ողորմեա :

Մեղայ անօրինեցայ և մատնեցայ
'ի ձեռս անօրէն թշնամնոյն . արդ
անկեալ աղաչեմ թող ինձ տէր .
Քան զամենեսեան առաւել մեղայ
տէր իմ գթած , քան զամենեսեան
անօրինեցայ և մատնեցայ 'ի ձեռս
անօրէն թշնամնոյն . արդ անկեալ
աղաչեմ թող ինձ տէր :

Եկեսցէ տէր 'ի վերայ մեր ու
ողորմութիւն քո , և ըան փրկութեան

Քո պահեսցէ զանձինս մեր՝ իմելոց
Աղօրմութիւն քո և Զմարտութիւն
քո, և լոյս Երեսաց քոց առաջնոր
գեսցէ մեզ՝ ի յարդարութիւն։

Որ ողորմածդ ես գթած և երակայնամիտ տէր, ընկալ զաղացանց
մեր. բարեխօսութեք ոք ածածնին։

Sէր զլուր միւսանդամ քո
գալստեանն լուայ և Երկեալ. զի
ուսայ ՚ի սրբոց պատուիրանաց, եթէ
գաս դու ՚ի գատել զերկիր։

Sէր յիշեցի զար զգործս իմ և
զարհութեցայ. զի ժանեայ Զմարտութեամբ, զահաւոր և զանայառ
զքո գատաստանն։

Sէր յիշեցի և զգութ արարչական
սիրոյ քոյ առ քո արարածս. և ՚ի քո
գթութիւնդ ապաւինեալ աղաչեմ.
ողօրմեան ինձ յաւուր յայնմիկ քո
արդար գատաւոր։

Թագաւորք աղաջնարութեան :

Տէր իմ բազում են անօրէն
սութիւնք անձին իմոյ . ոչ յիշեցի
զահեղ զդատաստանս քո . արդ
անկեալ զքեղ աղաջեմ . շնորհեա
ինձ ապաշխարութ տէր և ողորմեա :
Անօրէնութիւնք իմ բարձրացան
քան զդլուխ իմ . և որպէս բեռն
ժանը ժանրացան ՚ի վերայ իմ :

Նեխեցան և փոտեցան վերք իմ .
յերեսաց անզդամութեան իմոյ . ոչ
յիշեցի զահեղ զդատաստանս քո ,
արդ անկեալ զքեղ աղաջեմ . շըս
նորհեա ինձ զապաշխարութիւն .

տէր և ողորմեաց :
Պաղատանս մատուցանեմք քեզ
հայր երկնաւոր , մի անտես առներ
շաղաջանս մեր . այլ անցն զցասումն
քո ՚ի մէնջ , և յիշեա զի պատկեր

Էմբ բարերարութեանդ :

Տէր իմ գթութիւնըք քո բա
զում են յոյժ, առ իս արա զբարե
բարութիւնըս քո . որպէս և մաք
սաւորին և ինձ ողորմեա :

Գթութիւնք քո բազում են տէր .

և ըստ իրաւանց քոց կեց՛ զիս .
Բազումք են որք հալածեն և նեղեն
զիս , 'ի վկայութեանց քոց ես ոչ
խռտօրեցայ . առ իս արա զբարե
բարութիւնս քո . որպէս և մաքսա
ւորին . և ինձ ողորմեա :

Անոխակալ և անյիշաճար տէր . ո
գթալով 'ի մեղաւորս . չնորհեցել
ապաշխարութիւն , արդ գթա և
'յիս տէր 'ի մեղուցեալ և յանօրի
նեալ քո ծառայս . և փոխարկե
զգործող չարեաց , 'ի զղջումն ա
պաշխարութեան և կեց՛ :

Ի տաճարի քում սրբութեան :

իառաւորելով զքեզ . դու ունիս
իշխանութիւն ողորմեաց մեզ :
Այլ ես ըստ բազում ողորմութեան
քում մտից 'ի տուն քո , և երկիր-
պագից 'ի տաճար սուբբ քո եր-
կիւղիւ քո :

Տէր առաջնորդեա ինձ յարդարու-
թեան քում վասն թշնամեաց իմոց .
և ուղիղ արա առաջի իմ զՃանա-
պարհս քս . դու ունիս իշխանու-
թիւն՝ ողորմեա մեզ :
Ի տաճարի քում օրբութեան հա-
նապազ զքեզ գովեմք թագաւոր
փառաց , որ ունիս իշխանութիւն
կենաց , և փրկութեան ողորմեա
մեզ .



Ե ԽՈՐՈՅ ՄՐՏԻՑ

ԽՕՍՔ ԸՆԴ ՏԻՐԱՒՀԱՅՑՆ

ԳԼՈՒԽ Զ.

Եւ արդ՝ 'ի վերայ այսքանեաց
 յուսահատութեանց և ահարկու
 սրտաբեկութեանց, պակուցանողա-
 կան սաստկութեանց աստուածոցին
 ըարկութեց. տագնապեալ ոգուով
 թախժութեան իսպառ, աղջեմ
 զքեզ սուրբ աստուածոցին:
 Հըեշտակ 'ի մարդկանէ. մարմնա-
 տեսիլ քերովբէ. երկնաւոր արքայ-
 ուհի. անխառն իրեւե զօդ. մա-
 քուր որպէս լոյս. անշաղախ ըստ
 նմանութեան պատկերի արուսեկին
 ըարձրութեան. գերազանց քան
 զբնակութի անկոխելին սրբութեց.
 Երանաւոր խոստմանն աեղի, եղեմ

շնչուկան . Ժառ կենացն անմահից
 բոցեղէն սրով պարունակեալ . 'Ի
 ւարձրեալն հօրէ զօրացեալ և հոյ
 վանացեալ . հանգստեամբ հոգւոյն
 հանդերձեալ և մաք բագործեալ .
 ընակութեամբ որդւոյն յարդա-
 րեալ և տաղսւարեալ . Միաժինն
 հօր և քեզ անդրանիկ . որդի քո
 ժննդեամբ և տէք արարջութեամբ .
 Ընդ անաղու մաքրութետնդ՝ և ան-
 բիծ բարի . ընդ անարատ սրբու-
 թեանդ՝ և խնամահալ էարեխօս .
 Ընհան զմաղթանս այսու աղերսանաց
 քում դաւանողիս , և մատու ըն-
 ծայեաւ ընդ սմին խառնեալ զբանն
 իմ սախնի մեծիդ ներքողի՝ 'Ի քոյդ
 պաղտանս : Հիւմեա միացն զմե-
 ղուցելոյս դառն հեծութիւն՝ ընդ-
 քումդ երջանիկ և խնկառուեալ
 հայցուածոց՝ տունկդ կենաց պազոյն

օրհնութեան . զի՞ ՚իքէն միշտ օդ .
նեալ և բարեգործեալ , և ՚ի մաք .
քական քո ծնելութիղ ապաւինեալ
և լուսաւորեալ , կեցից քրիստոսի
որդւոյ քո և տեառն :

(Օժանդակեան թեւոցդ աղօ .
թիւք՝ խոստովանեալ մայրու կեն .
դանեաց և Ելիցն իմ յերկրէս հով .
տէ , առանց լիկանաց հետեւել ՚ի
կեանս օթեւլանացդ պատրաստու .
թեան , զի թեթեւասցի կատարածն
իմ ինձ՝ ժանրացելոյս անօրէնութի .
Արացե՛ս տօն ինձ բերկրութեան .
զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ եր .
կանցն և ային . բարեխօսեան խնդրեան
աղացեան , զի ըստ անձառելի մաք .
ըութեանդ և ահա զբանիդ հա .
ատամ զնդունելուի : Արտասուզ
օգնեա վտանգեցելոյս՝ գովեալդ ՚ի
կանայս . Ֆունդ խոնարհեցո առ իմ

Հաշտութիւն՝ ժընօղք՝ տստուծոյ։
 ընդ իմում թշուառիս հոգա՛ խու-
 րան բարձրելոյն . ձեւն տուր ան-
 կելոյս՝ տաճար Երկնային . փառա-
 ւորեա՞ զորդիկ քո ՚ի քեզ՝ ածօրէն
 ինձ հրաշսգործել քաւութիւն և
 ողորմութիւն՝ աղախին աստուծոյ և
 մայր . բարձրացի պատիւ քո ինեւ ,
 և ցուցցի փռկութիւն իմ քեւ +
 Աթէ զիս գտցես՝ տիրամայր ,
 թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի , թէ
 զկորուսեալս շահեսցիս՝ անարատ ,
 թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝
 Երջանիկ . թէ զամանեցեալս յա-
 ռաջ մատուսցես՝ բարեշնորհ . թէ
 յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝
 միտ սուրբ կոյս . թէ զմերժեալս
 ընտանեցուսցես՝ մեծարեալդ այ .
 թէ միս ցուցցես զգթածութիւն՝
 լուծիչդ անիծից . թէ զժիեալս

Հաստատեցես՝ հանդիսատ . թէ Դ
 խռովութեանց յուզմանց փոխես
 ցես զիս՝ խաղաղաբար . թէ վրիպե
 լոյս ինձ հնարաւորեցես՝ գովեալ .
 թէ վասն իմ մացես 'ի հանդէս՝
 մահու նահանջիչ . թէ զդառնութիւ
 իմ սնուշեցես՝ քաղցրութիւն .
 թէ զբաժանմանն իմ խորոց քակ-
 տեցես՝ հաշտութիւն . թէ զտն-
 մաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման
 ընդունիչ . թէ զմատնեալս մա-
 հու միրկեցես՝ կենդանի լոյս . թէ
 զալեաց ձայն հատցես՝ բերկրու-
 թիւն . թէ զկորուտակեալս կազդու-
 ռեցես՝ դեղ կենաց . թէ 'ի կոր-
 ծանեալս իիս ակնարկեցես՝ հոգե-
 լից . թէ ողորմութեամբ ինձ պա-
 տահեցես՝ կըտակ նուիրեալ , օրհ-
 նեալդ միայն 'ի շրթունս անբիծ
 չեզուաց երջանկաց , ահա կաթիւ

մի կաթին՝ քումը կուսութեան՝
յանձն իմ անծըւեալ՝ կենաց ինք
զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն
լիսուսի արարչին երկնի և բնաւին
երկրի : Օոր անձառապէս ժնար
բովանդակ մարմնովն և համայն
աստուածութեամբն, որ փառա
ւորեալն է ընդ հօր և հոգւոյն
սրբոյ էութեամբ, և անքննու
թեամբ մերոյին բնութեամբ ս
միացելով, ամենայն և յամենայ
նում, մի յերրորդութենին . նմա
փառք յաւիտենից յաւիտեանս,
ամէն :



Աղօթք առ Հոյրն Երկնաւոր Յովհաննու գաւնեցւոյ ասացեալ :

Հաստից ամբաւազօր լուսաւորացն Երկնից , և ճարտարապետամենիմաստ տանս աշխարհի . որ յայսմ աւուր կարգեցեր զլուսաւորսն 'ի հաստատութեան Երկնից՝ զարեգակն և զլուսին և զաստեղացն պարս՝ 'ի նշանս և 'ի ժամանակս և յաւուրս և 'ի տարիս :


Արդ աղաչեմ զքեզ աստուածկենարար՝ հաճոյական պարգեւօք հոգեձիր շնորհաց քոց շարժեազմիսս և զկամս իմ սիրել զքեզ յամենայն սրտէ , և ուղղեազ զընթացս անձին իմց անհերքելի զօրութեամբ քով՝ գնալ անխոտոր ՚ի ճանապարհս հրամանաց քոց : Կաղեալ կամ անղերծ շղթայիւք


յանցանաց իմոց , ազատեաւ զիս ա-
մենակար , Անկեալ դանդաշեմ 'ի
հայոք կորստեան գաղտնի որսողին
հան զիս բարեգութ : Ի բանդ ա-
նելանելի խաւարին գրքոց կաշկան-
գեալ տանջիմ , ժագեաւ առիս
զլոյս շնորհիդ , և զերծն զիս խնա-
մակալ՝ յաղատութիւն կենաց ան-
վախճանից :

Դու ես յոյս իմ և ապաւինու-
թիւն , դու իմ փրկութիւն . քեզ
ակնկալեալ սպասէ ամենամեղ ան-
ձըն իմ , Քեզ փափագի հոդի իմ
մարդասէր , որպէս փափագի եղջե-
րու յաղթերս ջուրց : Ծարաւի եմ
ողորմութեան քում՝ արբո՞ն զիս .
տանջեալ 'ի սովէ՝ յեղթերաց խո-
զիցն կերակրիմ . զհացդ երկնաւոր
ջամբեաւ ինձ : Ո՞րուր դառնութե-
մեղաց և մահու արբեալ տագնա-

ողիմ չարաչար , զբաժակդ կենաց
մատուռւակեա ինձ . Արերկացեալ
գողամ յանագորուն աւազակաց
իշխանին մահու , զգեստուք ինաւ-
մոց քոց ծածկեա զիս : Վ իրաւոր-
եալ եմ 'ի թիւնաւոր նետից անե-
րեւոյթ թշնամոյն , բժշկեա ըզ-
հարուածս իմ :

Եւ արա զիս զապախտաւոր ծա-
ռայս որ կարդամ առ քեզ՝ արժա-
նաւոր երկնային հարսնարանին և
անմահական սեղանոյն՝ ընդ այնոսիկ
որք սիրեցին զքեզ 'ի բոլոր սրտէ , և
սլահեցին զպատուիրանս քո . զի ընդ-
նոսին վառաւորեցից զամենագութ
մարդասիրութիւն քո , յաւիտեանս
յաւիտենից , ամէն :





ՀԻՆԳԱԲՐՁՒ ԱՏՈՒՐ

Սուշ! Տէր լուր աղօթից իմոց .
աղաղակիմ առ քեզ եկ: Գլ. Ճա,

Ծարուի, դձ. Օ Երժն զիս յու
բոգայթէ որսողին , և յամենայն
վըտանգից ապրեցն և ողորմեա՛,
Յաներեռյթ թշնամւոյն և 'ի գաղտնի
նետից բանսարկուեին պահեա՛ և ող:
Փրկեա՛ զիս 'ի յանցանաց մեղաց իւ
մոց . և նորոգեա՛ զիս հոգւով գիւ
տութեան և ողորմեա՛ :

Օով մեղաց իմոց զիս ալէ կոծէ .
որ ես նաւապետ բարի՝ շնորհեա՛ ինձ
նաւահանգիստ հայր ամենակալ :
Խորըք պատրանաց զիս կորութանեն .
այլ դու նաւապետ բարի՝ շնորհեա՛

ինձնաւտհանգիստ հայր ամենակալ :

Որ միայն իշխանդ ես թողուլ ըզ
մեղս . և ես աղացեմ ըզքեզ տէք
թռող ինձ զմեղս իմ հայր ամենակալ :

Վերձեալ է օր գալոյ քո տէք
լուր ձայնի աղօթից իմոց որ կար-
դամս առ քեզ և ողորմեա :

Բանից իմոց ունկընդիր տէք և 'ի միտ
առ զաղացանս իմ զառսւօտուս որ
կարդամս առ քեզ և ողորմեա :

Որ ընկղմեալս եմ 'ի խորս չարեաց՝
սու ըբ զհոդիդ քո առաքեա առ իս
որ կարդամս առ քեզ և ողորմեա :

Ողորմեա ինձ աստուած՝ զի
քեզ միայնոյ մեղաց :

Առաւել լուա զիս 'ի տղմոյ յան-
ցանաց աղլւիւր բըժշկութեան և
ողորմեա :

Յարենէ վրկեա զիս որ հոգւոց և
մարմնոց ունիս իշխանուի և ողորմեա :

Վիրաւորեալ յանցանօք անձն
իմ առ քեզ տէր համբարձի զացս
իմ. Թողլ ինձ զմեղս իմ միայն բա-
րեգութ, և ողորմեան ինձ աստուած-

ըստ մեծի ողորմութեան քում:

Կորհանեաց զիս չարագործ թշնա-
մին՝ և կամի իսպառ զիս որսալ.
Հայր բարեգութ բժշկեան զվիրա-
ւորեալս և ողորմեան ինձ աստուած:

ըստ մեծի ողորմութեան քում:

Անդունդք մեղաց պաշարեցին զիս՝
զի բազում են քան զաւաղ ծովու.
առ քեզ տէր պաղատիմ փրկեան ՚ի
վտանգես՝ և ողորմեան ինձ աստուած:

ըստ մեծի ողորմութեան քում:

Օ անապական զհոգեւոր ըզ-
գանձըն՝ յապականացու կենցաղըս
ծախեցի. այլ առ քեզ միայն պա-
ղատիմ բարերար փրկիչ ինպյեմ
՚ի մեղուցեալ ծառայս:

Օցանկ հոգեոյ իմոյ քակտեցի և
եղէ անրարունակ որթ . այլ առ
քեզ միսիյն պաղատիմ բարերար
փրկիչ խնայեա 'ի մեղուցեալ ծա :
Ուստաքանց եղէ ես որպէս զարմա
ւենի՝ պտղակորոյս որպէս Ճիթենի .
այլ անլիշաչար և անօխակալ փրկիչ
խնայեա 'ի մեղուցեալ ծառայս :

ՀՅԱԿԱՆ ՂԱՎԱՐԴՅԱՆ

Թրագաւորք ապաշխարութեան :

Լ ապաշխարութեան արտասուս
տւազան լինի և լուանայ զբազմու
թիւն մեղաց . սովու շնորհեա յա-
ռաջ քան զվախճան . զքաւութիւն
և զմեծ քո զողորմութիւն :
Ծարաւի է անձն իմ առ քեզ ամֆ .
հզոր և կենդանի . երբ եկից երե-
ւեցայց երեսացդ աստուծոյ :

Եղեն ինձ արտասուք իմ կերակուք
 'ի տուէ և 'ի գիշերի . և այն զի
 ասեին ցիս զօրհանապազ . թէ ուր
 է աստուած քո . սովաւ չնորհեա
 յառաջ քան զվախճան . զքաւու
 թիւն և զմեծ քո զողորմութիւն .
 Յորժամ գաս փառօք հօր յահա
 դին աւուրն , 'ի դատել զերկիք .
 և դողան սարսահմամբ , երկրա
 ծինքս ամենայն 'ի յահէ քումմէ .
 'ի նստիլ քո յատենի դատաւոր ա
 հեղ . և յակնարկել քո յարարածա
 յիշեա և զիս զբազմամեղս . որ ըն
 լողմեալս եմ յանցանօք բանսարկ
 ուին խահմամբ և հայցեմ զաւա
 զակին տէր և զիս յիշեա որ միոյնդ
 ես վըկիչ :

Օ իս որ 'ի նաւի աշխարհի ալէկո
 ւեն մեղք իմ , նաւահանգիստ
 ապաշխարութեան . չնորհեա ինձ

բաղումողորմ և կեցն .

Կեցն զիս աստուած՝ զի հասին
ջուրք յանձն իմ, ընկլայ ես 'ի խո-
րս անդընդոց ուր ոչ գոյ ինձ հան-
գիստ . նաւահանգիստ ապաշխա-
րութեան շնորհեա՛ ինձ բաղում-
ողորմ և կեցն .

Նաւապետ բարեգութ առ քեզ
ապաւինիմ . տուր ինձ ձեռն որպէս
Երթեամն պետրոսին 'ի վերայ ալեացն .
որ ժվիմս ալէ կոծեալ յանցանօք
մեղաց և կեցն .

Դու ես քրիստոս աղբիւր կե-
նաց , բղխումն ողորմութեան . շը-
նորհեա՛ փրկիչ անձանց մերոց ըզ-
թողութիւն մեղաց մերոց :

Ի քէն է տէր աղբիւր կենաց . և
լուսով երեսաց քոց տեսանեմք ըզ-
լոյս . Ծագեա՛ զողորմութիւնս քո
ոքք մանաչեն զքեզ . զարդարութիւ-

քո՞ որք ուղիղք են սրտիւք . շնորհ
հեա փրկիչ անձանց մերոց . զթու
դութիւն մեղաց մերոց :

Ու աղբիւրդ ես ծարաւեաց և
հանդիսաւ աշխատելոց . ճանապարհ
մոլորելոց և հովիւ հոգեւոր . բաւ
նաւոր հօտի . ժափաքողացս առ
քեզ քրիտոս լեր նաւահանգիստ .
և արբո մեզ ծարաւեացս զըաժակ
քո քաղցրութեան յանդադառ
յաղըերէդ :



Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՅ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ
ԳԼՈՒԽ ԶԲ .

Տեր աստուած բարերար բազ
մապարդեւ թագաւոր . կենաց
պատսսպարան , լուսոյ կերպարան .

լոյթատարը հանդստարան . որ յազագու մեղուցելոյս Եկեալ մարմնացար . գործեցեր զանպատումն և հանդերձեցեր զհրաշալիսն , մինչեւ կատարեցեր զառեցեալն ընդ ամենալիր աստուածութեանդ :

Արդ՝ վասն առաքելոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց , և հոգւովդ սրվ սծելոց . զորոց զգովինստն արժանաւորուել ըստ իմում կարի՝ առ ՚ի փառս քո՝ տէր ամի , յայլում բանի պաշտեցի , և ինձ ողորմեսցիս լիշտակաւ սիրոյ նոցին ընտրութեան , Ծաւիդ ինձ եղիցի նորօք՝ և հանդերձեսցեն յերանութիւ փափաքելի . Ճայն բարի հովուութենոցին՝ ՚ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի : Ուասն կոլայց ՚ի յանեղծութիւն վրկութեան տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն

կենաց, սկզբնաշնորհիցն պատռոյք. միառաւորեալն դասուց, գետոցն ըանականաց, աւետարանչացն ըարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պէճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղովն զըւարթութեան տիրական լուսոյն կատարելոց :

Ի նդ աշակերտաց մեծիդ հրամանի ըարձրեալդ աստուծոյ քրիստոսին և մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ, որը մահացու և վշտաշարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիըն անդամոք, երկրաւորական և հողագանդուածն ընութեամբ՝ մարտուցեալ ընդտարը դոյից ամենայն նիւթից՝ պանկեցան ըարձրացան և կենդանացան հոգեողէս. արիաբաք ելեալք 'ի

յերկրէ . ըստ մարդարէին , վկայք
 Ճշմարիտք ամենավորձն մահու . ի
 մանալեացն անտեսիցն և ժածկելոց
 աներկբայ բարեացն՝ յուսով տե-
 սելոցն աստեն նկատիցք . աշուկերտք
 առաքելոցն և չարչարակիցք նոցին
 որ հաւասարեալ գործովք ընդ նո-
 սին , կատարեալ լրմամք անպա-
 կասելեաւ՝ պարեն ՚ի խրախնան
 անկետն երանութեան . որոց հա-
 ճոյական և ընդունական մաղթանօք
 արիւնընժայ վաստականուէր քըրտ-
 նակընդրուէկ աղերսիցն յարդմամք
 ընկած զիս նորոգ ըստ նոսին մասին
 անեղծ փրկութեամք՝ ՚ի քեզ ար-
 ձանացեալ ,

՚ նդ խօղացեալսն հուրբ և
 սուսերբ՝ արեամք ներկելոցն , և
 ճգնաւորացն սրբոց հարցն միանձանց
 և քեզ հետեւելոցն որդի աստու-

Ֆոյ, անպարտելի քաջութեամբ և
 անպատիր զգաստութեամբ . ըսդ
 դժնեայ գուռողի մարմնոյս բռնու^շ
 թեան արիապէս մարտուցեալ, սո
 վիմբ վանեցին զանմարմինն ըելիար .
 և մշտամարտ հանդիսիւ յասոլաշիսի
 կենցաղոյս առանց զզուանաց ծան
 րաբեռնութեան 'ի լոյնաժաւալ
 ժկանաց աշխարհիս ծովու տապա
 նակաւ մարմնոյս թանձրութեան
 զթեթեռնութիւն հոգւոցն թռու
 ցեալ 'ի նստահանգիստն կենաց
 հասին . և իւր սիրօղք վերնում
 վիշակին՝ առանց յետնոցն մտա
 ծութեան, զթագն յաղթութեան
 համարձակապէս ողայժառ Ճոխու
 թեամբ պշնեալ իսկապէս 'ի գը
 լուխ կապեցին . վասն նոցին արժա
 նաւոր մաղթանաց և նուիրական
 հայցուաժոց և զիս զմեղու որս 'ի

պատմականաց՝ ընկալ ընդ նոսին։
 Եւ ահա խառնեալ զանմաքուրս
 բան՝ ընդ նախագրեալ երջանկացն
 վառատրական աղերսարկութիւն,
 որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճու-
 թիւն, և ես ընդ նոսին իբր դառ-
 նութիւն եղեալ ընդ քաղցու,
 կամ տատասկ ընդ ողօրկութեան.
 տգեղութիւն ընդ վայելցութեան,
 և տիղմ ընդ գեղեցկութեան մար-
 գարտի, կամ հող ընդ յստակու-
 թիւն ոսկւոյ, և կամ քարինս ա-
 նարգս ընդ պայծառութեան ար-
 ծաթոյ. քացասութիւն ընդ ձմար-
 տութեան, կամ աւազ ինչ ա-
 տամառու ընդ կակղութե զանգ-
 ուածոյ հացի. արդ ընը հըլօր
 հնարաւոր գովեալ, զնոցայն վասն
 իմ, և զիմն ընդ նոսին 'ի նոցին
 գովեստ, 'ի փրկութիւն իմ և 'ի

վիտուս քո՝ ամենագութ, բարերար,
 օրհնեալ, Երկայնամիտ, կարօղ, ան-
 քըննին, անձառ, անեղծ և անըս-
 տեղծ, Վոն Են պարգեւք, քոն Են
 շնորք. դու սկիզբն և պատճառ
 բարեաց ամենայնի: Ոչ ես դա-
 տապարտիչ, այլ ազստիչ. ոչ ես
 կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահա-
 ցուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տա-
 րագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատ-
 նիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես լն-
 կըղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլո-
 րիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ,
 այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու,
 այլ շնորհիչ. ոչ ես թշուառացու-
 ցիչ, այլ մխիթարիչ. Ոչ եղաւ-
 նես, այլ գըես. ոչ սասանես, այլ
 հաստատես. ոչ ոտն հարկանես.
 այլ սիովիես. ոչ պատճառս յօդես
 մահու, այլ հնարս խնդրես կենաց.

ոչ ես 'ի կամս շարժեալ տառակ
 մոն : այլ 'ի փրկութի ողորմութե :
 Ոչ մոռանաս զայցելութիւն . ոչ
 լքանես զբարի . ոչ արդելուս զգը
 թութիւն . ոչ բերես վՃիռ կորլու
 տեան , այլ կտակ ազատութեան :
 Ոչ թշնամանիս յառատութեանց .
 ոչ բամբասիս 'ի շնորհաց . ոչ հայւ
 հոյիս 'ի պարգեւաց . ոչ նախատիս
 'ի ձրի ձրից . ոչ անգոսնիս յերկայն
 մըսութեանց . ոչ Եալերիս 'ի ներու
 թեանց . ոչ բանսարկիս 'ի բարու
 թեանց . ոչ անզատուիս 'ի քաղց
 րութեանց . ոչ քամահիս 'ի հեղու
 թեանց . ոչ առաքին այսոցիկ տըր
 տընջմունք , այլ անդուելի գոհա
 բանութիւնք : Բարձ զմեղս իմ
 հըզօր . լոյժ զանէֆս իմ օրհնեալ .
 քաւեած զպարտիս իմ ողորմած .
 ջնջեած զպանցանս իմ գըթած .


մատն մատն այցելութեան , և ան-
գըստին իսկ կատարեցայց . զի՞նչ
քեզ՝ տէ՛ր , քան զսոսին դիւրագոյն ,
և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս
կարեւորագոյն . Այլ կենդանագրեան
բարեխնամ՝ քոյինաստեղծ պատ-
կերիս՝ վիճումն կրկին 'ի շունչ նո-
րոգման լուսաւորութեան մաքրա-
կան շնորհի՝ զամենամեղս ոգի
պաշտպանեալ :

Ո՞ի աժեր ռզորմաժ՝ ինձ օր տու-
րաժամ՝ 'ի համառօտս երբի՝ ան-
թոշակ ապաձեռնութեամբ՝ ընդ-
անկատար ուղին հետեւել . մի մա-
տուցաներ բաժակ դառնութեան՝
'ի ժամ ծարաւու . մի փակեր գը-
թած՝ իմ հանդեպ՝ զյաջողուած-
հոգեւոր օգտիս , և մի լբը յան-
կարծադեպ հինից ասպատակ՝ գի-
շեր մահուն ինձ պատահեսցէ . մի

տապ տօթոյն յանպատրաստ պա-
 հուն զարմատս հատեալ ցամաքե-
 ցուսցէ , և մի լուսնական դիպուածք
 հասեալ գաղտնեօք վիասեսցեն .
 Մի պահեսցի ինձ սառն մեղացս ,
 և մի հոսանք ուղիսից կենցաղոյս զիս
 ողողեսցեն , Ո՞յ հանգիստն մահ
 բերիցէ , և մի ննջումն ՚ի սատա-
 կումն յառաջեսցէ . մի քունն ինձ
 կորուստ լիցի , և մի նիքհումն ա-
 պականութիւն գործեսցէ . մի վախ-
 ճանն անյարմար՝ ՚ի վերայ իմ ար-
 շաւեսդէ , և մի չնչոյս վերարձա-
 կութի ըմբռնեալ՝ ՚ի խոնարհ լքցի :

Դու ես տէր . դու գըթած .
 Դու բարերար . դու երկայնամիտ .
 Դու ամենակարօղ . առ ամենայն
 բան անհասութեան անձտռ զօ-
 րաւար , քաւել փրկել կենագոր-
 ծել , լուսաւորել , վերստին հաս-

տատել, 'ի ժանեաց կերչաց գազաւ
 նաց՝ և կամ յատամանց վիշապաց
 'ի կեանս կորդել, 'ի խորոց անդնդոց
 'ի ըրս բերկրութեան ածել, և 'ի
 հեղձմանէ ծփանաց մեղաց՝ ընդ ար-
 դարս Երջանկաց՝ փառօք բազմե-
 ցուցանել. Ամենայն ոգի քեզ ա-
 կընկալեալ յուսով սպասէ, կարօ-
 տեալ քումդ շնորհաց. Եթէ Երկ-
 նայինք, և Եթէ Երկրաւորք. Եթէ
 անկածն մեղօք, և Եթէ ամբար-
 ձեալն արդարութբ. Եթէ տէր, և
 Եթէ ժառայ. Եթէ տիկին, և Ե-
 թէ աղախին. և 'ի ձեռին քո է
 շունչ կենդանական բոլորեցուն :
 Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ
 փառք՝ յաւիտեանս յաւիտենից,
 ամէն :



Աշօթք առ Հայրն Երենուոր : Յովհանն
նու գառնեցւոյ աստցեալ :

Որ արարչական գթով կենդա-
նածնես զարարածս քո և խնամես
քաղցրութեամբ՝ աստուած իմ և
տէր . որ յայսմ աւուը ամենազօր
հրամանաւ քով հաներ 'ի ջուրց
զեռունս շնչոց կենդանեաց , և ըզ-
կէտս մեծամեծս , և զթուչունս
թեւաւորս . և աստուածային օրհ-
նութեամբ քով օրհնեցեր զնոսա-
աձիւ և բազմանալ 'ի վերայ երկրի :

Երդ աղացեմ զանիովոխելլ
տէրութիւն բարերարութեան քո :
օրհնեա՛ և զիս զստեղծուածս ամե-
նակալ Ճեռին քո ծննդաբեր լինել
գործոց առաքինութեան : Եւ ըզ-
սերմն հոգեւոր կենաց՝ զոր անդըս-
տին բնաւորեալ ես 'ի խորս մտաց
իմոց՝ զօրացո՛ զիս աճեցուցանել

կենսաբեր խորհրդով ՚ի ձեռն ըստ
նորհաց և ողորմութեան քո , զոր
տաս ամենայնի և ոչ նախատես .
զի գու նոյն ես , և ամք քո ոչ պա-
կասին . ըանաս զձեռն քո , և լցու-
ցանես զպէտս և զկարիս ամենեցուն
յանսպառ գանձուց քոց : Մի՛ թու-
ղուր զիս տէ՛ր իմ՝ ամուլ և անբեր
գործոց ըարութեան . մի՛ անտես
առներ զտառապեալս ՚ի քոց խնա-
մոց վասն ըազմութեան յանցանաց
իմոց : Խոնարհեցի զունկն քո և ըւր
ինձ , զի աղքատացայ ՚ի ըարեաց .
ստունգանեցի կենարար պատուիրա-
նաց քոց , և յօժարեցայ հաճել
զկամն անձին իմոյ :

Յարդարեցեր զիս տաճար կեն-
դանի արարքութեան քում , և ես
զանձն իմ պատրաստեցի ընակարան
ատելեաց քոց դիւաց , Պատմուճան

լուսազգեստ զգեցուցերը ինձ 'ի հոգեւոր ծննդեան, և ես արկի զանձամբ հանդերձ խաւարի մեղաց և մահու, Աստուր ինձ սիրտ մարմնեղէն խոկալ յօրէնս քո յամ ժամ, և ես աման խորհրդոց անօրէնութեյ յօրինեցի, Կարգեցեր յիս լսելիս 'ի լուր պատուիրանաց քոց, և ես բացի առ հրապոյրս բանսարկուին, Կազմեցեր յիս լեզու գործի օրհնութե, և ես չարաշար վարեալ՝ արարի զէն անիրաւութեան, Աւրմանեցեր 'ի միտս իմ սերմն բարի առ տքինութեան, և ես փուշս դժնդակ մոլութեան բուսուցի ընդ այն, Օ բարիսն զոր պարգեւեցեր ինձ շահիլ նոքօք զկեանս, անմտութբիմով վատնեալ 'ի սնոտիս՝ ստացայ ինձ մահ և կորուստ, Տիրական իշխանութբ և փառօք պատուեցեր

լիս , և ես կամաւ մատնեցի զանձն
իմ 'ի ժառայութիւն մեղաց :

Եւ այժմ առ քեզ ապաւինեալ
սղացեմ բարեգութ՝ քաւեած զան
ցանս իմ , և նորոդեած զիս շնորհօք
լորմութեան քո : Ծարաւի եմ
առ քեզ աստուած իմ , արբո՞ ինձ
ջուրդ կենդանարար : Ճանդահար
եղէ ցանկութեամբ չարեաց , արե
զիս 'ի ըովս հալոցաց , և սրբեամ
հրուլ սիրոյ քոյ , Բաղձանք երկրա-
որացս տարագիր արար զիս առ 'ի
ուն , կարկառեած առիս զաջդ ա-
ւնազօր , և մատո՞ զիս առ քեզ:
Եռիսանսակ մշտնջենաւոր և անանց
առաց , զդիւրեղժական և զա-
տկանացուն սիրեցի , մի թողուը
իս 'ի կամս իմ :

Տեղացին 'ի վերայ իմ թունաւոր
ետք անելեւոյթ թշնամոյն լե-

ինձ վահան ամրութեան և տեղի
 ապաւինի ապրեցուցանել զիս
 Խորհուրդք չարեաց հարին գհոդիս
 'ի հարուածս անողջանալիս , մատիր
 առիս գթութեամբ , և բժշկեա
 ամենահնար : Ծանամիք զանձն իմ
 պաշարեցին և 'ի լարս խաբէութեան
 իւրեանց արգելին , զարթո՞ զզօրու-
 թիւն քո և եկ 'ի կեցուցանել զիս
 Աներկացուցին զիս անագորունք , և
 Վերս 'ի վերայ վիրաց յաւելին . զ
 ո՞չ զգեցայ զզրահն արդարութեան
 և ոչ եղի 'ի գլուխս իմ զսաղա-
 ւարտն յուսոյն փրկութե . ոչ առ
 զվահանն հաւատոյ , և ոչ զսու-
 բանին աստուծոյ . այլ դու հզօր
 և ամենակար՝ առ զէն և զասպար
 քո , և արի յօգնել ինձ . խորտա-
 կեա զզօրութիւն հպարտացեալ
 բունաւորին , և ասա՛ դու ցանձն

իմ թէ փրկութիւն քո ես եմ։
Տրտմեալ է անձն իմ մինչեւ 'ի մահ։
մխիթարեա զժառայս քո։ Ապե-
րախտ գտայ առ երախտաւորդ՝
և ըարկացուցի զանբարկանալի բը-
նութիւնդ։ այլ գու անյիշացար՝
մի հատուցաներ ինձ ըստ անօրէ-
նութեան իմում, այլ ողորմու-
թեամբ քո քաւեա զիս։

Առ քեզ աղաղակեմ 'ի խորոց
անդնդոց յոր ընկղմեալս եմ, որպէս
յովնան 'ի փորոյ կիտին։ Հան զիս
'ի վհէս խաւարի, վերաբերեալ 'ի
լոյս կենացդ յաւիտենից։ Խորա-
սուզեալ եմ յանդունդս մեղաց
կորստեան, մատոն զաջդ ամենազօր։
և փրկեա զիս։

Տանջիմ հանապազ 'ի խղչէ
մտայ՝ զի դառնացուցի զքաղցրա-
գութ տէրդ իմ։ և յոյզք վարա-

նական խորհրդոց աններելի տաճ
ջանաց՝ որ պատրաստեալ և միա
ինձ, իբրեւ լեռնացեալ ամեն
ալեօք հողմակոծեն զանձն իմ
ըարերար և անոխակալ՝ հզօր այցե
լու օգնեան ինձ, և հանդարտեցն
զմբըկեալ ալիս խռովութեան մը
տացս ցողով գթութեան քո,

Բազմութիւն անօրէնութե իմ՝
որովհեա հեղեղք պղասորեալք գար
նանազայր գետոց ողողեցին զմեղու
ցեալս . այլ դու մարդասէր՝ չնշեա
զհողմն քաղցրութե կամաց քոց, և
ցամաքեցն զհոսանս չարեաց իմոց . և
ողորմութե քով քաւեան զանօրէ
նութիս իմ, և թուակից արա սի
քելեաց անու անդ քում սիյ . զի ընդ
նոսին փառաւորեցից զանոխակալ
մարդասիրութի քո, ալժմ և միշտ և
յաւիտենէց յաւիտեանս . ամէն :

ՃԵՐԵԾԵՐԸ ՃԵՐԵԾԵՐԸ ՃԵՐԵԾԵՐԸ ՃԵՐԵԾԵՐԸ ՃԵՐԵԾԵՐԸ

ՈՒՐԱՅՑ ԱՆԹԻՄ

Սույն . Ի խորոց կարդացի առ
քեզ տէր՝ տէր՝ լուր : Գլ . Ճիթ :

Հայում : գկ . Քրիստոս աստ-
ուած աստուծոց ողորմեա՞ :

Անօրէնութեամբ ՚ի մեղս երկնեաց
զիս մայր իմ . աղաչեմ վրկիչ
ողորմեա՞ ,

Վիրաւորեալ մեղօք անկանիմ
առ քեզ վրկիչ . մի անտես առներ՝
ողորմեա՞ :

Ուժսաւորն հառաջանօք ՚ի
տաճարին էաւ ըզքաւութիւն . նո-
վին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա՞
ինչ աստուած :

Աւազակն աղաղակէր ՚ի խաչին

յիշեա զիս տէր . նովին ձայնիւն և
ես գոչեմ ողորմեա ինձ աստուած :
Անառակ որդին աղերսանօք աղա-
չէր ըզքեզ . հայր մեղայ յերկինս
և առաջի քո . նովին ձայնիւն և ես
գոչեմ ողորմեա ինձ աստուած :

Ըսորհեա մեղ տէր՝ ընդ աղ-
քատաց օքինակին ղազարու ժուժ-
կալութիւն , զի կամաւոր աղքա-
տութեամբ արքայութեանդ երկ-
նից՝ ընդ նըմին լիցուք արժանի .
Ըւը մեղ և ողորմեա քրիստոս
աստուած :

Որ փոխանակ հազին կարօտու թեան
զհացն անմահութեան նմա շնորհե-
ցեր . և ընդ մեծատանն անդթու-
թեան ՚ի կոգն աբրահամու զնա
ընկալար . լուը մեղ և ողորմեա
քրիստոս աստուած :

Լուսաւորեա զիցս սրտից ստանալ

մեզ ողբորմութեամբ ՚ի քէն տէր
զոռորմութիւն . զի մի ընդ մէծա-
տանն հայցեսցուք ՚ի բոց հնոցին՝
ծագիւ մատին ջուր ՚ի զովացումն .
լուր մեզ և ողբորմեած քրիստոս
աստուած :

Օ անսկիզբն աստուած զհայրն
ամենակալ . բարեբանեցէք ընդ զը-
ւարթունս երկնից :

Օ առ ՚ի հօրէ ծնեալ զորդին մի-
ածին . բարեբանեցէք հրեշտակային
ձայնիւ :

Եւ զնորոգող սուրբ զհօգին ձայ-
նիւ ցնծութեամբ . բարեբանեցէք
անլրուելի ձայնիւ :

Անսկիզբն աստուած և թա-
գաւոր երկնաւոր . բարեբանեալ
՚ի զօրաց տնմոհից երկնաւորաց .
լոգքեզ օրհնեմք հայր անսկիզբն .
խոնարհեցար ՚ի բարձանց վասն մե-

ըոյ վրկութեն . արձակիչ կապելոց
և բըժիշկ հոգւոց մերոց . ըզքեղ
գովեմք որդիդ միաժին :

Որ էակիցդ ես ընդ հօր և փառա-
կից միաժնիդ . բաշխող պարգևաց
և տուող ողորմութեան . ըզքեղ
բարեբանեմք սուրբ հոգիդ ճշ-
մաբիւտ :

Որ ըզլոյս աստուածային քո
բանի . ծագեցեր յաշխարհամած-
խաւարն անգիտութեն . լուսաւորեա
և զմեղ հօր իմաստութիւն :

Որ զհամօրէն դատաստանին օրինակ .
նշանակեցեր առ մեծատունըն և
դադարոս . ներհակաբար տալով
զոր աստ ընկալան :

Վասն որոյ աղաջեսցուք զքեղ տր .
վրկել զմեղ 'ի հրոյ մեղաց և տան-
ջանաց . հանդչել 'ի գոդ նահա-
պետին արդարոյ :

Արով և մեք ընդ հրեշտակացըն
դասուց . անբաժանելի սուրբ եք-
ըորդութեանն . համաձայնեալ եք-
դեմք զփառս 'ի բարձունս :



Թագաւորք աղաջարութեան :

Ի տաճարի սրբութեան քում
լուր տէր ձայնի իմում . և աղա-
ջանք իմ ժամանեսցեն 'ի յականջս
քո տէր :

Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ
ձայնի աղօթից իմոց . և աղաղակ իմ
տռաջի նորա մտցէ յականջս նորա
և աղաջանք իմ ժամանեսցեն 'ի
յականջս քո տէր :

Որ լուսատու ես տիեզերաց քրիս-
տոս աստուած . լուսաւորեա զիմ
զխաւարային խորհուրդս և կեցն :

Օթհնեալ ես տէր և փառաւորեալ
 է քո անըաւ մարդասիրութիւնդ .
 զաղացանս մեր քեզ մատուցանեմք
 որ թագաւորդ ես յաւիտենից . ըզ-
 նընչեցեալսն մեր արժանի արա տէր .
 ընդունիլ 'ի կեանսդ յաւիտենից :
 Արտասուս ինձ շնորհեա 'ի յա-
 պաշխարութիւն տէր . զի ըռացից
 զմեղս անծին իմոյ որպէս պոռնիկն
 աղացեմ և կեցն :

Վաստակեցայ ես 'ի հեծութեան ի-
 մում ըռացի զամենայն գիշեր ըզ-
 մահիշա իմ . և արտասուօք իմովք
 զանկողինս իմ թացի . զի ըռացից
 զմեղս անծին իմոյ որպէս պոռնիկն
 աղացեմ և կեցն :

Որ աղբիւրդ ես անապական քրիս-
 տոս աստուած . զմիրաւորեալ անձն
 իմ 'ի մեղաց . բժշկեա 'տէր ըլղև-
 մամբ արտասուաց և կեցն :

Օ մոլորեալ ծառայս խնդրեաւ
 տէր . և մի դատապարտեր զիս . 'ի
 յաւու ըն այցելութե քո մարդասէր :
 Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքէզ .
 և իրաւունք քո օգնեսցեն ինձ :
 Մոլորեցայ ես , որպէս զուսար կու
 րուսեալ խնդրեաւ զծառայս քո , զի
 զպատռեիրանս քո ես ոչ մնուացայ .
 և մի դատապարտեր զիս . 'ի յա-
 ւուրն այցելութեան քո մարդասէր :
 Ար մոլորեցայ 'ի հօտէ քումմէ .
 հովիւ բարի . խնդրեաւ զիս զմոլո-
 րեալս . և արժանաւորեաւ խառնիլ
 'ի հօտ քո քըիստոս և կեցն :



Ի ԽՈՐԱՅ ՍՐՏԻՅ
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՎՏՈՒԾՈՅ
ԳԼՈՒԽ ՃԵ.

Եւ քանզի օր է օրհնաբանեալ
և լուսանորոգ՝ կշռութեան երկուց
ընտրութեանց արարածոցս սասա-
նութեանց՝ յեղանակելոյ յայլ իմա-
էութիւն երկնակենցաղ անփոխադ-
րելի , ամբարձելոցն խոնարհութե ,
և կործանելոցս վերբերութեան ,
սարսափելի ուրբաթու մեծի պա-
սեքիս , յորում եկն եհաս ժամ
բարեպատեհ գրել ինձ զայսնուագ-
ձայնի հեծութեան՝ զուարձախառն
երկիւղիւ , ահա ըղձալի համարիմ
ասել աստոնօր ՚ի քոյոց այտի՝ զոր
ընդ իմ կրեցեր՝ աստուած բոլորից՝
կացեր յատենի քում ստեղծ-
ուածոյն իմովս կերպիւ . ոչ խօսե-

ցար՝ տուիչդ բանի . ոչ բարբա-
 ռեցար՝ հաստիչդ լեզուի . ոչ ձայն
 արձակեցեր՝ սասանիչդ երկրի . ոչ
 մանչեցեր՝ ամենաղղեցիկ փողդ մ-
 ժութեան . ոչ երախտեօքն քո յան-
 դիմանեցեր , և ոչ կարեօք նոցին
 ըմբերանեցեր . ոչ մատնեցեր ամօ-
 թոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց
 մահու . ոչ 'ի կապելն զքեզ դի-
 մադարձեցեր , և ոչ յապտակելն
 գժուարեցար . ոչ 'ի թքնուն թըշ-
 նամանեցեր , և ոչ ընդ կուփելն եր-
 բէք խռովեցար . ոչ ընդ կատակելն
 սրտմըտեցար , և ոչ ընդ խաղ ար-
 կանելն երեսս փոխեցեր . || Երկա-
 ցուցին զզգեստ պատմու ձանին իբ-
 րեւ 'ի տկարէ , և գարձեալ ա-
 գուցին իբր անփրկանաւոր ըմբռնե-
 ցելոյ , Եթէ ոչ էր արբեալ կրկնակի
 քացախ զանգեալ ընդ լեռոյ , ու

էր հեղեալ մաղձն իմ մթերեալ
նախնի դառնութեան . Ճաշակեաց
վհատութեամբ , և արգել անդեն
տարակուսանօք . առին մոլեգնա-
բար , և դարձեալ մատուցին ան-
պատկառապէս : Գանիւ հարուա-
ծոց յետին անարգութեան 'ի մէջ
խառնիճաղանջն ամբոխի դատա-
պարտեցին . Ծունը կրկնեցին նախա-
տանաց , և պսակ եղին արհամար-
հութեան :


Ո՞չ ետուն հանգիստ կենդա-
նարարիդ , Եթէ ո՞չ զդործի մահուն
կրել քեզ պատրաստեցին . ընկա-
լար իւր երկայնամիտ . առեր իւրեւ
զհեղ . բարձեր որպէս համբերօղ ,
ըստանձնեալ իւր զպարտական՝ ըզ-
փայտն վշտաց . Որպէս զժաղիկ
շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ
զգէնն կենաց , զի յարհաւրաց գիւ-

չերայնոց՝ զիւըակերտս գահաւորակս
 մարմնեղէն գոյութեանս՝ պահպա-
 նեսցէ ՚ի գատապարտութեն վայրի՝
 իբր ՚ի խրախշան խնչոյից։ Հանին
 արտաքս իբր զողջակէզ. կախեցին
 իբր զիսոյն սարեկայ՝ ձգեալ զեղ-
 ջերացն։ տարածեցին ՚ի սեղան
 խաչին իբր զպատարագ. բևեռե-
 ցին որպէս չարագործ. այնդեցին
 իբր զապստամբ. զիսաղաղութիւնդ-
 երկնաւոր՝ իբր զաւազակ. զանկա-
 պուտ մեծութիւնդ՝ իբր զտառա-
 պեալ. զառ ՚ի քրովբէից պաշտե-
 ցեալդ՝ իբր զքամահեալ. զսահ-
 մանդ կենաց՝ իբր զարժանաւոր սա-
 տակման մահու. զաւետարանիս նը-
 կարիչ՝ իբր զհայհոյից օրինին. զտէր
 և զկատարումն մարգարէից՝ իբր
 զհամառօտիչ գրեցելոցն. զճառա-
 գայթդ փառաց՝ և զկնիք անքննին

խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծը-
նողիդ կամաց . զօրհնեալդ իսկա-
պէս իբր զտարագրեալ . զկապոյ
օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզով
գրեալ . զհուրդ ժախիչ՝ իբր զհեր-
քեալ իմն կալանաւոր , զահաւորդ
երկնի և երկրի՝ իբր զհաւաստի-
պատժաւոր . զ'ի լոյս անմատոյց
ժածկեալդ՝ իբր զհողածին լմ-
բընեալ :

Ո՛Վ քաղցրութիւնդ և երկայ-
նամիտ բարերարութիւնդ ողբրմա-
ժիդ գթութեան , որ վասն ապահո-
տաւոր և անօրինեալ ժառայիս :
տէրդ բոլորից՝ զայս ամենայն կա-
մաւորապէս և հաւանողական հա-
ճութեամբ տարեալ՝ մարմնոյդ մի-
ութեամբ . 'ի քեզ ընկալար . և մին-
չեւ 'ի քնարան շերմին տապանի
անպակաս . 'ի լրութենէ ամբողջ

նոյնութեան աստուած անքնին
զնոյն կրեալ նախատինս անձառ
համբերութեան , յարեար կենդանի
ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ
աննուազ մարմնով , և անթերի
աստուածութեամբ , (Օրհնեալ փառ
ոօք . գոլեալ գթութեամբ , բա-
ըերանեալ միշտ ողորմութեամբ ,
յաւիտեանս յաւիտենից , ամէն .



Աշօթք առ Հայրն երկնաւոր , Յովհան-
նու գառնեցւոյ աստցեալ :

| Հապէս բարի և ամենակարող
զօրութիւն աստուած յաւիտեանա-
կան , որ յայսմ աւուր հրամայեցեր
երկրի , և Եհան զանասունս և ըզ-
սողունս և զգազանս ըստ ազգի .
և չհանդուրժեալ ընութք բարիդ :

արարեր զմարդն 'ի հողոյ ՚ի պատկեր և 'ի նմանութիւն արարչապետիդ տիեզերաց , և կացուցեր տէր և իշխան 'ի վերայ ըոլորեցունց քո արարածոց . և զգուշացուցեր զնակալ 'ի պատուիրանի քում , և վայելել . զբարիսն զորս ետուր նմանը և առանց փոխարինի 'ի քումմէ առատութենէ :

Եւ արդ տէր իմ և աստուածիմ՝ որ զիս հողս անարդութեան այսպիսի անկշուելի ըարութեամբ բարգաւաճեցեր , ես ինքնին հրապուրանաց թշնամոյն կենաց անսացեալ՝ պատուիրանաց կենարարիդ հեստեցի , և օտարացոյ ՚ի նմանութենէ հաստողիդ իմոյ աստուծոյ : Եղծի զգեղեցկութիւն կերպարանաց հոգւոյս աղգի աղգի անօրէնութե , և ոչ զարհուրեցայ :

ՊԵՐՃԱԳՈՎԵցԵՐ զիս իմացական մըռ
 տօք խորշիլ 'ի չարէն և ընտրել
 զբարին . իսկ ես վարեալ անմտու-
 թեամբ . յօժարեցայ 'ի չարիս .
 Ամբ սրծեր զիս 'ի նմանութիւն
 աստուածութեանդ քո անձնիշխան
 կամօք . և ես ծառայ եղեալ կրից
 մարմնոյս՝ հաւասարեցայ անասնոց
 անքանից : Տժողի զլոյս հըամանաց
 քոց՝ զոր ետուր ինձ առաջնորդել
 նույաւ զգնացս ոտից իմոց 'ի Ճանա-
 պարհ ուղիղ երկնից օթեւանին .
 և ես ընդ խաւար գնացեալ անկայ
 'ի խորխորատ անելանելի կորըս-
 տեան վհի .

Ա. Ա. Դու մարդասէր և երկայ-
 նամիտ՝ մի իսպառ բարկանար ինձ ,
 և մի ոխս պահեր յաւիտեան . զի
 'ի քեզ անկայ ես յարգանդէ , և
 դու ես աստուած իմ և տէր .

Գթա յիս 'ի գործո ձեռաց քոց ,
և նորոգեամ զխանդարեալ մեղօք
պատկերս բարերարութեան քո 'ի
ձեռն աստուածեղէն շնորհաց քոց :

Լուսաւորեամ զայս մտաց իմոց ու զ-
ղեւ զշաւիղս իմ 'ի Ճանապարհս
օրինաց քոց : Սանձակոժեամ զերկ-
րաքարչ բաղձանս և զանբան կը-
րիցս բռնութիւն Երկիւ զիւդ քու/
սրբով , Վառեամ զհոգի իմ սիրով
աստուածութեդ քո՝ մատուցանել
պատարագ օրհնութեան ըստ հա-
ճոյից բարերարութեան քո : Այ-
թողուր զիս 'ի ձեռս թշնամւոյն
փրկութե իմոյ . որ հանդերձեալ է
արկանել զիս 'ի խաւարն արտաքին .
այլ լեր այցելու բարեգթութեամբ
քով , և փրկեամ զիս :

Անկաւ բեկաւ զօրութիւն իմ 'ի
մահաբեր հարուածոց հակառա-

կորդին, և մէջք իմ կցեցան ՚ի հող
 ՚ի ծանրութենէ բեռանցս մեղաց .
 այլ գու ոզորմաժ յարո զբազմա-
 մեղ անձն իմ, և զօրացո զիս թօ-
 թափել զշարիս, և խոկալ զհլա-
 մանս օրինաց քոց : Հարայ ՚ի թունոյ
 աներեւոյթ վիշապին, և մահ ան-
 մեռ կայ առաջի իմ յամ ժամ .
 զթա լիս օրհնեալ և ամենոզորմ ,
 և մատո ինձ զդեղթափ ապաքինիչ
 երկնաձիր շնորհաց քոց . զի կեցից և
 փառաւորեցից զանձառ մարդասի-
 րութիւն քո այժմ և յանվախճան
 յաւիտեանս, ամէն :



ՀԱՐԱՔ ԱՒԹԻՔ

Սույն։ Տէր՝ լուր աղօթից իմրց։
ունկնդիր խնդրուա, Գլ. Ճիւբ։

Հարաք։ Դժ. Կամբառնամ առ
քեզ տէր զացս իմ նայեա յիս
գթութեամբդ քո՛ և ողորմեա։
Դու ես յոյս և ապաւէն իմ, զերծն
զիս յորոգայթէ մեղաց՝ և ողորմեա։
Ապրեցուցիչ իմ և փրկիչ իմ
ապրեցն զիս յորոգայթէ մեղաց՝
և ողորմեա։

Բազմութեամբ յանցանօք ծան-
ըաբեռնեալ է անձն իմ։ Միայնոյ
քեզ մարդասիրի աղացեմ ողորմեա
ինձ աստուած։

Բըղկամամբ արտասուաց և հաւա-

շանօք սրտի իմոյ . անդառար հայ-
ցեմ քազմամեղութեամբ . քաւեա
զիս աստուած :

Ի ազմագութ մարդասէր՝ շնորհեա
զթողութիւն իմոյ յանցանաց . զի
առքեզ միայն պաղատիմ . քաւեա
զիս աստուած :

Որ զաղաղակ կնոջն այլազգւոյ .
տու ընկալար փրկիչ մարդասիրապէս
և զիմս ապաշխարութեան արա ար-
ժանի զձայն մեղուցելոյս ընդունող :
Որ հառաջմամբ ձայնի աղախնոյն .
ոչ լուեցեր փրկիչ՝ ընդունակ մե-
ղաւորաց՝ և զիմս ապաշխարութեան
արա արժանի զձայն մեղուցելոյս
ընդունող :

Որ զառաջնապարգեւի քո նշխար
ոչ խնայոցեր ընձեռել շանն հու-
ուասիրի . և զիմս ապաշխարութեարմ
արժանի զձայն մեղուցելոյս ընդու-

Անկանիմ առաջի քո և Խընդ-
րեմ զլթողութի յանցանաց իմոց . մի
անտես առներ հայր զաղացանս իմ :
Աղաղակեմ որպէս մաքսաւորն , և
հեղում զարտասուս իմ առաջի քո
որպէս պոռնիկն . մի անտես առներ
հայր զաղացանս իմ :

Յաներեւոյթ թշնամւոյն պարտեցայ
և 'ի գաղտնի նետից բանսարկուին
վերաւորեցայ . մի անտես առներ
հայր զաղացանս իմ :

Անկանիմ առաջի քո տէր .
բաղմամեղիս ողորմեա .
Աղաղակեմ առ քեզ փրկիչ . քա-
նանացոյն զձայն . բաղմամեղիս ողոր :
Մաքսաւորին հառաջմամբ կարդամ
առ քեզ՝ փրկիչ և բարերար . բազ-
մամեղիս ողորմեա :

Ողորմեա ինձ քրիստոս . ողոր-
մութեամբ քո մեծաւ . զի կարօտ

Եմ ես շնորհի քո և ողորմութեան .
ողորմեա և լուր ինձ բազմամեղիս :
Լուր տէր ձայնի ողբալոյս . և ցաւ
ւագին պաղատանացա . որ ամօթով
կամ առաջի քո իմ չարաչար վա-
րուքս . ողորմեա և լուր ինձ բազ :
Ծնկալ տէր զաղաչանս իմ , և ըզ-
հառաչանս սրտի իմոյ . որ աղաղա-
կեմ որպէս կինն քանանացի . ո-
ղորմեա և լուր ինձ բազմամեղիս :

~~~~~

Դկ . Կը իստոս աստուած յրյա  
ապաշխարողաց . շնորհեա զթողու-  
թիւն բազում յանցանաց իմոց .  
Առ քեզ բազմագութ ապաւի-  
նեալ կարդամք մի մերժեր զմեզ  
յողորմութենէ քումմէ .

Որպէս զաւաղակն աղաղակեմ առ  
քեզ . յիշեա և զիս տէր 'ի քում  
յարքայութեանդ .

Օ մեղս իմ խոսանովան լինիմ  
առ քեզ քրիստոս . որ միայնդ եւ  
բազմագութ թողութե ողորմեա  
ինձ . աստուած :

Դու տէր որ Տշմարտութեանց եւ  
սիրող . և քննես զծածուկս գաղտ-  
նեաց սըտի իմոյ . ողորմեա ինձ ած-  
հուր ինձ ցնծութիւն փրկութեան .  
և հոգւով տէրութեանդ քո հաս-  
տատեա զիս . և ողորմեա ինձ ած-  
Ալիք յանցանաց զիս ալէկո-  
ցեն . և մեղք իմ բազում զիս  
յանդիմանեն :

Արդ զինչ արարից մեղուցեալ ան-  
ձամբ . որ չեմ ապօւլոց յահագին  
հրոյն :

Ո'եզայ քեզ քրիստոս որդի աս-  
տութոյ . չնորհեա զթողութիւն  
բազում յանցանաց իմոց .  
Տէր որ 'ի մէջ լերինն ապերա-

ցուցեր զջուրն 'ի վիմէն .  
Տէր 'ի սրտէ իմմէ հան ինձ սրտու-  
սուս ապաշխարութեան .  
. Օ ի կեցից և ապախտութեամբ  
ապրեցայց 'ի հանդերձեալ քոց  
դատաստանաց :

Մեղուցեալ անձամբ կարդամ  
առ քեզ հայր Երկնաւոր . օգնեա  
ինձ 'ի նեղութեանս որ մեղօքս եմ  
մեռեալ օգնեան ինձ :

Վ իրաւորեցայ ես յանորեւոյթ  
թշնամւոյն . բժիշկ Հիւանդաց՝ բը-  
ժըշկեան պիմ զհիւանդութիւնս .  
որ մեղօքս եմ մեռեալ օդնեան ինձ .  
Մոլորեցայ ես որպէս զոքիւար կո-  
րուսեալ . խնդրող գերելոց խնդրեան  
զիս զմոլորեալս . որ մեղօքս եմ մե-  
ռեալ օդնեան ինձ :

Մեղայ քեզ տէր՝ քաւեան զիս  
և ողորմեան ինձ աստուած :

Ոչխար եմ քանաւոր հօտի քո և  
առ քեզ ապաւինիմ հովիւ բարի՝  
խնդրեած զիս զմոլորեալս և ողորմեած  
ինձ աստուած :

Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ և  
առ քեզ աղաղակեմ . նաւապետ  
բարի՝ վրկեած զիս 'ի վտանգէս և  
ողորմեած ինձ աստուած :



Ի ԽՈԲՈՅ ՍՐՏԻՅ  
ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒՇՈՅ  
ԳԼՈՒԽ ԽԵ .

Եշ արդ՝ զի՞նչ գոյ ասել ա-  
մացեցելոյս յերեսաց մեծիդ ահա-  
ւորութենէ , բայց եթէ համրա-  
նալ . և հող 'ի բերան եղեալ ըւել  
'ի սրտի , ըստ մարգարէտեանն

խրատու . ահա 'ի բարւոյն կարկա՞  
ռեալ 'ի յոյս . իսկ եթէ զփականա  
շարժուլութեան շրթանցս բացից  
բռնադատեցից՝ խօսել կամեցեալ ,  
դարձեալ զնոյն ձայն կրկնակական  
եղերերգութեան լալեաց բազմու  
թեան՝ խեթ մտացս յառաջադրէ :

Եւ արդ՝ ողբակից մեծ մեղա՞  
ւորին անօրինելոյ կամաւ տռ 'ի մա՞՞  
զնորին գոչումն երկրորդեցից և ես  
ընդ նմին . մեղայ տէ՛ր՝ մեղայ , և  
անօրէնութեց իմոց ինձէն վկայեմ :  
Հիւսեալ ընդ նմին զբանս յիսնե՞  
րորդի սաղմոսին , անթիւս գրեմ  
զպարտուցս սակ՝ անձինս մեղանաց՝  
քան զհիւղ երկրի հողմահոս փոշ  
ւոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ :

Ո՞եղայ յերկինս և առաջի քոյ ,  
ընդ անառակ՝ որդւոյն պատկառե՞  
ցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին

դարձեալ թախսանձ արկանեմ. զու  
 ղորմելին ձայն աղերսանաց՝ արտօս-  
 րածին ողբովք գոշման՝ 'ի տըխուք  
 դէմս մատուցեալ առաջի քոյ տա-  
 րածանեմ. հայր գթութեանց աճ-  
 բոլորից, չեմ արժանի կոչել. և ոչ  
 բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն  
 որդի, այլ և անպիտան ապաբան  
 վարձկան. Ընկա՛լ զսովեալս տա-  
 րագրտկան, պարտական վիասուց.  
 և զցաւ քաղցոյս՝ լլկանաց նեղոյս  
 նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ-  
 բժշկեսցես: Լեր ընդ առաջ քո  
 ողորմութեամբ. 'ի սկզբնաւորս ա-  
 պաւինութեան. զգեցն գըթած և  
 անոխակալ անօրինեալս մեղապարտի՝  
 զնախակապուտ հանդերձին ծած-  
 կոյթ. առ անդակորոյս ձեռացս աղ-  
 տեղեալ մեղօք՝ զկնիք մատանոյն  
 համարձակութեան՝ ամենառատ

կամօք մատուսցես . զդարշապարացա  
 թշուառութի մերկութեան ոտիցս՝  
 պատսպարութք ու ետարանական  
 ամրավերարկու օդիցս կօշկաց՝ 'ի  
 յօձին թիւնից միշտ ամրացուսցես .  
 • Օ զուարակդ պարարակի եղինդ  
 երկնայնոյ , որ է միածին որդիդ քո  
 օրհնեալ , իսկապէս մարդասիրութք  
 կարօտելոյս բարեաց՝ նուիրեա . որ  
 մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ  
 'ի լրուե , յարակայ զենել 'ի սպանդա  
 բանի անթիւ սեղանոց անսպառուք .  
 բոլոր յամենեսին՝ և ընաւ յնմում ,  
 էուք յերկինս՝ և իսկուք 'ի ստորինս ,  
 աննուազ մարդկութք՝ և անթերի  
 ածուք , փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս  
 անհատս , զի զհամայնն հաւաքեսցէ  
 առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ .  
 քեզ փառք ընդ նմին՝ հայր ողոր  
 մութեան յաւիտեանս , ամէն :

Աղօթք առ Հայրի Երկնաւոր . Յովհան  
նու գաւնեցւոյ ասացեալ .

Աստուած ամենակալ՝ անբա-  
ւելի և անճառ ելի , անաշխատ բը-  
նութիւն և անտկարանալի դօրութի ,  
որ յայսմ աւուր հանգեար յամ  
գործոց քոց զոր արարեր . և սրհնեցեր  
զնա և սրբեցեր ամենիմաստ խոր-  
հրդով և կանխադիտութե քով .

Արդ ես ծնունդս մեղաց՝ անկետլ  
կամ յախտ դառնագին ցաւոց հո-  
գեկան վեասուց , զոր շնչեաց յիս  
հողմն մահածին իշխանին խու արի .  
և ոչ դոյ ինձ հանգիստ 'ի դժնուակ  
տանջանացս : Այլ դու ամենազօր՝  
ապաքինեան զանբժշկելի հիւանդու-  
թիւն հոգւոյս անսահանջելի հրա-  
մանաւ քով , և հանգո՞ զիս յան-  
հնարին տանջանացս՝ որով հասեալ  
կամ 'ի դրունս մահու . զիս ամենայնի

կարօղ ես և հզօր , և չեք քեզ իր  
անհնարաւոր :

Աէր երկրաւորացս և բաղձանք  
հեշտալեաց գերեալ գերբեալ ըզ-  
միտս իմ՝ չարաչար վշտօք ժառայե-  
ցուցանեն զիս հանապազօր 'ի զգա-  
լիս և 'ի սնուտիս , և ոչ երբէք տան  
դուլ և դադար ոդի առնուլ , և խո-  
կալ խորհիլ զելս ազատութեան  
յանտանելի կրիցս կարեաց և դառն  
աշխատութեանցս : Եւ ահա աղա-  
ջեմ զքեզ բարերար՝ որ փրկութիգ-  
ես ամենայնի և դիւրից վշտաց նե-  
զելոց , տուր ինձ գտանել ելս 'ի  
տուռապանաց աստի յազատութիւն  
մշտնջենաւոր կենաց և անանց հան-  
դըստեան , յորմէ մերժեալ են ցաւք  
և հեծութիւնք :

Աւեք յանցանաց յուզեալք 'ի  
հողմոյ հրապուրանաց բանսարկուին

բաղմեն զնաւակ մարմնոյս շինուածոյ , և սպառնան խորասոյլ առնել յանդունդս խաւարի անզերծտանջանաց : Իսկ դու բարեգութ փրկեամ զիս 'ի վշտացս ամենազօր աջովգ շնորհի , և հասն 'ի նաւահանգիստն անքոյթ խաղաղութեան երկնային յարկի , ուր ամբարեալ պահին ամենայն գանձք բարեաց և անզբաղ բերկըութիւնք :

Ս' թողութ զիս տէր աստուածիմ 'ի կամս անձին իմոյ , զի մի ըստ յօժարութեան ապականեալ բնութեանս ստորաքարշ եղեց յանցաւորս և 'ի սնուտիս . և մի 'ի բացեայ առնիր յինէն նահանջելով զնպաստ շնորհաց և ողորմութեան քո վասն անօրէնութե իմոյ . այլ ըստ սովորակամարդասիրութե քում խնայեամ յիշ 'ի ստեղծուածս քո՝ որ առքեղ աղաւ

Ղակեմ կողկողագին հետութեամբ։  
 Լուր ինձ անոխակալ, գթա մարդասէր, ներեա անցիշացար, և ողորմեա բաղմամեղ անձին իմոյ։  
 ըստ մեծի ողորմութեան քում. արա առիս նշան ըարի 'ի փառս անուանդ քում սըբոյ, և քաւեա ըզմեղս իմ 'ի ձեռն ամենաբաւական շնորհաց քոց։ զի քաղցը ես դուտէր, և գթութիւն քո անչափ։

Աղաջեմ զքեզ մարդասէր՝ մի մատներ զիս 'ի ձեռս դժոխովայն գազանաց, որ բացեալ զկոկորդս իւրեանց՝ խնդրեն կեղեքել զհոգեի իմ ամենաժախ ժանեօք։ Հար ըզնոսա զօրութեամբ բազկի քո 'ի հարուածս անողթանալիս, և զերծն զիս զժառայս քո 'ի մահաբեր վըտանդէս։ զի դու ես փրկութիւն իմ և կեանք, և առ 'ի քէն է օդ-

նութիւն իմ յամենայն ժամ:

Տարակուսեալ վարանիմ վասն  
բազմութեան մեղաց իմոց, յորժամ  
նկարեմ առաջի աչաց տեսութեան  
մտացս զդատաստանն անաչառ,  
զմերկապարանոց յանդիմանութիւնն  
ամենայն գրբոց, զսատիմն սոս  
կալի մեղաւորաց և անդարձից. ըզ-  
հուրն անշէջ, զորդնն անմահ, և  
զդատապարտութիւն յաւիտենական:

Եւ քանզի ոչ կարեմ իմովս զօ-  
րութեամբ թօթափել յանձնէ  
զբեռինս մեղաց, և աղատիլ յար-  
ժանահաս պատժոցս. վասն որոյ  
անձամբ բեկելով գուշեմ առ քեզ  
մարդասեր, գործակից լեր ինձ 'ի  
դառնալ յետս յանօրէնուե գնացից  
իմոց՝ և դիմել առ քեզ յամ զօ-  
րութենէ և 'ի մտաց, և սրտառուչ  
զդմամբ գտանել զթողութիւն և

զշնորհս , և ողորմութե՛ք քով արժաւ  
 նաւորիլ ընդ սբ-ս քո մշտնջենաւոր  
 հանգստեան յարքայութեան քում  
 յերկինս , և ընդ նոսին փառաւորել  
 անլուելի գոհաբանութե՛ք զամենազօր  
 տէրութի քո յամենայն յաւիտեանս  
 ամեն :



Մաղթանք առ սուրբ աստուածածին՝  
և առ ամենայն սուրբսն աստուծոյ .  
յետ էկեսցէին ասա :

**¶** ստուածածին ամէնօրհնեալ ,  
զպաղատանս մեր ըն կալ .  
՚ի հանգստեան ժամուս հա սեալ .  
առքեղդոչեմք անձամբ թախծեալ :  
Բանին կենաց բարձօղ ե զեր ,  
զաստուած մարմնով պարագրեցեր .  
առ բանն աստուած բարեխօս լեր ,  
՚ի փորձանաց ըզմեզ փըր կել :  
Գուլեալ ես դու փայտ փրկութեան ,  
ամէնօրհնեալ յաղթօղ նը շան .  
՚ի գիշերիս ըստուերա կան ,  
ժագեան մեզ զլոյսդ արփիա կան :  
Դողան ՚ի քէն գունդք խաւա ըին ,  
անենահրաշ զէն արար շին .  
ըզմեզ պահեան շնորհիւ քոյ ին :  
՚ի գիշերիս աղջամըլ ջին :

Երկոտասան սուրբ առա քեալք,  
 Եօթանասուն աշակեր տեալք.  
 յանձառ լուսոյն լոյս անուանեալք,  
 որթոյն կենաց պըտղաբե բեալք:  
 .Օ ձեզ աղաչեմք արտասուա դին,  
 և պաղատիմք կողկողա դին.  
 վանիչ լերուք դիւաց դըն դին,  
 ոչ մերձենալ առ մեզ չտ ըին:  
 Եին ընտրեալք բանին կե նաց,  
 գումարք դասուց տեսանո դաց.  
 որք զապագայն ժամանա կաց,  
 գուշակեցիք հոգւով շնոր հաց:  
 Ընդ մեզ լերուք աղօթա կից,  
 որք աստուծոյ էք խօսա կից.  
 փըրկել ըզ մեզ 'ի վտան դից,  
 'ի յարթնութեան և յերա զից:  
 Ժադաւորին երկնաւո ըի,  
 Երկըրպագով 'ի յարդան դի.  
 մեծ կարապետ սուրբ ամըր դի,  
 միջնորդ կենաց և օրի նի:

Ճամանեա՛ մեզ 'ի յօդնու թիւն ,  
 զի մի մտցուք 'ի փորձու թիւն .  
 մաքուը մարմնով լինիլ 'ի քուն ,  
 արդար հոգւով մնալ ար թուն :  
 Իքէն հայցեմք արտասուա գին ,  
 նախալկայ տեառն արար չին .  
 սուրբ ստեփաննոս բացօղ զեր կին ,  
 տեսօղ զվիսուս յաջմէ ծնո զին :  
 Լեր բարեխօս արեամք քոյ ին ,  
 տալ մեզ հանդիստ 'ի յանկո զին .  
 արթուն լինիլ յառաւօ տին ,  
 բարեբանել զլոյսն անքըն նին :  
 Խնդրեմք 'ի քէն հայր պատուական ,  
 լուսաւորիչ ազգի մարդ կան .  
 տէր սը գրիգոր պետ պարթևեան ,  
 լեր մեզ պարիստ և պահա պան :  
 'Օընողաբար 'ի մեզ գը թա ,  
 զցրուեալ որդիքս քո ժողո վեան .  
 յուրախութիւն ըզ մեզ կո չեա ,  
 և 'ի բարին առաջնոր դեա :

Կենդանաբար թագաւոր ըին .  
 Դուք ճշմարիտ զինուորք նը մին .  
 Առւրք մարտիրոսք վըկայք փըրկչին .  
 Ռք յաղթեցիք զթըշնա մին .  
 Հօրին լուսոյ միշտ մաղթե ցէք .  
 Ղորդին ընդ հօր աղաչե ցէք .  
 Հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէք .  
 և 'ի բանսարկուէն զմեզ թափեցէք .  
 Չիւնափայլեալ երամք ընտ ըեալ ,  
 Ճագնաւորաց դասք երա նեալ .  
 Թուշոց երկնից էք նմա նեալ ,  
 յայրս և 'ի ծերպը բընա կեալ :  
 Դորեալ հոգւոց մեր 'ի մար մին ,  
 լերուք պարիսպք ընդդհմ չա ըին .  
 զի յաղթեսցուք հակառա կին ,  
 խորտակելով ըզզէնս նո ըին :  
 Ճրագունք վառեալ լուսով 'ի լի ,  
 սուրք կուսանաց դասք երա մի .  
 արժան եղեալք առագաս տին ,  
 և անթառամ սուրք պըսա կին :

Ήπειρος αρτεμόνιον πέρασθε τον πόλιν,  
 από την πόλιν την αρτεμόνιαν πέρασθε τον πόλιν.  
 Ἡ φίορδαναναց զմեղ փոքրկէն լով,  
 յանշէջ հրոյն ազատէն լով:  
 Յանեղ լուսոյ աստուածայ ին,  
 լուսոյ ստեղծեալք բանիւնո ըին.  
 զարդարեցայք հոգւով շնոր հին,  
 դասք իննեկի զօրք երկնայ ին:  
 Կամախնամել զմեղ փութաս ջիք,  
 և յօդնութիւն առ մեղ հաս ջիք.  
 որ յաստուծոյ հրաման առ ոիք,  
 ով ճշմարիտ մեր սիրե լիք:  
 Ընորհատու ազգի մարդ կան,  
 τէր մեր յիսուս անբըննա կան.  
 ըզ մեղ պահեա միշտ անսա սան,  
 աստի մինչ յօր քո դալըս տեան:  
 Ողորմութիւն մեղ պարգեւ եա,  
 զհիւանդ հոգիս մեր բըժըշ կեա.  
 ᾧ բանսարկուէն ըզ մեղ փոքր կեա,  
 և ᾧ չարեաց անփոք պա հեա:

Զար իշխանքըն խաւա ըին,  
 որք ընդ ծառայս քո մարտըն չին.  
 Քո նըշանաւ սորբոյ խա չին,  
 աներեւոյթ կործանես ցին:  
 Պարզեւիչ բարեաց մարդ կան,  
 յամէնառատ յամենե սեան,  
 պատրաստեցն մեղ անխա փան,  
 զպէտս հոգւոյ և մարմնա կան:  
 Դուր շընորհեա ինձ արտաս ուաց,  
 զի լուացից զգործըս չա ըեաց,  
 արժան եղէց քոց հարսա նեաց,  
 ընդ իմաստուն սուրբ կուսա նաց:  
 Որահ բարի իմ տէր յի սուս,  
 և հաց կենաց սովիտալ հոգ ոյս.  
 առաջնորդեա մրլորե լոյս,  
 և կերակրեա զմիտս ընդ մարմնոյս:  
 Ալքեա զհոգիս յաղտոյ մե զաց,  
 ՚ի զանազան չար փորձա նաց.  
 տուր ինձ զնալ ըստ քո կա մաց,  
 զի արժանի եղէց փա ուաց:

Վիրաւորեաց զիս թշնա մին ,  
 այն որ չկամի զկեանս մարդկայ ին .  
 զիս ըըժըշկեա տէր երկնայ ին ,  
 լուսաւորեա լուսով քոյ ին :  
 Տրտմեալ հոգւոյս լեր ըսիո վիչ .  
 ցաւած մարմնոյս լեր դարմա նիչ .  
 մոլար մըտացըս լեր ուղ զիչ ,  
 ամենառատ բարեաց տը ւիչ :  
 Պամից սրբոց աղացա նաց ,  
 իննեակ դասուց հրեղէն զօ ըաց .  
 առաբելոց քոց սիրո զաց ,  
 մարդարէից տեսանո զաց ,  
 ջանկալի հայրապէ տաց ,  
 և երջանիկ վարդապէ տաց .  
 արխանաներկ մարտիրո սաց ,  
 և գերագոյն ճըդնաւո ըաց .  
 Խիւսապըսակ սուրբ կուսա նաց ,  
 որք փեսայիդ սպասեն փա ռաց .  
 և ամենայն մարտը ան ձանց ,  
 հետեւողաց քոյին կա մաց :

Փըրկեւմ զհոգիս ՚ի տանջա նաց ,  
 զազրատեսիլ յանքուն որ դանց .  
 Ըեւ տուր զծայն քո աւե տեաց ,  
 զոր խոստացար քոց սիրո զաց :  
 Ֆեղ հօրդ փառք միշտ առաքեմք ,  
 զորդիդ ընդ հօրըդ դաւա նեմք .  
 ըզ հոգիդ սուրբ բարեբա նեմք ,  
 Երրորդութեանդ երկըրպա զեմք .  
 ամեն :


Վերջ.

ՅԱ ՀԱՅԱ ՅԱ  
 ՅԱ ՅԱՅԱ ՅԱ  
 ՅԱ ՅԱՅԱ ՅԱ

1                                  X  
2                                  X  
3                                  X  
4                                  X  
5                                  X  
6                                  X  
7                                  X  
8                                  X  
9                                  X  
10                                X  
11                                X  
12                                X  
13                                X  
14                                X  
15                                X  
16                                X  
17                                X  
18                                X  
19                                X  
20                                X  
21                                X  
22                                X  
23                                X  
24                                X  
25                                X  
26                                X  
27                                X  
28                                X  
29                                X  
30                                X  
31                                X  
32                                X  
33                                X  
34                                X  
35                                X  
36                                X  
37                                X  
38                                X  
39                                X  
40                                X  
41                                X  
42                                X  
43                                X  
44                                X  
45                                X  
46                                X  
47                                X  
48                                X  
49                                X  
50                                X  
51                                X  
52                                X  
53                                X  
54                                X  
55                                X  
56                                X  
57                                X  
58                                X  
59                                X  
60                                X  
61                                X  
62                                X  
63                                X  
64                                X  
65                                X  
66                                X  
67                                X  
68                                X  
69                                X  
70                                X  
71                                X  
72                                X  
73                                X  
74                                X  
75                                X  
76                                X  
77                                X  
78                                X  
79                                X  
80                                X  
81                                X  
82                                X  
83                                X  
84                                X  
85                                X  
86                                X  
87                                X  
88                                X  
89                                X  
90                                X  
91                                X  
92                                X  
93                                X  
94                                X  
95                                X  
96                                X  
97                                X  
98                                X  
99                                X  
100                              X

945.1

935.101-0001





218

